ծէն, որ գժուարին է զանազաննել Այս գործարանաց ձեն
ու դիքն կը տարբերի զանազան բուսոց մէջ, ինչպէս նաև
անոնցմէ պատրաստած նիւթոց բնութիւնն ալ, երբեմն ցըն-
դական իւղ ըլլալըէ, երբեմն տարբեր բնութեամբ նիւթ մը:
Եթէ Կեռասիկամ Տղկաղատի ճիւղ մը գիտելու ըլլանք՝ դիւ-
րաւ կը տեսնենք ըստածնիս:


Տարորշիչ խորչերն երբեմն գուրս կը ցցուին աղորամազքի
նման ծայրը գեղձով մը, ինչպէս Ախեռախն վրայ, և կամ խա-
րիսխը, ինչպէս Եղիձին վրայ, յորում կղկղմնաց խողովակի
պաշտօն կը կատարէ: Այս աղորամազքը կ'ըստին Գեղձարեր՝
զանազաննելու համար վերոյիշեալ աղորամազքէն, որոնք ա-
մենեն հիւթ մը չեն պարունակեր: Բուն ասոյգ գեղձարեր
աղորամազք անոնք են՝ որ կը տեսնաին հասարակ Եղիձին
վրայ, և այն կովիծն և առջրումն զոր մարդուս կտիին վրայ
կ'ազդէն, իրենց հիւթէն է, զոր կը թափեն վերատրելին
վերջը:

Ե. Պտկունիք:

41. Պտկունիք. — Կան բայսեր, որոց աճումն կը կայանաց
իրենց սաղմին մէջ եղած զիխաւոր գործարանաց շարաւնակ
ընդլայնման վրայ. բայց բուսոց մեծագոյն մասին ցոլունի
կամ ճիւղոց կէտերէն կը բուսնին ձուածե կամ կանածե այ-
տուցք, որոնք կ'ըստին Պտկունիք, և կը բովանդակեն նոր բու-
սոյ մը նախնական տարերքն, որոնք աճելով, իրենք ալ նորա-
նոր պտկունք կը բուսցըննեն, և այսպէս հետզհետէ. (Ձև 74):

Այս այտուցքս կղմնատրաշար թեփով մը ծածկուած կը
տեսնուին, արտապուստ մածուցիկ և խիժային ջնարակով օ-
ծուած, և 'ի ներքուստ բամբակային հիւսուածով պատճառ,

որով ներքին գործարանները կը պաշտպանուին միջնորդուին խառնակութիւններէն: Բայց ամէն պտկանց կազմութիւնն այս պէս չէ. տաք կլիմացի բոյսերն չունին թեփ, որով կարենան պաշտպանուիլ, ուստի պտկունք կրնան բաժնուիլ ի թեփացորս և յԱնքեփս:




ԶԿ. 74.

Անթաւոր
պտկունք :

Պտկունքը կը սկսին բողոքիլ ամառը, և աշնան կը լրանան, տաք գաւառաց մէջ շուտով կը ձևանան ճիւղեր. իսկ այն գաւառաց մէջ յորում ձմեռուան պատճառաւ բուսաբերսթիւնն կը դադրի, պտկունքը մի և նոյն վիճակի մէջ կը մնան և գարնանացին օդոց կը սպասեն որ ծագկին:

Սերացոր, ծայրապորչի և եկամուռա պրտիւնքը, —



ԶԿ. 75.

Տերեաբեր, ծաղկաբեր և խառն պտկունք. — Գործարա-

նաց աձման համեմատ՝ պտկունքն կրնան ըլլալ տերևաբեր, որոնք տերև միայն կը բուցընեն. ծաղկաբեր՝ որոնք միայն ծաղիկ կու տան, և խառն՝ որոնք թէ տերեւ և թէ ծաղիկ կու տան. (ԶԿ. 75):

43. Պտկանց մասնաւոր տեսակներն են բնձիշտ, կռնչէց, արջտակ, կռնջարևակ և բարդակակ:

Բնձիշտը պտուկ մի է, որ երկարատև բուսոց մէջ որոց գետնէն դուրս աճող ցողունին մասն՝ առաջն տարին կը չոր-



ԶԿ. 76. Ծայրապորչ Մշամուրճի:

նայ, կ'աճի արմատին հետ մէկտեղ թաղուած մասին քով, և յաջորդ գարնան ճիւղ մը կ'ըլլաց փոխանակ շորցած ցօղունին. գոր օրինակ, Ծներեկն այս կերպով կ'աճի:

Կռնչէցն պտուկ մի է, որ ստորերկրեաց կարճ ցողունէ մը կը բաժնուի, և պատած է մսային և ճիւթային մասէ մը, ինչու Մկնսոփ և հասարակ Ասին:

Արջտակն ստորերկրեաց ճիւղ մի է, որ կը թանձրանայ

և կը հաստընայ՝ խորշացին հիւսուածին մէջ մնծ քսնակով օսլային փեկուղ ժողովուելով. վրան լեցուն են պտկունք, որոնք կրնան զանազան անհատներ ձևացընել, ինչպէս Գետնախնձոր. (Ձև 77):

Իռաղաբանոր ցօղուն մ'է, որ հորիզոնական դիրքով հողուն տակ կ'ասպիրի և վարէն արմատներ կ'արձակէ, իսկ վերէն




Ձև 77. Արջոտակ Գետնախնձորոյ:

ամէն տարի պտուկներէն նորանոր ճիւղեր կու տայ, ասդին անդին սպիրի նման նշաններով, որոնք անցեալ ամաց մէջ բռնած ճիւղերուն տեղերն են, ինչպէս Շուշան հովտաց, Նարդոս. (Ձև 78, 79):

Բարունակի ցօղուն մ'է՝ որ իր դիւրաբեկութեան պատճառաւ չի կրնար կանգուն կենալ, ուստի հողուն վրայ իր ճիւղերովն կը տարածուի, տեղ տեղ վերէն կարմրագոյն տերեւ-

77 Tubercles de la pomme de terre.

ներ արձակելով և վարէն արմատիկներ, ինչպէս Ելսկ, վարի Թրթնջուկ. (Ձև 80):



Ձև 78. Կոճղարմատ հովտաց Շուշանի:

44. Ստեղնաւորուրիւն. — Առանցից կամ գլխաւոր ցօղունին չորս կողմի ճիւղոց առած՝ դիրքը՝ կ'ըսուի ստեղնաշո-



Ձև 79. Կոճղարմատ հարդոսի:

րուրիւն, որ պտկանց անմանէն կախումն ունի: Եթէ ամէն պտկունքն անթաւոր ըլլացին ու ամէնքն ալ մի միայն ճիւղ

78. Rhizome du muguet. — 79 Rhizome de nard.

բուսցընէին, նաև ոստերն ալ տերեւոց դիրք կ'առնախին. բայց այս դիրքս բնութեան մէջ շատ կը փոխուի: Երկու գլխաւոր ստեղնաւորութիւն կայ, ծայրարձակ ու կողմնարձակ:

Ծայրարձակ կ'ըսուի երբ բոյսը ծայրապտուկ ըլլայ, որով չի կրնար կողմնակի ճիւղեր արձակել: Այս տեսակ ստեղնա-



Ձև 80. Բարունակ վայրի թրթրնչկ:

որութիւնն որ քիչ անդամ կը հանդիպի երկարլթակ բուսոց մէջ, շատ կը պատահի միարթակ և անրլթակ բուսոց մէջ, ինչպէս Արմաւենիք և ծաւացեալ Պտերք, որոնք պարզ առանցք մը և գագաթան վրայ տերեւոց փունջ մ'ունին:

Կողմնարձակ կ'ըսուի, եթէ ինչպէս որ սովորաբար կը հանդիպի երկարլթակ բուսոց մէջ, կողմնակի և ծայրարձակ պտկունք ունենան բայսերը, և այն ատեն ճիւղեր արձակերպ համեմատութիւն կը պահէն թէ կանոնաւոր և թէ եկամուռ պտկանց հետ:

Ճիւղոց համեմատական երկայնութիւնն, իրենց աճման չափն, ուղղութիւննին, պնդութիւննին, միու բանիւ՝ ստեղնաւորութեան զանազան կերպերը, բուսոց այլ և այլ կերպարանք և տեսք կու տան. օրինակի համար, եթէ ճիւղերը ցաղունին հետ, և ճիւղոց հետ շատ սուր անկիւն մը ձեւացնեն, կ'ունենանք ծառ մը նման Նոճւաց կամ Կաղամախի. եթէ ընդհակառակին բութ անկիւն մը ձեւացնեն՝ կ'ունենանք ծառ մը նման Կաղնւոյ կամ Լիրանանու մայրի. եթէ տկար ու երկայն ճիւղեր՝ ծանրութիւննին չկարենալով վերցնել գետին խոնարհին՝ կ'ունենանք Ուռենւոյ նման ծառեր. և եթէ տարրեր դիրք մ'առնուն ճիւղերը՝ տարրեր ծառեր կ'ունենանք:

Զ. Ծաղկումն:

45. Բուսոց ծնունդն, ինչպէս նաև կենդանեաց, գեռանիմանալի գաղտնիք մ'է: Հետագոտելով իրենց ծագումն, կը տեսնենք որ ամէն բոյս մի և նյոյն կազմութիւնն ունի նախնական սերմանն միհճակին մէջ, սակայն չի գիտացուիր թէ ինչպէս կը ձեւանաց այս սերմն. միայն ծանօթ է որ մասնաւոր գործարաններ կան զսերմն յառաջ եթերու, որ կ'ըսուին Պրոդարերի գործարանք. այսինքն Անրմնաբակը կամ Խոայք, Առելք կամ Որձայք, որոնք միանալով ուրիշ գործարանաց հետ՝ կը կազմեն զծաղիկն:

Ծաղկումն կ'ըսուի ծաղկանց կարգաւորութիւնն ցողոնի կամ ճիւղոց վրայ: Ծաղկաբեր պտկանց զրիցը նայելով գրւխաւոր երկու տեսակ ծաղկումն կրնայ ըլլալ, սահմանաւոր ծաղկումն, այսինքն երբ ծաղիկը սուանցից ծայրն կը ծաղկի, ինչպէս փարք Տերեփուկ, Կակդի, Օձագեղ (Ձև 81, 82), սեասանակ ծաղկումն, երբ ցողունն երկըննալով ծաղիկներն ճիւղոց երկու կողմն ալ կը ծաղկին, ինչպէս Վարդ, Տղրուկ խոտ. (Ձև 83):

Երկու տեսակաց մէջ ալ ծաղիկը կրնան ըլլալ ուղղակի սուանցից վրայ կամ կոթունի մը վրայ, որով ծաղիկը կ'ըսուին այն ատեն անկորուն և կորունաւոր:

46. Անասման ծաղկման զլխաւոր տեսակք են Ողկոյզ,
Քիստ և գիպտացրենոյ (Ձև 86), Կորեակ, Ողկոյզ բաղեղան,
Հասկ, Կոնկ, Մաշխապտեսն, Հովհանոցանե, և այլն. բացց



Ձև 81. Կոկոր: բար բացցած և Ձև 82. Օձադէլ:

այս ամէն տեսակք կրնան երեքի վերածուիլ, այսինքն են՝
Ողկոյզ, Հասկ և Հովհանոցանե։

Ողկոյզին զլխաւոր առանցքը անորոշակի կ'երկըննոյց ա-
ռանց ծաղկի, իսկ երկրորդական առանցքն ամէնքն ալ ծաղ-
կաբեր են, որով չեն կրնար ալ բաժնուիլ երրորդական ա-
ռանցք, և ամէնքն ալ մի և նոյն երկայնութիւնն ունին, ինչ-
պէս Որթ, Հաղարջենի, Ալաժահի. (Ձև 84):

81 Tilleul. — 82 Centiane.

Հասկը ողկոյզի տեսակ մ'է, յորում երկրորդական ա-
ռանցքն այնպէս կարձ են՝ որ ծաղիկք անկոթուն կ'երկին։



Ձև 83.
Տղուկ խոտ։

Ձև 84.
Ողկոյզ Ալաժահրւոյ։

Ձև 85.
Հասկ ձոնի։

Քանի մը ցեղից մէջ հասկերն տերևային տարածումն ունին,
որ կ'ըսուի փոքրի, ինչպէս Ցորեն, Գարի, Ճռե, և այլն. (Ձև 85):

83 Mouron. — 84 Grappe de gaudé, — 85 Épi d'épeautre.



Ձւ 86. Քիստ Եղիպտացորենոյ . — Épi de maïs.

Հասկը կ'ըսուի կոնեռն կամ կատուիկ, երբ միայն միասեռ ծաղիկ ունենայ, որ ընդհանրապէս արական սեռ. կ'ըլլայ, և ծաղկելուն պէս զինքը բռնող ճիւղը կը թողու, ինչպէս Ընկոյզ, Կաղամախ, Կաղնի. (Ձև 87): Մաշխապատճան կ'ըսուի հասկը երբ մեծ թիթեղատերեառվ մը փաթթուած է, որ կ'ըսուի Պատաստ, ասոր ծաղիկը մերկ են և այնպէս մօտէ մօտ, որ կարծես թէ առանցքը կերպով մը պատած է, և որովհետեւ շատ հաստ է և մսային, զիսրաւ կ'որոշուի բռն համիէն:



ԶԵ 87. Կատուիկ կաղնւոյ:

զԼ 88. Հովանոցաձեւ:

Հովանոցաձև. ծաղկման մէջ առաջին առանցքն երբեմն կարճ կը մնայ երկրորդականներէն, որոնք մէկ հէտէ բաժնուելով զրեթէ ամէնքն ալ մի և նոյն բարձրութեան կը հասնին, և որով տեսակ մը հովանոց կը ձևացընեն ծաղիկսերով, ինչպէս Սամիթ, Ստեղիլն . (ԶԼ 88):

47. Սահմանաւոր ծաղկման զիմանը տեսակները կը նաև մէկի վերածել, որ գագաթնաշխին կ'ըսուի:


Աղէկ հասկընալու համար թէ գագաթնային ըսելով ի՞նչ
կ'իմանան բռւսաբանք, ենթալրենք բոյս մը՝ որոյ գիշաւոր
առանցքն ծաղկով մը վերջանայ. այս ծաղկին կոթունէն եր-
կու տերեւ կը բռումին, որոց անթէն երկրորդական առանցք
կը սկսին բարձրանալ մէկ ասղին և մէկ անդին, և ասոնք ալ
ծաղկիներով կը վերջանան առաջնոյն պէս: Այսպիսի ստեղ-

87 Chaton d'axeline. — 88 Ombelle.

Նաւորութիւն կ'ըսուի երկատևալ՝ երբ տերեւք երկուք ըլլան, կ'ըսուի երտատևալ՝ երբ երեւք ըլլան տերեւները գագաթնային դիրքով շարուած։

Ե. Գործարանաց այլակերպորիշեն։

48. Գործարանաց այլակերպորիշեն։ — Վերոյիշեալ այլակերպութենէն աւելի այլակերպութիւններ կը տեսնուին բուսոց քանի մը գործարանաց վրայ, այնպէս որ բոլորովին տարբեր գործարաններ կ'ըլլան. բայց որովհետեւ դիրքերնին նոյն կը պահեն նկատմամբ բուսոց ուրիշ գործարանաց, անոր համար շուտով կ'իմացուին թէ ճիւղի մը կամ ծաղկաբեր




Զե 89. Ծորենի կամ կոծոխուր։ Զե 90. Թիթեղասերեք սիզային։

կոթունի մը և կամ տերեւոց ջղերու այլնիփոխութենէն յառաջ եկած են։ Այս այլակերպած գործարանաց կը վերաբերին մասնաւրապէս խաւարժիքին գործարիք։

49. Խաւարժիք կամ բուռագար են տեսակ մը պարզ կամ ճիւղերով խոտեղէն թելեր, որոնք կը պլուին մերձաւոր մարմնոց վրայ, զրոյալ կանգուն կեցընելու համար։ Ասոնք յա-

ռաջ կու գան երեմն ծաղկաբեր կոթուններու այլակերպութենէն, և երեմն տերեւի քանի մը մասանց փոփոխութիւններէն։ Առաջնորդ օրինակ է Որթի խաւարժիք, երկրորդին օրինակ է Ուեռան տերեւները, որոց խաւարժիքը յառաջ եկած են տերեւոց ջղերուն երկըննալին։

50. Փոչք նմանապէս երբեմն ճիւղի մը այլակերպութենէն, երբեմն ծաղկաբեր կոթունի մը և երբեմն տերեւոց ջղերուն կամ նեարդային խուրձերու այլակերպութենէն յառաջ կու գան։ Առաջն այլակերպութիւնը սովորական է, և երբ ամբողջական ըլլայ՝ այն ատեն ամէն ճիւղերը փշոտ կ'ըլլան, ինչպէս Մոշավլայրի, Ծոր (Ձե 89)։ Այս տեսակ փուչերը շատ անգամ ճիւղերու յատկութիւն կը պահեն, որով և տերեւոք կը ծածկուին, ինչպէս վայրի Սալոր։



Ծաղկաբեր կոթունի այլափոխութիւնն 'ի փուչս' շատ քիչ անգամ կը պատահի, ընդհակառակն տերեւոց այլափոխութիւնն 'ի փուչս' շատ կը հանդիպի, և երեւք կերպով կ'ըլլայ. այսինքն՝ տերեւին սպառուածին վրայի նեարդային խուրձերու այլափոխութիւնն, ինչպէս Աքող կամ Եկբան. ինչպաններու նեարդային խուրձերու այլափոխութիւնն, ինչպէս սուտ Ագասիա. և երրորդ՝ այն խուրձերու այլափոխութիւնն՝ որ կ'ըսուի բարձիկ, ինչպէս Հաղարջենի։ Եթէ ուշ գրուի սյազանազան տեսակ փշոց այլակերպութեանն, շուտով կ'իմացուին թէ ուսկից յառաջ եկած են։

51. Թիթեղատերեք. — Տերեւք կամաց ծաղկին մատենալով՝ անպիսի փոփոխութիւններ կը կրեն, որ գրեթէ տարբեր գործարանք կրնան ըստիկ. ուստի և բուսաբանք բուն տերեւէն որոշելու համար կուցցին զայն թիթեղատերեք։ Ասոնց ձեւը զանազան է բուսոց մէջ, իսկ առած դիրքերնին ցողունի և ճիւղոց վրայ՝ մի և նոյն. այսինքն կրնան ըլլալ հակադիր, փոփոխ, և այլն. մի և նոյն է կազմութիւննին և սերտութիւննին, այլ գունով երբեմն կը տարբերին և աւելի ծաղկի կը նմանին։ Այլափոխութիւննին յանկարծական չէ, այլ որչափ տերեւք առանցից վրայ կը բարձրանան՝ այնչափ ստորին տերեւք կը նեղնան, կոթուններն կը կարճնան և սպառուած թեփոտ կ'ըլլայ։ Երբ միջնահանգոյցք մստէ մօս են՝ կը մմտրով ծած կուսած տոսնիքի մը կերպարանք կ'առնուն ցո-

զունի վրայ, բայց այլ և այլ կերպով, և կ'ըսուի Փարոյր՝ երբոր ամբողջ թիթեղատերեկ շատ ծաղիկներ պարփակեն, ինչպէս կանգառին մէջ. և մասնաւորապէս երբ թիթեղատերեկ հետ բազմաթիւ կոթունաւոր ծաղիկք հովանոցաձև շարուած ըլլան, ինչպէս Ստեպղին։ Տաշտակ կ'ըսուի երբ ամ-



Ձև 91. Թիթեղատերեկ Անանասի

բողջ թիթեղատերեկ միանան փայտային կարծր մարմին մը կազմեն, ինչպէս կաղնւոյն մէջ։ Պատաստ կ'ըսուի երբ թիթեղատերեւ շատ մեծ է, և կը պատէ դեռ շրացուած ծաղիկ մը կամ քանի մը ծաղիկ մէկտեղ, զոր օրինակ Նարգիսին մէջ կը տեսնուի։ Վերջապէս կ'ըսուի Ծանձ երբոր ծաղկային փաթոյթը կը պատէ հասկին խարիսխուր, և կը բաղկանայ երկու անհաւասար թիթեղատերեւ, որոց մեծագոյնն աւելի վար կը գտնուի քան գիրքրագոյնն, ինչպէս կը տեսնուի Սիզատեսակ բուսաց մէջ։

91 Bractées d' ananas.

ԳԼՈՒԽ

ՊԱՇՏՈՆ ԲՈՒԽՈՑ

52. Այն գործարանքն՝ որոց կաղմութիւնը քիչ շատ տեսանք մինչև հիմայ, բուօսոց հութեան աճման և սերնդեան կարեոր պաշտօններ կը կատարեն, և կ'ըսուին բուսական կամ մննդեան պաշտօնամոնք, և են, ծծումն, շրջան, շնչառորիւն, արտանիշորիւն, տարրուղորնեն, կրկնուն և ևնանուրիւն։

53. Ծծումն. — Ծծումն կ'ըսուի այն գործողութիւնն՝ որով բոյս՝ իրենց արմատներով հողան մէջն կ'առնուն իրենց մննդեան յարմար պարզ կամ այլ և այլ նիւթերով խառն չուր։ Գլխաւորապէս կը ծծեն բնածխական թթուուտ, աւշակ զանազան բաղադրութեամբ, բորակական թթուուտ, ծծումք և հանքային աղեր։ Այս պաշտօնս կը կատարուի եւրնուսան զօրութեամբն, զոր ջիւթբոչ գտաւ և ապացըցուց շատ փորձերով՝ թէ արմատոց մազմզուկը են գլխաւոր ծծողք, իսկ տերեւ և նորաբոլբոջ կեղեք, ըստ Պաննէի, կրնան ծծել օդոյ մէջ եղած գոլորչիք և ուրիշ իրենց կարեոր եղած կաղեր։

54. Շքան. Ա:իշ. — Զուրը՝ վերյիշեալ նիւթերով խառն և լուծուած՝ հազիւ թէ բուռաց մը մէջ կը մտնէ, այլ և այլ բաղդրեալ զօրութիւններէ, այսինքն եւրնուսամբ, հերանեւթերեամբ, ծծմամբ, և այլն, կը սկսի շարժիւ և շրջան ընել։ Բուռաց մէջ մտած այս հեղուկն կ'ըսուի Ա:իշ, որ անգոյն հիւթ մ'է, մեծաւ մասամբ ջրով բաղադրեալ և մէջը հանքային նիւթեր լուծուած՝ զոր հողէն կ'առնու, և բուսոց հիւսուածներէն անցնելու ժամանսակն ալ գործարանաւոր նիւթեր կը ստանայ։

55. Ա:շին բրած ամսրան. — Եթէ բայս մը առողենք գունաւոր ջրով, և կամ եթէ գարնան որթի բարունակ մը գննենք մանր, կը տեմնենք որ աւելը կը սկսի վեր ելել, և այս կ'ըսուի վերամբարձ աւիշ։ կը թափանցէ բոլոր հիւսուածքը, կը մեցընէ զիսորեը, նեարգները, անօթները, անցքը, և զրեթէ ամբողջ փայտային մարմնոյ մէջ կը բարձրանայ՝ քանի որ մատղաւ և փափուկ է, նաև արտաքին մասանց մէջ ևս եթէ կա-

տարեալ փայտ դարձած չեն : Այս անցքին ժամանակը, նախընթաց տարւոյն բուսական քիչ շատ թանձր նիւթերը լուծուելով, բոլորովին կերպարանափոխ կ'ըլլայ աւիշը, որով և այնշափ աւելի սննդարար և աւելի լաւ բազաղրուած կ'ըլլայ՝ որչափ որ արմատներէն հեռու գտնուեի :

Վերամբարձ՝ աւիշը՝ որ 'ի սկզբան շատ երագ կը շարժի, կամաց կամոց կը սկսի գանդաղլի . վասն զի պակունք ծաղկելով, տերեներ բացուելով ու նոր ճիւղեր ձևանալով, ալ սնունդն առնելու կարօտութիւն չեն ունենար :

Ա; իշ երբ տերեւոց և կեղեներու մակերեւութիւն հասնի, կը թողու աւելրոդ ջրային հիւթերը, և կարեսր փոփոխութիւն մը կը կրէ, այսինքն արմատներէն ու բոլոր կանաչ մասերէն՝ բուսոյն մէջ մտած բնածխական թթուուտն արևային լուսոյ ազդեցութեամբն լուծուելով թթուածնիւն մեծ մասը մթնոլորտին մէջ կը ցրուի, իսկ բնածովիսը՝ աւշին մէջ կը մնայ . այս կերպով աւիշը դեռ աւելի կը դտուի ու կը փոխուի՝ ընդունելով այն յատկութիւնները՝ որովք կը մատակարարէ բուսոյ անմիջական նիւթեր :

Ոստ օմանց աւիշը՝ սյասփսի կերպով զբնութիւնն փոխելին վերջը, կը գառնայ յարմատս, և կ'ըսուի այս աւիշը՝ փայրաբեր աշիշ, բայց ոչ թէ փայտային մարմնէն կ'անցնի, այլ ընդ մէջ փայտի և կեղեկի, յորս կը թողու այն նիւթերն՝ ուրովք կը ձեւանայ կեղեային ու փայտային հիւսուածոյ նոր մաս մը : Սակայն ըստ այլոց՝ չկայ վայրաբեր աշիշը, զոր և փաստիք իսկ կը հաւաստեն . բայց մենք այս տեղու աւելրոդ կը համարինք մանրամասանց իշնել, ուստի փոխանակ ըսելու վայրաբեր աշիշ, կ'լսենք զտեալ աշիշ, որ դազափարնիս շատ լաւ կը բացատրէ :

Ոչ ոք կրնայ հակառակի վերամբարձ և զտեալ աշիշին մէջ եղած տարբերութեանց վրայ . վասն զի զտեալ աւիշը՝ շատ անգամ բաց 'ի թանձր և գունաւոր ըլլալէն, երբեմն բոլորովին հակառակ յատկութիւններ ունի, ինչպէս օրինակի համար Գանարեան կրպեաց Աբարբիոնի կեղեին զտեալ աւիշը սաստիկ թոյն մ'է, մինչդեռ նոյն բուսայ վերամբարձ աւիշն՝ այն երկրին մէջ ճամբորդաց համար զուտ և անվասա ըմպելիք մ'եղած է :

Ա; չին շարժման պատճառքն այլ և այլ են, ինչպէս Ներկուութիւնն, Հերաձեռորիւնն, Պոլիսն ծծիչ զօրուրիւնն, Տերեւոց գոլորշացունն, Խոնաշուրիւնն, Օդոյ անզայտուրիւնն, Հիւսուածոց մէջ հանդիսած բաղադրուրիւնն և Բարեկանանեուրիւնն, և ասոնք գրեթէ ամէնք մէկտեղ կը գործեն :

56. Շարժութիւն կարին . — Կաթնատար ըսուած անօթոց մէջ բովանդակուած կաթնային և կամ գունաւոր հեղուկն՝ շրջանին մասն է. սակայն այս հեղուկիս պաշտօնն աղջկ չի զիացուիր, ինչպէս նաև իրեն ծագումն և բնութիւնն : Ոմանք կ'ըսեն թէ զտեալ աւշին տարորդութիւնը ըլլայ, և այլք թէ՝ նոյն խակ զտեալ աշիշն է: Աբարբիոնից և Եղերգաց մէջ շատ առատ է և կաթի նման մաքուր: Բուսական կաթն իր շարժման մէջ ծամածուռ անօթոց ուղղութիւնն կ'առնու, բայց վերջն բարձր տեղերէն վար կ'իջնէ . (տես Ձև 48): Եկուց եղաւ առաջին՝ որ կաթին շրջանը դիմեց և ծանօթացուց:

57. Շնչառուրիւնն . — Շնչառութիւնն է այն գործողութիւնն, որով բոյս մը մասնաւրապէս իր տերեւօք, գալար կեղեներով և ամէն կանաչ մասամբք՝ կ'առնու մթնոլորտէն բնածխական թթուուտն, զոր արմատներէն ընդունածին հետ մէկտեղ լուծելով ետ կը դարձնէ մթնոլորտին զթթուածինն: Թէպէտ և բուսոց նախնական տարրն բնածովին է, սակայն Պուսենկոլ զանազան փորձներով ապացցուց առաջին անգամ թէ՝ Ունդաբեր և ուրիշ բայսեր ևս՝ կը ծծեն նաև զրուակածին կամ օդէն և կամ աւշակէն :

0 գը սովորաբար կը մտնէ բուսոց մէջ բերաններէն, (տես Ձև 73) որոնք կը հաղորդուին վերնամաշկին տակ գտնուած բազմաթիւ շնչելոյց վտառներուն, և ասոնցմէ առողաձ՝ կը թափանցէ բուսոց հիւսուածոց մէջ, օդոյ բնածխական թթուուտն իրեն սեփականելու և զթթուածինը մթնոլորտին դարձնելու համար:

58. Շնչառուրիւն յրատոյդ բուսոց . — Ինչպէս որ ըսինք, ջրային բոյս շունին ոչ վերնամաշկ և ոչ բերաններ. այս պատճառաւս շնչառութիւննին ալ կը տարբերի ցամաքայինն բաւաց շնչառութենէն, և կրնայ բաղդատուիլ, ըստ Պրոմիայի, ձկանց շնչառութեան հետ, որոց նմանութեամբ, ջրատոյդ տերեւք ջրոյ մէջ լուծուած օդը կը ծծեն, և այս տերեւոց երկու կամ

Երեք կարգ խորշերէ ձևացած ոստայնն՝ անմիջապէս ջրին կը հաղորդուի, որ ջրայն մէջի օդը լուծելով կ'առնու իրեն կը սեւ փականէ օդոյն բնածուխը և աղատ կը թողու զթուածինն:

Ջրային տերևներն վերնամաշկ շունենալուն պատճառաւ՝ շուտով կը կծին և կը չորսան, և այս կերպով կը կորունցընեն նաև չնչառութեան յատկութիւննին:

59. Ազդեցորիշն լրսոյ. — Տարբարանական երեսյթք՝ որոնք չնշառութենէն անբաժան են, բուսոց կանաչ և գունաւոր մասանց վրայ տարբեր կ'երեկին. կը տարբերի նաև կանաչ մասանց վրայ ըստ որում բայսը լրսոյ կամ խաւարի մէջ ըլլայ: Կանաչ մասունքն լրսոյ մէջ կամ ցորեկ ատեն՝ ծծելով գրնածխական թթուուտն, կը լուծեն զայն իրենց գործարանց մէջ, կ'առնուն և իրենց կը սեփականեն զբնածուխ, ու գուրս կու տան զթթուածին. իսկ մութ կամ գիշեր ատեն՝ զթթուածինն կ'առնուն, և գուրս կու տան զբնածխական թթուուտն: Արդ բուսոց կանաչ մասանց բնածխական թթուուտն լուծելու այս կարողութիւնը՝ անտարակոյս լրյուէն է. և այնշափ ստոր է այս՝ որ եթէ կտրենք որ և իցէ բուսոց տերեներ, ու դնենք ապակիէ անօթի մը տակ, յորում որիշ աման մ'ըլլայ լրով լեցուն ու մէջը բնածխական թթուուտն լուծուած, կը տեսնենք որ այն տերևները լրսոյ ազդեցութեամբ ընկ կը լուծեն զբնածխական թթուուտն, իսկ գիշեր ատեն չեն կրնար լուծել: Գիշեր ժամանակ միայն գունաւոր մասունքն և սերմերն ծելու ատեն շունչ կ'առնուն:

60. Այստաշնչորիշն. — Այստաշնչութիւն ըսելով կը հասկցուի այն ջրային գոլորշխացումն կամ գոլորշք, որ բուսոյ հողէն գուրս եղած կանաչ մասունքն կ'ելլէ, մասնաւորապէս բերաններէն: Բուսական արտաշնչութիւնը գլխաւոր պատճառներին մէկին է աւլին շարժման: Բուսոյ մը արտաշնչութիւնն այնշափ աւելի շատ կ'ըլլայ, որչափ որ բայսը ուժով և մատղաւոյ շունչով շոր և տաք: Ըստ փորձաց չալլերի, կազմամի մը տերևներէն տաք և չոր օր մը, 12 ժամուց մէջ՝ 7-8 հարիւցակրամ հեղուկ կը գոլորշխանայ: Կմանապէս ՚ի զանազան փորձոց և ՚ի դիտողութեանց յայտնի կը տեսնուի, որ բուսոյ մը սնունդն՝ շատ աւելի աղէկ կ'ըլլայ՝ երբ բուսոյ ծծած հեղուկին 2/3 մասը նորէն գոլորշխանայ, և մաս մը միայն

բուսոյ հիւսուածոյ կազմութեան մէջ մնայ: Բնութիւնն առայս օգնած է թաց տեղուանք սիրով բուսոց՝ ընդհանրապէս լայն տերևները չնորհելով, որով և շատ կը ծծեն, իսկ ապալեր ու չեռնային բուսոց՝ զանազան կազմութիւն տալով, որպէս զի քիչ ըլլայ ծծումն, որով և քիչ գոլորշխացումն:

61. Տարբարշումն. — Բուսոց ներքին կազմութեան մէջ մտած նիւթերը, ինչպէս չուր, բնածխական թթուուտ, բուրակային թթուուտ, աւշակ և քիչ քանակութեամբ ծծումը, լուսածին, կալի, կիր, և այն, բուսոց կենսական ու գործարանական զօրութենէն՝ տարբարանական փոփոխութիւններ կը կրեն. եթէ այս այլափոխած նիւթերն օգտակար են հիւսածոց ձեւացման համար, կը կոչովն տարբարշումնը, և գործողութիւնն տարբարշումն, իսկ եթէ աւելորդ են բուսոց, կ'ըսումն կղիղաներ:

Այս տարբորշիչ գործողութենէ յառաջ եկած նիւթերն են խորշամիշը՝ որ տարբական գործարանաց ներքին երեսները կը ձեւացընէ. փայտանիշը, փեկուղ, սինն, կանաչանիշը, շաքար, յիկ, ւետին, քանձը ու ցեղական իշղեր, աղեր. կալաբարային սկզբունք ունեցող նիւթեր՝ բնարիսն, քինաբինա, բնաւորին, և այն: Իսկ թթուուտներէն՝ քացախական, յիննական, յինձորական, զինամիջրական, և այն: Այս բոլոր նիւթերն ուրիշ բան չեն՝ բայց շորս զիսաւոր նախնական տարերաց բազագրութիւն, այսինքն թթուածնի, ջրածնի, բնածխի և բորակածնի, զոր կը կատարէ տարորոշումն ըսուած գործողութիւնն:

62. Կղիղումն. — Տարբորշմանէն պատրաստուած նիւթերէն ումանք, որ անյարմար են և անպիտան բուսոց մնընդեւան, կենսական ու գործարանական ներգործութեամբ գուրս կ'ելլեն. այս ներգործութիւնս կ'ըսուի կղիղումն: Ասոր պաշտօնն է երբեմն բուսոց քանի մը մասունքը խոնաւութենէ պաշտպաննել, ինչպէս մոմային փոշին կ'ընէ՝ խաղողի հատիկները ծածկելով, և ուետինի հիւթն՝ որ կը ծծեփէ կալամախի պտկունքը. երբեմն շատ գտնուելով բուսոց գործարանաց մէջ կարևոր նիւթերն, իրեն աւելորդ եղածը գուրս կը վանէ, ինչպէս այս հիւթերը՝ որոնք պտղատու ծառերէն, պտղունքներէն և կեղեններէն կը ծորին. և երբեմն ալ բոլորփին բուսոց ան-

օգուտ նիւթերէն կ'ազատէ, և այս վերջինս՝ ըստ բառին նշանակութեան, սույդ կղկղումն է. բայց գեռ ըստ ամենայնի հաւաստեալ չէ թէ ինչ կերպով կ'ըլլայ այս կղկղումն:

63. Նմանուրիւն. — Վերջապէս բուսոյ օդէն ու հողէն առած մննդարար տարրերէն, որոնք բաղադրութեամբ և այլափոխութեամբ՝ բոլորպին այլափոխուած են ու զտուած, բուսոյ իրաքանչիւր մասն՝ իրեն պէտք եղած նիւթը կ'առնու, կը իրացընէ և կը հաղորդէ իւր յատկութիւնները առած նիւթոյն, միով բանիւ իրեն կը նմանցընէ: Այս գործողութիւնն' առ որ բաւական չեն միայն բնաբանական և տարրաբանական զօրութիւնքն, այլ պէտք է և կենսական, կ'ըսուի նմանուրիւն, որ ոչ միայն կը պահպանէ զրոյսն, այլ և կ'աճեցընէ ձեւացած մասունքն և նորանոր մասեր յառաջ կը բերէ:

Գ Լ Ո Ւ Խ Դ

ՊՏԱԱԲԵՐՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԱՐԱԿ

Ա. Ծաղիկ:

64. Ծաղիկ. — Քանի որ բուսաբանական գիտութիւնն զարգացած չէր, ծաղիկն բուսոյ գարդ կը համարուէր. բայց արդ ոչ ոք կը տարակուօի՛ ծաղիկն բուսոյ մը ամենակարեռը գործարանն ըլլալուն փրայ, յորմէ կը կախուի բուսոյ պտղաբերութիւնն:

Ծաղիկն մէջ կան հական և երկրորդական մասունք. էական են պտղաբերութեան գործարանքն, իսկ երկրորդականքն են՝ նոյն գործարանաց արսուաբուսոտ շղչապատող մասունքն, որք զառաջնուն կը պաշտպանեն: Այս ամէն մասունքն ծաղիկն առանցից չըս կողմն շարուած են, ձեւացնելով նոյնշափ կարգեր կամ տեսակ մը ծաղկումներ, որոնք ըստ բուսաբանից կարծեաց՝ տերեւոց այլափոխութիւնք են:

65. Այլ և այլ տեսակք ծաղիկնեց. — Ծաղիկք կրնան ըլլալ կառարեալ, Անկատար, Միասեռ, Արոշ և եղ, Մենառուն, Երկասուռն, և Բաղմառուն:

Կատարեալ ծաղիկ. — Ծաղիկ մը որ մի և նոյն ժամանակ ունենայ վերյիշեալ ամէն մասունքն, կ'ըսուի կատարեալ ծաղիկ, (Ձև 92). զոր եթէ դիտենք դրսէն դէպ ՚ի ներսը, արտաքին պատեան մ'ունի՛ որ կ'ըսուի բաժակ, անմիջապէս երմէ վերը ուրիշ պատեան մ'ալ կայ՝ որ կ'ըսուի պասկ. ապա կը յաջորդեն պտղաբերութեան գործարանքն, այսինքն որձք կամ առէլը, իզայը կամ սերմնափակը: Ուրեմն կատարեալ ծաղիկն մէջ չըս ծաղկումն կայ, երկուքն էական և երկուքն երկրորդական: Բաժակ և պասկն՝ երկրորդականքն են, իսկ էականք են՝ առէլք և սերմնափակք. օրինակի համար Մեխսակ, Մանուշակ, Մրուանտակ, և այլն՝ կատարեալ ծաղիկք են:

Անկատար ծաղիկ. — Երբ վերյիշեալ ծաղկումներէն մէկը կամ միւսը պակսելու ըլլայ, կ'ըսուի անկատար ծաղիկ (Ձև 93), զոր օրինակ Յակինթ, Մայանթէմ, որոյ կը պակսի խոսեղէն բաժակ:



Ձև 92. Կատարեալ ծաղիկ՝ Մրուանտակ: Ձև 93. Անկատար ծաղիկ՝ Մայանթէմ:

Միասեռ ծաղիկ. — Անկատար ծաղկանց մէջ, անկախ արտաքին ծաղկումներէն, ոմանք միայն առէլք սմնին և ոմնանք սերմնափակը. այսինքն՝ ոմանք արական գործարանք ունին. այսպիսի ծաղիկք կը կա-

չովին միաւես, ինչպէս Արքակաղնւոյն արական ծաղիներն .
(Ձև 94):

Այսու և էզ կամ երկաւես ծաղիկ. — Ընդհակառակն կը սուի արու և էզ կամ երկաւես երբ երկու գործարանքն ևս մէկտեղ գտնուին բուսոյ մը վրայ, թէ առէլք և թէ սերմնափակը, ինչպէս Շուշանի, Բանդի, Կաղղի և Վարդի մէջ կը տեսնուի. (Ձև 81, 95):



Ձև 94.

Արական ծաղիկը Արքակաղնւոյն:



Ձև 95.

Արուեկ ծաղկ վարդի:

Մենատուն, Երկառուն և Բազմատուն ծաղիկը. — Երբ ծաղիկը միասեռ էն, այսինքն կամ առէլք ունին կամ սերմնափակը, կրնան գտնուիլ կամ մի և նոյն անհատին կամ ցղանի վրայ, և կամ զատ զատ անհատներու վրայ: Կրնան ըլլալ նաև մի և նոյն անհատին վրայ արու և էզ ծաղիկներ՝ միասեռ ծաղկանց հետ մէկտեղ. ուստի ըստ այսմ երեք տեսակ ծաղիկը կը զանազանուին:

Մենատուն, ինչպէս Եղիստացորեն, որոյ քիստը լեցուն է սրսիկներով. իսկ տերևոց անթէն ելած հասկերը ձնաւրամներ ունին, որոնք կը վերջանան երկայն ծղիկով մը: Քիս-

94 Fleurs mâles de noisetier. — 95 Fleur hermaphrodite d'une rose.

տը բաւական հեռու է հասկերէն, այսինքն՝ առէլք և սերմնափակը մի և նոյն անհատի կամ ցողունի վրայ կը կենան, բայց զատ զատ ծաղկամբք: Եղիստացորենոյն պէս միասեռ մենատուն են նաև Դղմենի (Ձև 96), Կաղնին, Ընկուղենին, Տըղկաղատ, և այլն:



Ձև 96. — Մենատուն ծաղիկ Դղմենոյ:

Երկառուն են՝ Ուռենիք, Կաղամախք, Կանեփ, Եղիճ Արմաւենի, և այլն (Ձև 97, 98), որոց առէլք և սերմնափակը զատ զատ անհատից կամ բուսոց վրայ կը կենան, որով բոլորովին որից են արական բոյսերը և իդական բոյսերը:

96 Fleur monoïque de citrouille.



24 97. Արմաւենի. — Palmier.


Ամուլ անհատք՝ միայն սրսիկներ ունին, իսկ արգասաւորք՝ լեցուն են սերմնափակօք, որոնք կը բեղմնաւորին առէշից արգասաւորիչ փոշուով։

Բազմատուն բուսոց մէջ մի և նոյն անհատին և նաև զատ զատ անհատից վրայ կան արու և էդ ծաղիկք, որոնք իրենք իրենցմէ արգասաւոր սերմնանք կու տան. կան նաև կամ առէջ կամ սերմնափակ ունեցող միասեռ ծաղիկք։ Միայն սերմնափակ ունեցող ծաղիկք՝ կրնան արգասաւորիլ թէ միասեռ ծաղկանց առէշից և թէ արու և էդ ծաղկանց բեղմնաւորիչ փոշիէն. նմանապէս արու և էդ ծաղկանց սերմնափակիք՝ կրնան արգասաւորիլ միասեռ. արական ծաղկանց բեղմնաւորիչ փոշիէն։

66. Բաժակ. — Բաժակը՝ կատարեալ ծաղկին ամենէն արտափին պատեանն է. բայց երբ ծաղկին անկատար է և պասկը կը պակսի, այն ատեն բաժակ կ'ըսուի այն միակ պատեանն՝ որ կը պաշտպանէ պտղաբերութեան գործարանքը։ Սովորաբար բաժակը կանալ է և տերեւային տարածմանէ ձևացած, որ կ'ըսուի վերը. (Ձև 99): Այս փերթք այլափոխած տերեւք են՝ քիչ շատ տերեւոց կազմութեամբն, այսինքն ունին խաչակափողք, նեարդք, ոստացն, չիդք, բերանք և վերնամաշկ. երբեմն գունաւոր ալ կ'ըլլան, զոր օրինակ ֆուքսիայի և Կուան բաժակին փերթք կարմիր են, և այն։

Գլխաւոր տեսակը բաժակին. — Երբեմն բաժակ կըն միակտուր կ'երեկ, այսինքն զբաժակ կազմող վերքերն ամէնքը մէկտեղ միացած. կը կենան խարսխէն վեր, և կ'ըսուի Միափիեր (Ձև 100. բ.): Երբեմն 'ի, զանազան մասանց կը ձևանայ խարսխէն սկսեալ, և կ'ըսուի բազմափիեր. (Ձև 101. ա.):

Բաժակք ըստ իրենց տեսողութեան կրնան ըլլալ դիշրահու, վաղանցիկ և տեալիսն, ըստ որում ծաղիկը՝ բացուելուն



Ձև 98:

Երկասուն ծաղիկ Եշէճի։




Ձև 99:

Բաժակ։

98 Fleur dioïque de l' ortie. — 99 Calice.

պէս կ'ինայ, կամ պսակին հետ միատեղ կը չորնայ շուտով, և կամ մինչեւ պտղոց հասունութեան ատեն կը տեէ:

Բաժակը կ'ըսուի ազատ, երբ ձուարանի մասն չէ, ինչ-պէս խորդենի (Ձկ. 401). կ'ըսուի շարամերձ՝ երբ որ և իցէ կերպով միացած է ձուարանի հետ (Ձկ. 400). խոտային կ'ըսուի



Ձկ. 400.

Միափերթ բաժակ
Ծխախոտի:

Ձկ. 401.

Բազմափերթ բաժակ
Խորդենոց:

Ձկ. 402.

Անկանոն բաժակ
Ընձախոտի:

Երբ տերեւոց սովորական կազմութիւնն ու գոյնն ունենայ. կ'ըսուի բերբանենան՝ երբ թէ՛ գունով և թէ՛ կազմութեամբն բերքից կը լնմանի, ինչպէս Յակինթ. կանոնաշրջ կ'ըսուի՝ երբ բոլոր փերթք հաւասար են, ինչպէս Վարդ. անկանոն կ'ըսուի՝ երբ իրարմէ՛ կը տարբերին կամ երկայնութեամբ կամ որիշ յատկութեամբ, ինչպէս Մանիշակ, Ընձախոտ (Ձկ. 402):


67. Պասկ. — Պասկը կը պատէ անմիջապէս զգործարանս պտղաբերութեան, և կատարեալ ծաղկին մէջ՝ բաժակէն վերը կու գայ: Տերևային տարածմանէն ձևացած է, որ կ'ըսուի թերը. ընդհանրապէս հոտաւէտ և գունաւոր է: Իւրաքանչիւր թերթին վրայ երկու մասունք կան, եղունգ՝ որ

400 Calice monosépale du tabac. — 401 Calice polysépale de géranium.

— 402 Calice irrégulière de l'aconit.

է թերթին սուր ծայրը, և բլիր, այսինքն՝ թերթին լայն մասն. (Ձկ. 400, ա): Պասկին թերթք ալ տերևոց այլափոխութենէն յառաջ եկած են, որով և կազմութիւնին ալ նոյն է: Սակայն թերթից հիւսուածքը շատ աւելի փափուկ է քան զտերեւոց և զփերթից. հիւսուածքը կազմող խորշերն մէկ կարգ կը ձևացնեն և չունին կանաչանիթը, ուստի և տարբեր է իրենց չնշառութիւնն, այսինքն կենդանեաց պէս զթթուածին կ'առնուն և գուրս կու տամ զբնածխական թթուուտն: Թերթից գոյնն յանհունս կը փոփոխի, և երբեմն մի և նոյն ծաղկին զանազան գոյն կ'առնու, ինչպէս Խաչաճեք, երբեմն մի և նոյն տեսակն մի և նոյն ժամանակ զանազան գունով ծաղիկներ կ'ունենայ, ինչպէս Մանիշակ, Խորդենի, Կանթենիճ, և այլն:

Պասկը կ'նայ ըլլալ միարեր և բազմարեր: Միաթերթ կ'ըսուի՝ երբ մի միայն թերթ ունենայ, և կամ լաւ և ա՛ շատ թերթեր՝ մէկ թերթի միայն վերածուած ըլլան, զոր օրինակ



Ձկ. 403.

Պասկ կանթենիճի:

Ձկ. 404.

Բազմաթերթ պատկ
Խառածաղկի:

Կանթենիճ (Ձկ. 403). իսկ երբ երկու կամ շատ թերթեր ունենայ՝ կ'ըսուի բազմարեր, ինչպէս Վարդ, Շուշան, Խառածաղկի. (Ձկ. 404):

Բազմաթերթ պասկաց թերթից թիւն շատ փոփոխական է. որով որով բան մը չենք կրնար ըսել կամ հաստատել. միայն միաթերթք բուսոց մէջ՝ ընդհանրապէս երեք են թերթերն և կամ երեքին բազմապատիկ թիւ մը, իսկ երկարթակ բուսոց մէջ՝ հինգ են թերթերն և կամ հնդին բազմապատիկ թիւ մը:

Միաթերթ պասկին մէջ երեք մասունք կան. խողովակ՝

403 Corolle de campanule. — 404 Corolle polypétale de renoncule.

որ պսակին նեղ և ստորին մասն է, կոկորդ՝ որ խողովակին բացուածքն է, և բյիր՝ այն մասն է՝ որ կոկորդէն սկսեալ կը տարածուի. (Ձև 103):

68. Կանոնաւոր և. Անկանոն պսակ և. Զեք պսակաց. — Թէ միաթերթ և թէ բազմաթերթ պսակք կրնան ըլլալ կա-



Ձև 103. Միաթերթ պսակ Արշնկուզ :

նենաւոր և. անկանոն, ըստ որում թերթք կամմի և նոյն և հաւասար են, ինչպէս վարդին, կանթեղնիձին. և կամ իրարու աննման ու զանազան ձևերով, ինչպէս կենեղուտի, լուրիայի, և ընդհանրապէս Շրթնաւոր ձաղկանց:


Միաթերթ պսակը կրնաց ըլլալ Զանգակաձև, ինչպէս Շե-

103 Corolle monopétale de stramonium.

րեփուկ, Ծխախոտ, (Ձև 100): Շրբնաշոր, որ երկու գլխաւոր աննման մասերէ կը բաղկանայ, մէկը վերին շարթն՝ միւսը ստորին, և բացուած թերանի մը կը նմանի, ինչպէս կենեղուտ և Վիշապապլու. (Ձև 106): Կնճարակերոյ, ինչպէս Շանբերան, որ բաց ՚ի շրթնաւոր պսակին յատկութիւնն ու նենալցն՝ կոկորդը կամ թերանը գոցուած է:

Երկաթերթ պսակին զլխաւոր ձևերն են.

Խաչաձև, երբ չորս թերթերն խաչաձև կեցած ըլլան, ինչպէս են Շահպուրակ, կաւաց Շրթնաւոր պսակ: զամբի իւղային, Եղիճ, և այլն. (Ձև 98): Վարդաձև, երբ զանազան թերթեր կարձ եղնգով ու վարդի ձևով շարուած ըլլան, զոր օրինակ Վարդ, Վաղենիկ. (Ձև 93, 107):




Ձև 107.

Վարդաձև պսակ
Վաղենիկի:



Ձև 108.

Որդի Ընձախոտի:
Վաղենիկի:



Ձև 109.


Որդ Ամարիլիսի:
Ա. մակրաթել- բ. սրսիկ:

Թիրեռնաձև, երբ թերթերն հինգ ըլլան, որոց մեծադոյնն և վերինն՝ դրոշակ կ'ըսուի, երկու կողմանի թերթք՝ կ'ը-

106 Corolle labiée. — 107 Corolle rosacée de souci. — 108 Etamines de l'aconit. — 109 Etamine de l' amaryllis ; style, antère.

սուրին թեք, և ասոնք կը ծածկեն երկու ստորինները՝ որք շատ անդամ քովիչ քովիչ կ'ըլլան և երբեմն մէկտեղ միացած են, և կ'ըսուին գոդ: Այս թերթքս այնպիսի զիրք մ'ունին որ թռչող թիթեռնիկի կը նմանին, ինչպէս դառն Լուրիա, Ոլոռն, Կենիստայ, Կակիայ և այլն:

69. Որձք կամ Առելք. — Պտղաբերութեան արական գործարանք ամէնքն մէկտեղ առած, կը կազմեն ծաղկին այն մասն՝ որ կ'ըսուի Որձք կամ Առելք, և կը գտնուին ընդ մէջ սկրմնափակաց և պասիկն (Ձև 108): Խրաբանչիւր առէչն երեք մասն ունի. մանրաբեկ, սրակի և բեղուն փոշի: Մանրաբեկն (Ձև 109, ա) գործարանքն ստորին մասն է, որոյ ձեւը գրեթէ տերեւի բարակ կոթունի կը նմանի. ասոր գագաթան




Ձև 110.

Սուէք: Սահմանաւոր առէչք:



Ձև 111.

Սահմանաւոր առէչք:



Ձև 112.

Անսահմանաւոր առէչք:



մրայ կը գտնուի Արսիկն (թ), որ պղտիկ պարկի ձևով է, և ներսը քանի մը խիճճ ունի (Ձև 110), որոց մէջ կայ րեղուն փոշի, որ ընդհանրապէս գեղին է, և ունի բեղմնաւորիչ զօրութիւնը, և են 109 ձեւոյն մէջ սրափիկն վար եղած մանր կէտերն:

70. Սահմանաւոր և անսահման առէչք. — Զանազան տեսակ բուսոց մէջ մինչ նաև մի և նոյն տեսակ անհատից մէջ, առէչից թիւն կը փոփոխուի. կան այնպիսի ծաղիկի՝ որք մի միայն առէչ ունին, ումանք 2, 3, 4, 5, և 100էն ալ առէլի: Մէկն սկսեալ մինչև 12 առէչք ունեցող ծաղիկն սահմանաւոր

110 Etamines. — 111 Etamines définies. — 112 Etamines indéfinies.

կ'ըսուի (Ձև 111), իսկ երբ առէչք 12էն աւելի ըլլան, կ'ըսուի անսահմանաւոր, ինչպէս (Ձև 112):

Հարասար և անհարասար առէչք. — Ընդհանրապէս մի և նոյն տեսակ ծաղիկն առէչք հաւասար երկայնութիւն ունին. սակայն կան ևս այնպիսի ծաղիկք, որոց մէջ շատ փոփոխական են. ասոնցմէ երկուքն միայն կարեւոք են երկագոր և քառագոր: Երկագոր կ'ըսուին այն ծաղիկք՝ որոց առէչք չորս են, երկուք երկայն և երկուք կարճ, ինչպէս կը տեսնուի Շրթնաւոր ծաղկանց մէջ. իսկ բառազօրն բաղադրեալ է 'ի վեց առէչքից, որոց չորսն երկայն են և երկուքն կարճ, ինչպէս կը տեսնուի Խաշտձև ծաղկանց մէջ:


Ձև 113.
Սուրաբողբոջ
առէչք:Ձև 114.
Շրթաբողբոջ առէչք
կեռասենուց:Ձև 115.
Վերաբողբոջ առէչք
բանդի:

Սուրաբողբոջ, շրթաբողբոջ և վերաբողբոջ առէչք. — Սուրաբողբոջ կ'ըսուին առէչք, երբ մանրաթելլ ձուարանի վարի մասէն կը ծլի, ինչպէս Բողկին և Խաշխաշին մէջ, (Ձև 113): Շրթաբողբոջ կ'ըսուին՝ երբ մանրաթելլ ձուարանի չորս կողմէն կը ծլի, զոր օրինակ Կեռասենուց մէջ, (Ձև 114): Վերաբողբոջ կ'ըսուին՝ երբ մանրաթելլ ձուարանի վրայէն կը ծլի, բողբոջ կ'ըսուին՝ երբ մանրաթելլ ձուարանի վրայէն կը ծլի, ինչպէս Գաղարին, Սամիթին և Բանդին մէջ, (Ձև 115):

115 Etamines hypogyniques. — 114 Etamines périgyniques de cerise. —

115 Etamines épigyniques de jusquijame.

Միակից, երկակից, բազմակից և համահաւաք առէջք. — Բուսոց մեծագոյն մասին մէջ առէջք մէկմէկէ դատուած կը դժոնուին. սակայն ումանց մէջ ալ մէկտեղ միացած՝ կը կազմեն զանազան խորձեր, որք կ'ըսուին առէջարեր խորձք: Ուստի եթէ շարամերձութիւնն մանրաթելիւք և առէջարեր մէկ խորձով է, առէջք՝ կ'ըսուին միակից, ինչպէս Մոլոշի ծաղկանց մէջ կը տեսնուի (Ձև 116): Եթէ առէջից միութենէն երկու առէջարեր խորձեր ձևանան, այն ատեն կ'ըսուին երկակից, ինչպէս լուրիսոյի ծաղկանց մէջ կը տեսնուի. իսկ թէ որ շատ խորձեր ձևանան, զոր օրինակ գդմատեսակ բուսոց մէջ, կ'ըսուին բազմակից: Բայց կ'ըլլայ որ առէջք ոչ



Ձև 116.
Միակից առէջք:



Ձև 117.
Սերմափակ:




Ձև 118.
Զուիքք:

եթէ մանրաթելիւք կը միանան իրարու հետ, այլ սրսիկներով, զոր օրինակ Հաղարի ծաղկանց մէջ, այն ատեն կ'ըսուին համահաւաք (Ձև 105. թ):

71. Սերմափակից կամ իգայք: — Ծաղկանց կեղրոնական մասը կ'ըսուի Սերմափակ, որ է պտղաբերութեան իգական գործարանն: Ավորաբար սերմափակին մէջ երեք մասունք կան. ձուարան, ժիլ և կնիք, (Ձև 117. ա. թ. զ):

116 Etamines de monodelphie. — 117 Pistil, ovaire, style, stigmate. — 118 Ovules.

Չուարան (Ձև 119) սերմափակին ստորին մասն է և գործարանին ամենէն ուռած կտորն. շատ անգամ այլ և այլ մասանց կամ բլինսերու բաժնուած է, որոց մէջ փակուած



Ձև 119. Չուարան բարձուենիկի:

են կլոր հատիկք կամ ձուիկք, որոնք արգասաւորութեամբ կը փօխուին կ'ըլլան սերմունք (Ձև 118): Չուարանն կրնայ ըլլալ ազատ և շարամերճ: Ազատ է՝ երբ ձուարանն բաժակին մասն չի կազմեր և կը միանայ պարզ ընդունարանին հետ, որոյ վրայ տնկուած է. օրինակի համար Բարձուենիկ, Խաշխաշ (Ձև 119, 120): Շարամերճ է՝ երբ ձուարանն կամ բոլորովին կամ մասամբ բաժակին հետ մէկ եղած է, ինչպէս Վարդ, Խնձորենի, և այլն. (Ձև 121):

Ծիլը՝ փոքրիկ կ'թուն մ'է, որ ձուարանէն դէպ ՚ի վեր կը բարձրանայ (Ձև 122. թ), և գագաթը ուռեցց մ'ունի որ կ'ը-

119 Ovaire de citronelle.

սուի կնիք կամ դրոշմել (գ) : Աերքսապէս կազմուած է խորշային հիւսուածէ՝ տարբեր ձուարանի հիւսուածէն, այսինքն՝ խիտ




Ձ. 120.
Աղասի ձուարան խաշխաշի:




Ձ. 121.
Եարամերձ ձուարան :

չէ այնչափ, և կը կոչուի հաղորդիչ հիւսուած, վասն զի բեղուն փուղոյ նուրբ խողովակիկը կը տանի մինչև ձուարանը, որով կնիքն և ձուարանն իրարու հաղորդակից են միշտ :

Կնիքը՝ ուռեցք մ'է, որ տարբեր ձեւեր ունի զանազան բուսոց մէջ, և բեղմնաւորութեան ժամանակ՝ մածուցիկ հիւթ



Ձ. 122. Աերմնափակ
Ա. ձուարան . - Բ. ձեւ .
- Գ. կնիք :



Ձ. 123.
Պնկովուն և կոշմնակի կնիք :

մը կ'արտադրէ : Երբոր կնիքը ծին կողերուն վրայ բուսնի՝ կ'ըսուի կողմնակի, երբ չունենայ ծիլը և ուղղակի ձուարանի

420 Ovaire libre du pavot. — 421 Ovaire adhérente. — 422. Pistil, ovaire, style, stigmate. — 423 Stigmate sessile et pariétale.

վրայ գտնուի կ'ըսուի Անկորուն, և երբոր ծլին վրայ ըլլայ՝ կ'ըսուի Ծայրաշոր. (Ձ. 122, 123):

Թիւ ծլից կամ կնիքոց թիւն ըստ ձուարանի բաժանմանց է . այս բաժանմունքս կամ բջիջք միաբարթակ բուսոց մէջ 3, 6, կամ 9 են, (Ձ. 124, 125). Իսկ երկարթակ բուսոց մէջ շատ անգամ 3, 10 և աւելի են : Զուա-



Ձ. 124. Բջիջք ձուարանի
և սերմունք :



Ձ. 125. Բջիջք
ձուարանի :


րանին բաժանման կամ բջիջաց թիւը՝ շատ անգամ կ'որոշ պտղոյն բաժանմունքը. բայց կան այնպիսի բոյսք ևս՝ որոց ձուարաններուն հատիկը չեն ամիր, ուստի և պտղոյն մասնց թիւը քիչ կ'ըլլայ, ինչպէս չնդկասաանի Մաշկամրդին մէջ 6 հատիկներէն՝ 4 հատն կ'ոչնչանան և երկուք կը մնան միշտ :

72. Չորիկ. — Չորիկն ամենափոքր գեղձ մ'է շարամերձ ձուարանի ներքին կողից վրայ, որ ըստ նմանութեան կենդանեաց ձուոց՝ մայր ծառին վրայ կ'աճի, մինչև որ բաժնուի անկէց և առանձին բոյս մ'ըլլայ, (Ձ. 126): Մանրացոյց գործառվ եթէ դիտենք զծուիկն, կը տեսնենք որ կազմուած է խորշային հիւսուածոյ կորիզէ մը, ներսէն թալանթով պատած խինձ մ'ունենալով, որ կ'ըսուի ասղնային պարկ. և ասոր մէջ կախուած է սաղմն փաքր առասանով մը, որ գրեթէ միշտ ծածկուած է ուրիշ երկու պատեաններով՝ տրտափին և ներքին, որմէք խարսխով միայն կը դպւին ձուիկն. և գագաթին վրայ ամենափոքր բացուածք մը կայ՝ որ կ'ըսուի տիփ :

124 Loges de l'ovaire et graines. — 125 Loges de l'ovaire.

Պլակինդի կամ Պորտ: — Չուարանի ներքին կողից կէ-
տերուն վրայ՝ որոց շարամերձ են ձուիկը, ձուարանի հիւ-
սուածն այնպէս կ'այլափոխի՝ որ կրնայ մնունդ տալ ձուարա-
նին: Այս մնուցիչ գործարանն՝ որ քիչ շատ ուռած է, կը
բաղկանայ խոչակափողէ ու երկայնաձև խորչերէ շրջապա-
տած խուրձէ մը, և կ'ըսուի Պորտ կամ Պլակինդի՝ թէ որ մէկ
ձուիկի կը համապատասխանէ, և Պլակինդայք՝ թէ որ շատ
ձուիկներ ըլլան:

Չուիկն երբեմն անմիջապէս շարամերձ է պլակինդին և
կ'ըսուի անկորուն, (Զւ 126). և երբեմն կոթունով մը կուած է:



Զւ 126.

Անկորուն ձուիկը:



Զւ 127.


Ձուիկը առասանաւոր:

որ կ'ըսուի առասանակ (Զւ 127): Ամէն ձուիկը մի և նոյն ձեւով
չեն, այլ ոմանք ուղղաձիգ են, ոմանք հակադարձ և ոմանք աչ-
աղնենաձև: Ուղղաձիգ ձուիկին մէջ՝ որ շատ քիչ կը գտնուի,
առասանակն տիփին բոլորովին հակառակ կողմն է, ինչպէս
խանգեղին. հակադարձ ձուիկին մէջ՝ որոյ տեսակէն շատ
կը գտնուի, առասանակն տիփին մօտ է, ինչպէս վրացի
կոճոյն. իսկ աղեղնաձև ձուիկին մէջ առասանակն տիփին
մօտ է, բայց ձուիկն աղեղնաձև է, ինչպէս լուրիային:

126 Ovules sessiles. — 127 Ovules avec funicule.


Բ. Պ Տ Ո Ւ Դ

73. Պտուշ. — Ծաղկանցքեղմնաւորութիւնն կատարուե-
լին վերջը՝ բաժակք, պատէց և սերմնափակք պաշտօն-
նին լմնցընելով կը շրնան և կը թափուին. նախ սրսիկքն,
կնիքն, հաղորդիչ հիւսուածն, ապա մանրաթեն և ծիլն, ա-
սուցմէ վերջը կը թափուին թերթք. իսկ բաժակին վերթքն՝
քիչ մաւելի կը դիմանան, և կը մնայ միայն ձուարանն՝ յու-
րում կեղրոնանալով բուսոյ կեանկն կ'աճի և կը մեծնայ, ու
մէջի ձուիկը փոփուելով՝ կ'ըլլան սերմունք, և երբ ձուարանն
այնպիսի հասունութեան համնի, որ իր մէջի ձուիկքն պատշաճ
տեղ իշնալով կամ ցանուելով՝ կարենան բողբոշիլ ու ծլի՛ կ'ը-
սուի Պտուշ, (Զւ 128):



Զւ 128.

Պտուշ Զշալի:



Զւ 129.

Պարկուճ. Սերմ:



Զւ 150.

Պարկուճ. Սերմ:

Պտուշն՝ երկու գլխաւոր մասունք ունի, Պարկուճն՝ Ալերմն: Պարկուճն պտղոյ արտաքին մասն է, որ զսերմն կը պատէ (Զւ 129, 150). պարկուճին մէջ երեք կարգ կը զանազանուի. Վեր-
ևակաշի, Միջնամաշի և Կերպեամաշի: Վերևամաշին է պտղոյ ա-

128 Fruit de cornouille. — 129 Péricarpe, graine.

150 Péricarpe, graine.


մենէն վերի մասն, որ միշտ բարակ է և սովորաբար կ'ըսենք կ'մաս: Միջնամաշկն է պտղոյ միջն կարգն, որով ընդհանրապէս դեղձի, Ծիրանւոյ և Կեռասի մէջի միտը կը հասկընանք. միով բանի՛ պտղոց մեծագոյն մասին ճաշակելի կտորն կը սուխ Միջնամաշկի: Պտղոց մեծագոյն մասին ըսի, և ոչ թէ ամէն պտղոց, վասն զի ոմանց մէջ, ինչպէս Խնձորի, Տանձի վերնամաշկն՝ աճառուտ փոքրիկ թեփոց վերածուած է, որ զսերմի կը պատեն, իսկ ուտելու մասն ընդունարան և բաժակ են շատ մեծցած և մային մարմնով: Միջնամաշկն շատ կը փոխուի թէ թանձրութեամբ և թէ տևականութեամբ, ինչպէս ըսինք՝ մային է Դեղձ, Կեռաս, Խաղող, Տանձ, և այլն. ընդ հակառակն կարծր է երբ չորնայ ինչպէս Նուշ: Ներքնամաշկի ամենէն ներքին մասն է պտղոց, որ կպած



Զւ 151.
Արման:



Զւ 152.
Արման:



Զւ 153.
Ապիտ սերման:

է սերմին հետ և զայն կը պաշտպանէ. պտղոց մեծագոյն մասին մէջ բարակ և թափանցիկ է, բայց կրնայ ըլլալ նաև թաղանթային, աճառուտ և փայտային, որ կը ձեւացընէ պտղոց կուտը, ինչպէս Կաղնւոյ, Դեղձին, Կեռասին, և այլն (Զւ 151):

74. Սերմն. — Պտղոյն երկրորդ մասն է Սերմն, որ բուսական ձուիկ մ'է՝ բեղան փոշիկն բեղմնաւորուած, որ ապա ըստ տեսակի մայր բուսոյ՝ առանձին տունկ մը կը ձեւացընէ (Զւ 152): Եթէ հասունացած սերմն դիտենք, յայլ և այլ մասնաց կը բաղկանայ. Երկրորդն երկրորդականն էն, այսինքն վերնամիզն և Սպիտն, և միւսը կարեւոր՝ որ է Պաղմն: Վեր-

աւմիզն սերմին փեճեկն է, որ պինդ թաղանթէ կազմուած է, և կը պատէ պարկի մը ձեռով զսպիտն՝ թէ որ կայ, և զսպիտն, որ երկու թաղանթներով պատառեալ է, մին ներքին և միւսն արտաքին:


Սպիտն խորշային հիւսուած մ'է, քիչ շատ թանձր և լեցուն փեկուզով. իրեն գիրքը վերնամիզն և սաղմին մէջտեղն է, և կը մատակարարէ բողոքներու ժամանակ սաղմին պէտք եղած մնունդը (Զւ 153). շատ տեսակ բուսոց սերման մէջ ամենաբարակ է. կան նաև այնպիսի բոյպ՝ որոց մէջ բոլորովին կը պակսի:

75. Զև սպարկուածին. — Պարկուած շատ կրնայ փոխուիլ թէ ձեռով և թէ կազմութեամբ, որով և պտղոց շատ տեսակը յառաջ կու գան: Երբեմն պտուղը արտաքսաւ պէս բաժանման հետք անդամշունին, երբեմն մէկ երկու բաժանմամբք են, և այս բաժանմունք կ'ըսուին տիփ. ուստի պտուղը կրնան ըլլալ Միախիփ, ինչպէս Խնձոր, Տանձ, և այլն. Երկատիփ, զոր օրինակ Բակլա. Եռատիփ, ինչպէս Շոշան, և այլն: Նմանապէս պտղոց ներքին խինձքն այլ և այլ են, երբեմն մէկ, երբեմն երկուք, երեք, և այլն. որոց մէջ զետեղուած են պտղոցն սերմունքն. ուստի կ'ըսուին Միախիմձ, Երկախիմձ, Եռատիխիմձ, (Զւ 124, 125, 150). և որովհետև այս խինձքէն ումանք մէկ և ումանք շատ սերմունք կը պարունակեն, անոր համար այս խինձքն ևս կրնան ըլլալ Միասերմն և Բաղմասերմն:

Չոր և մային պտղոյք. — Պտուղները՝ ըստ իրենց կազմութեան կրնանք երկաւքի բաժնել, այսինքն Չոր և Մային պտուղք: Զւ 154. Պատեհաւոր պտուղ: Չոր կամ Պատեհաւոր կ'ըսուին այն պտուղք, որոց սերմունքն պարփակուած են բարակ, չոր և միւսը կը բաղկանայ և փայտային պարկուածի մը մէջ, զոր օրինակ Ուեռն, Կնձնի, Հացի (Զւ 152). իսկ Մային կ'ըսուին

այն պտուղք, որոց միջնամաշկն թանձր և կակուղ է, ինչպէս
Դեղձ, Կեռաս, Խաղող, Հաղարջ, և այլն (Ձև 455): Բայց
շատ անգամ պտղըն մսոտ և կակուղ ըլլալն՝ միջնամաշկն
կախումն չունի, ինչպէս Ելակ, Թոռդ, այլ ընդունարանին և
բաժակին մեծնալէն:

Ինքնարաց և անինքնարաց պտուղք. — Զոր պտուղք, զոր
օրինակ Լուբիա, Ուպ, Ուլեռն, երբ կը հասուննան և իրենք
իրենցմէ կը բացուին, որպէս զի սերմունքն գետին իյնալով
կարենան բուսնիլ, կ'ըսուին ինքնարաց, զոր օրինակ Շահ-
պրակ, (Ձև 456). իսկ երբ իրենք իրենցմէ չեն բացուիր, ինչ-
պէս կաղին, Նուշ. և այլն, կ'ըսուին Անինքնարաց, (Ձև 457):



Ձև 453. Ձև 456. Ձև 457. Ձև 458.
Հաղարջ: Շահպրակ: Կաղին: Բաղադրեալ պտուղ:

Պարզ, բաղադրեալ, և յօդուածոյ պտուղք. — Պարզ կ'ը-
սուին պտուղք եթէ յառաջ գան մի միայն սերմնափակէ,
զոր օրինակ Կեռաս, Դեղձ: Բաղադրեալ կ'ըսուին պտուղք՝
եթէ շատ սերմնափակներէ ծնանին, որք մի և նոյն ծաղկին
վրայ են, ինչպէս Ելակ, Ալքայամորմ, և այլն. (Ձև 458): Յօ-
դուածոյ կ'ըսուին այն պտուղք՝ որոնք շատ սերմնափակներէ
կը ձևանան, և սերմնափակք՝ նոյնչափ զատ զատ ծաղկանց
վրայ կը գտնուին, որոնք հետզհետէ այնպէս կը սղմուին՝ որ
ամբողջոթիւն մը կը կազմեն. ինչպէս Թոռդ, Թոռթ, Անա-
նաս, (Ձև 459):

455 Grosseille. — 456 Giroflee. — 457 Gland. — 458 Fruit composé.



Ձև 459. Անանաս. — Ananas.

76. Պարզ պտղոց զլիաւոր տեսակներն են.

Արմենիք, որոնք միասերմն են, և վերնամաշկն սերմէն անբաժանելի է, օրինակ իմ ջորեն, Գարի, Եգիպտացորեն, Բրինձ, Վարսակ, և այլն, (Զե 140):

Անբացիկ՝ որոնք միասերմն են, և վերնամաշկով շատ քիչ կը միանան սերմին հետ, ինչ-պէս Խառածաղիկ, Հողմածաղիկ, Կանդառ, Խորդենի, (Զե 101. թ. 141):

Պահարա՛ որոնք միախինձ կամ երկախինձ պտուղը են. կաշեայ, թաղանթային, խիտ և երկու թերթ վերնամաշկ ունին, ինչպէս կընձնին, Հացիին, Տղկիին պտուղը, (Զե 142, 145):

Ունդի՛ զոր օրինակ Լուրիս, Ուպ, Ուռոն, Բարկա, բազմասերմն, Երկայնաձև, Երկատիփ են, և որոց սերմոնքն միայն եղերքը կպած են, (Զե 144):

Մստ՝ ինչպէս Սալոր, Հապաւասի, Դեղձ, Զղեար, և այլն. անինչքնաբաց են, փայտային ներքնամաշկով, միասերմն կամ բազմասերմն, (Զե 145):

77. Բաղադրեալ պտղոց զլիաւոր տեսակը են.

Աեխենիք, որոնք բազմախինձ պտուղը են, անկատար խորշերով ցիրուցան մասու սատայնի մէջ, զոր օրինակ Վարունկ, Դրում, Սեխ, Ջմերուկ (Զե 124, 132):


Երեկորմնեայք, կատարեալ խինձովք, և լի ջրային սատայնով պտուղը են, ինչպէս Լիմն, Կարինչ, Մասիլեան Եարինջ, և այլն (Զե 146):

Խնձորենի, կաշեայ խինձով պտուղ մ'է և շարամերձ բաժակով. ինչպէս Տանձ, Խնձոր, Փշախնձոր. (Զե 147, 148):



Զե 140. Վարսակ.
Avoine.


Հատապտուղ, անխինձ են, և սերմոնքն մսոս նիւթին մէջ կախուած կը կենան, ինչպէս Խաղող, Հաղարջ, Գոճմակ, (Զե 155, 149):



Զե 141.
Անբացիկ:



Զե 142.
Սամարա Տղկոյ:




Զե 143:
Սամարա:



Զե 144.
Ուռոն:



Զե 145.
Հապաւասի:



Զե 146.
Լիմոն:



Զե 147.
Խնձոր:


Բևոց անթին մէջ կը գտնուին, ինչպէս Կոճեաց, Եղևնեաց, Շոճեաց մէջ կը տեսնուի, (Զե 150):

441 Achaine. — 442 Samare de l'éralbe. — 443 Samare. — 444 Pois. — 445 Myrtle. — 446 Citron. — 447 Pomme.

Թուրզ, որոյ ճաշակելի մասն՝ ոչ թէ պտուղն է, այլ ընդունարանն կարգէ դուրս մեծցած. իսկ բուն պտուղք կը



Ձ. 148. Փշախանձոր:



Ձ. 149. Գոռջակ:

գտնուին ներքին երեսին վրայ շարամերձ, զորս թերեւս ոմանք սերմն կը համարին. այսպէս են նաև Եղակ, Թութ, և այլն:


Գ. ՊԱՇՏՈՆՔ ՎԵՐՍԱՆՈՒԹԵԱՆ

79. Նախընթաց գլխոց մէջ ստորագրած գործարաններն՝ բուսոց վերածնութեան կը ժառացին, որ զանազան գործութիւններէ կը բարդկանայ, այսինքն են թեղմնաշորուրիւն, չառունորիւն, Մերմնացանորիւն և Բողրդուուն:

80. Թեղմնաշորուրիւն. — Երբ բեղուն փոշին սրսիկներուն մէջ իրեն պէտք եղած աճումն կը ստանայ, սրսիկը կը բարդուին իրենք իրենցմէ՝ բեղուն փոշոց տեղիք տալու համար, և ցուին կունք կունքու բարդուն փոշոց տեղիք տալու համար, և կը հոսին կնքոց վրայ, որք իրենց մակերևութիւն վրայ կը պահեն մասնաւոր արտադրած մածուցիկ նիւթով մը: Բեղուն

148 Pomme épineuse. — 149 Camelée.

փոշոց փոքրիկ հատիկք ամենամանր խորշեր են, որք կամաց կամաց կ'ուռին ներհոսմամբ, և իւրաքանչիւրին ներքին թաղանթն կ'երկըննայ ընդ մէջ արտաքին թաղանթին, և կ'ըլլայ ամենանուրը խողովակ մը, (Ձ. 151). այս խողովակն կը թա-




Ձ. 150. Կոնոն Շոմւոյ:

փանցի կներոյն մէջ, և անցնելով ծլեմ կ'իջնէ մինչև ձուրիկք, և կ'անցնի տիփիկն. հոս կը հոսի այն ամենանուրը խողովակին մէջի եղած նիւթը՝ որ կ'ըսուի սաղմնահիւր, յորում բեղմնաւորիչ զօրութենէն կ'այլափոփի ձուիկն և կ'ըլլայ սաղմն, ապա սերմն, և յետոյ նոր բոյս: Բեղմնաւորութեան այս վարդապետութիւնն՝ նորանոր փորձերու արդիւնք է, զոր ամե-

150 Cone de pin.

նայն կերպով ապացուցին Պրոնիար, Շլայտէն, Հօքէշ, Մոհլ, Ունձէր, Հոփմայստէր և Դուլազն: Եւ յիրաւի, փրցընենք արու և էդ ծաղկանց առէջըը՝ քանի որ որսիկք չեն բացուած,



Ձև 131. Բեղուն փոշի հանդերձ խողովակով:

և կը տեսնենք որ ձուիկք ձուարանին մէջ չեն փոխուիր 'ի սերմն, և որով պտուղ չեն տար. իսկ եթէ առէջից բեղուն փոշին ցանենք ձուարանի ձուոց վրայ, շուտով սերմն կ'ըլլան և առատ պտուղ կու տան նոյն տարին: Այս բանս հնուց 'ի վեր ծանօթ էր Տիգրիս, Եփրատ և Պարսից ծոցին եղերքը բնակող Արաբացւոց. այսինքն՝ այն երկիրներն՝ յորում Արմաւի պտուղը կը համնի. տեղացիք որպէս զի ապահովեան ծաւոց առատ պտղաբերութեան, կը փրցընեն առէջաբեր ճիւղերն և տերեւները, և կը տամին կը շարժեն ու կը թօթուեն սերմնափակաց վրայ, և այս կերպով ամենապահով կ'ըլլան որ բեղմնաւորութիւն կ'ըլլայ ու առատապէս կը պտղաբերեն: Բեղմնաւորութիւնն կը սկսի երբ ծաղիկն բոլորովին կը բացուի և իր գեղեցիութեան մէջ կը դտնուի:

81. Միջոցը բեղմնաւորութեան. — Բնութիւնն բուսոց բեղմնաւորութեան կարեորագոյն գործն ապահովընելու համար, շատ տեսակ և երբեմն այնպիսի միջոցներ կ'առնու՝ որ զմարդ կը զարմացընէ: Բուսոց մեծ մասն արու և էդ ստեղծուած է, որով մի և նոյն ծաղկին մէջ երկու գործա-

բանքն ևս դտնուելով՝ շատ զիւրին է բեղմնաւորութիւնն: Երբ արու և էդ բուսոց մը մէջ պտղաբերութեան գործարանքն մէկտեղ ըլլան, սակայն դրից պատճառաւ գժուարին ըլլայ մերձաւորութիւնն, բնութիւնն՝ բուսոյն այնպիսի շարժումն տուած է, որ իր վախճանին կը համնի. զոր օրինակ երբ առէջք փոքր ըլլան քան զսերմնափակս, սովորաբար ծաղկաբեր կոթունները վար կը ծովին և չեն շոկուիր՝ մինչև որ բեղմնաւորութիւնն չկատարուի: Այն բուսոց մէջ, յորս առէջք և սերմնափակը զատ զատ կը գտնուին և իրարմէ շատ հեռու, բեղմնաւորութիւնն կը կատարուի կամ հողմոց կամ թուչնոց և կամ միջատաց միջոցով: Բայց ասոնցմէ աւելի հետաքրքրական և զարմանալիք է ջրի մէջ ընկդմած բուսոց բեղմնաւորութիւնն: Ջրային բյազք չկարենալով ջրի մէջ արդասաւութել, զարմանալիք կերպով ջրին երեսը կ'ելլեն արդասաւորութիւն կատարելու համար: Քանի մը տեսակ բուսոց մէջ բեղմնաւորութեան ժամանակ՝ ջերմութիւն կը ծնանի Յ, Յ, և երբեմն մինչև 10 աստիճան աւելի քան օդոյ ջերմութիւնն:

82. Հասունուրիւն. — Բեղմնաւորութենէն վերջը՝ սնընդեսն նիւթիք՝ որ առաջ ծաղկին չորս մասանցը կ'երթային, միայն ձուարանին կ'երթան. ուստի մինչդեռ ծաղկին չորս մասունքն կը չորսան և վերջապէս կամ ումանք և կամ ամէնքն ալ կ'ինան, ձուարանը միայն կը մնայ, կը թանձրանայ և պտուղ կ'ըլլայ: Որով այն փոփոխութիւնքն զրոս կը կրէ ծուարանն, և այն ժամանակն՝ զոր կ'անցընէ բեղմնաւորութենէն մինչև սերմանց կատարելութիւնն, այսինքն այն աստիճանի համնի՝ որ ցանուելով պատշաճ ժամանակին և պատշաճ հողուն մէջ կարենայ բուսնի, կ'ըսուի Հասունուրիւն:

Պտղոց հասունութեան ժամանակը՝ որ համեմատ է պըտղոց տեսակին և կիմային, շատ մեծ փոփոխութիւնք կը հանդիսավոր պտղոց մէջ. զոր օրինակ ինքնաբաց պտղոց, ինչպէս նաև կնձնիի, Հացիի, և այն, բարակ պարկուը կը չորնայ. մսոտ պտղոց մէջ, զոր օրինակ Տանձ, Խնձոր, Դեղձ, և այն, խորշային հիւսուածն շատ կ'աճի, և նորանոր տարրաբանական բաղադրութիւնք յառաջ կու զան պարկուճ կազմող սկզբանց մէջ, ուստի օսլայ, խէժ, և այն, կը փոխուին կ'ըլլան շաքար, մի և նոյն թթուուտաց պատճառաւ՝ որք ա-

Նախորժ համ կու տան տհաս պտղոց: Այս փոփոխութիւնն ներս՝ որք կ'ըլլան պտղոց հասունութեան տաեն, մննդեան արգասիք չեն, մանաւանդ թէ բոլորովին անկախ են մայր բուոց հիւթոց ազգեցութենէն, այնպէս որ շատ տեսակ պտուղը կրնան փրցուիլ տհաս և ապա հասունացուիլ առւեսուով:

83. **Փոքրացումն պտղոց հասունուրեան.** — Առաջին փութացընող միջոցն է շափաւոր չերմութիւն. ուստի պարտիզաւանք կանուխ հասցընելու համար՝ կը ծածկեն զպտուզ ապակիէ անօթավք, վասն զի ասոնց մէջ քիչ մ'աւելի կ'ըլլայ չերմութիւն, և արտաշնչութիւնն ալ ամենաքիչ և կամաց կամաց է, նոր օդ չընդունելուն պատճառաւ: Այս սկզբանս վրայ հիմնած շատ տեղ սովորութիւն կայ Տանձի, Խնձորի, Ծիրանի, Դեղձի, Որթի, և ուրիշ պտղատու ծառեր պատի վրայ յեցընել դէպ'ի հարաւային կորմն. արև մասնելէն վերջը՝ պատը զներմութիւնն անդրադարձնելով՝ պտղոց չորս դին չերմութիւնն կը շատնայ, և պտուղը այս կերպով շատ առաջ կը հասուննան: Նաև ծառոց մննդարար հիւթերը դէպ'ի պտուզ ուղղելը շատ կ'օգնէ պտղոց կանուխ հասունութեան և միանգամայն դքանակը մեծցընելու. այս նպատակաւ ըստ ժամանակին կը կտրեն պարտիզանք պտղատու ճիւղոց վրայ եղած տերենները, ինչպէս նաև կրոր կերպով կը ճեղին պտղատու ճիւղոց կեղեկը՝ պտուղներէն վար, որպէս զի վայրաբեր աւիշը արգելուի և ստիպուի վերին մասանց մէջ ամբ փոփուիլ, և որով առատապէս նիւթ մատակարարէ պտղոց:

84. **Երեմնացանորիւն.** — Երբ պտուզն հասունութեան վերջին աստիճանի կը համնի, սերմունքն կը բամնուին և երկրիս երեսը կը սփռուին. այս օրոքն՝ որոյ նպատակն է յարմար տեղ ցանուելով նորանոր բայսեր յառաջ բերել, բնութիւնն ապահովուցած է զանազան միջոցովք, յորոց ումանք նոյն իսկ բուոց կազմութենէն կախումն ունին, այլք չըսց, հողմոց և կենդանեաց ձեռքով: Ինչպէս օրինակի համար՝ ինքնաբաց շատ պտղոց մէջ պարկուճը շուտով կը բացուի և իր առաձգութեամբն ըստ բաւականի հեռու կը նետէ զհատիկս և կը ցանէ. զոր օրինակ չնածաղիկն:

Կնձնի, կանգառ, և այն, այնպէս թեթև սերմն ունին,


և պաշտպանեալ են այնպիսի կցուած մասերէ՝ զոր հողմն կրնայ շատ հեռու տեղուանք փոխազրել: Կան նաև ուրիշ սերմունք՝ որ փոքրիկ մազիներ ունին սրոնցմով մարդուս զգեստուց, կենդանեաց մրդին, թռչոց ոսիկներուն և թռչոց վրայ կազելով՝ կը սփռուին ու ցան և ցիր կ'ըլլան: Ի գետեղերս բումնող բուոց շատին սերմունքն ջրի մէջ անցք մ'ունին, և այս կերպով հեռաւոր աշխարհներ կը փոխազրուին. և զարմանալին այս է՝ որ անոնց՝ որք լրոց մէջ ճամբորդութիւն կ'ընեն, բնութիւնն ուսկրէ պատեան մը շնորհեր է, որպէս զի թայութենէ շփոտին: Միավ բանիւ, այն սերմունքն՝ որոնք ծանրութեան պատճառաւ կարծես թէ ծառին ոտքը պիտի մնան, այնպիսի մեծ ճամբորդութիւններ կ'ընեն՝ որ զմարդու կը հիացընեն. շատ թռչունկիրենց կերակուր գտնելու համար՝ տեղէ տեղ կը փոխադրուին, և կը փնտուեն զհատիկս և փոքր կաղիններ, զորս ասովին անդին օբյուն մէջ ձգելով կը ցանեն. զոր օրինակ Տորդիկը՝ աշնան կ'երթն ոստղը վնտուելու համար, և վերոյիշեալ կերպով կը ցանեն Խնձորենոյ, Կաղամակի, Սլոցիվրայ. նմանապէս Մինարէք կը ժողովին իրենց բնակարանաց մէջ Մաշկամբդի պտուղներ, յորոց շատերն կը բումնին և ծառ կ'ըլլան, ուսկից տեղացի խեղճ լեռնցիք հաց կը շինեն ու կ'ուտեն:

Պատուրիւն սերմանց. — Շատ տեսակ բուոց սերմանց առատութիւնն զարմանալի է, այնպէս որ եթէ չըլլային զանոնք մասամբ մի սպառող պատճառք, երկրիս մակերեւոյթն չէր բաւեր: Մարացորենի տնկոյ մը վրայ 2000 հատիկ համրուածէ. Գարւոյ մի միայն տնկոյ վրայ 1800 հատիկ. Խաշխաչի մը վրայ 52000 սերմն, և Ծխախոտի մը վրայ 560000:

85. **Բողբոշունն.** — Հասունացած սերմն եթէ յարմար և սերմին սեփական պայմաններով ցաներու ըլլանք՝ կը ծլի, և յառաջ կու գայ բոյս մը նման այն բուոց ուսկից սերմն եղած է. այն գործարանաւոր կենասական ուժն՝ որով կը ծլի և նոր բոյս մը կ'ըլլայ՝ կ'ըսուի Բողբոշունն, (Ձև 152): Երբմն շատ մեծ փոփոխութիւններ կը կրէ բողբոշման ժաման Ձև 152. նակը. սաղմին արմատիկն, տերեկիկն և ցօղունիկն Բողբոշ: կը մեծնան և կը թանձրանան, սպիտին կամ ըլթակաց մէջ



եղած նիւթով. խոչորնալով՝ կը պատռեն սերմին պատեանը, որ թրջած կ'ըլլայ հողուն խոնաւութենէն. և արմատիկն դէպ 'ի հողուն տակ կը ձգտի, իսկ ցողունիկն դէպ 'ի վեր: Հազիւթէ նախնական արմատք և տերեւք կը բուսնին՝ բողբոշման



Ձև 155. Աստիճանաւոր բողբոշում:

ժամանակը կը լմնայ. վասն զի բոյսը իւր արմատովք և իւր տերեւք կը նայ մնանիլ՝ ծծելով հողէն և օդէն իրեն կարեւոր մնունդը թէ ապրելու և թէ այն աստիճանի համելու համար՝ որով իր տեսակին նմանի, (Ձև 155): Բնիթակը թէ հողուն մէջ մնան և թէ հողուն երեսը գան՝ միշտ կը թոռմին, ինչպէս նաև սերմին պատեանն ալ կը չորնայ:

Վերնամիզն կը պաշտպանէ իր մէջի բոլմանդակ նիւթը շափականց խոնաւութենէ, որ կը նայ բաղալուծել. և կ'ուղղէ

155 Germination graduelle.

նաև պատշաճ կերպով զնոյն խոնաւութիւնը դէպ 'ի յարմատիկ: Սպիտակ և ըլթակի կը մատակարարեն փոքրիկ բուսոյն կարեւոր եղած մնունդը, քանի որ չի կրնար ինքիրմէ սնանիլ:

Սերմանց բողբոշելու և ծլելու համար՝ պէտք է ջուր, օդ և ջերմութիւն. ջուրն կամ խոնաւութիւնն կը կակցընէ սերմին պատեանն, կ'ընդարձակէ զրլթակն և կ'օգնէ սննդեան իր գոյացութեամբ, թէ իրրեւ լուծիչ և թէ իրրեւ անցք ուրիշ սննդարար նիւթոց: Օդն կը մատակարարէ զթթուածին, որ կը բաշաղրուի սպիտին և ըլթակին բնածխին հետ, յառաջ բերելով զբնածխական թթուուտ՝ որ կը ցնդի: Բնածխին հանմամի՝ սպիտին և ըլթակը կազմող նիւթոց մէջ տարաբանական ներդրութիւնն մը կը կատարուի, որով վեկուղն կ'ըլլայ շափարային, կաթնային, լուծական, և յարմար նոր բուսոյ սննդեանն:

Իսկ ջերմութիւնն, որ յայտնի է թէ շափաւոր պէտք է ըլլայ, այսինքն 40էն 45, և պէտք չէ համանի 40 աստիճանի, կը ներգործէ թէ իրրեւ անհրաժեշտ շարժիչ բաւական հիւսուածոց և թէ իրրեւ արգելիչ ջրոյ, որ ոչ սապի և ոչ գոլրդիխանայ, վասն զի եթէ սաստիկ ցուրտ կամ տաք ըլլայ՝ չի կրնար ծլիլ:

86. Անեն վերած նորդիւն. — Բնիսերը կրնան բազմանալ բաց 'ի բեղմաւորութենէն և սերմէն՝ գեռ որիշ միջոցներով ևս: Եւ յիրաւի, ինչպէս ստորին կարգի կենդանեաց մէջ, այսպէս ալ բուսոց մէջ երկու որոշ վերածնութեան կերպեր կան, մին սեռով և միւսն անսեռ, որուն զիխաւոր տեսակը են բնական և արտեստական տապարադրութեն. բնական են կոճղիզաց և արջտակի բաժանումն, որոնք պատշաճ հօղոյ մէջ դրուելով՝ առանձին բայս կ'ըլլան. իսկ արուեստական են Պղուրի, Չաչ և Փատուատ:


Եթէ առանձիք զօրաւոր և մատղաշ ճիւղ մը, և ուժով կապերով կամ կեղեկին չըլս կողմի՛ ուր որ պտուկ մը կայ հատումն բնելով՝ խոնաւ հողուն մէջ թաղենք, ու այն տեղէն արմատներ տալով՝ կարենայ մնունդ առնուլ, և իրրեւ առանձին բայս մը ասպիլ, կ'ըստուի Պղուրի. այս կերպով կը բազմացուին Նարինչը և Լիմոնիք: Իսկ այն ճիւղերն՝ որոնք կրնան հակիւ և ծոխի, բաւական է գետին թաղել, ինչպէս Որթի ճիւղերն և Ազաւինին:

Չաշն քիչ տարբերութիւն ունի աղուրիէն, վասն զի բաւ-
սական է միայն պտուկ ունեցող ճիւղ մը հատանել որ և իցէ
ծառէ մը և տնկել հողոց մէջ. որ օրինակ եթէ Ուռենուոյ կամ
կաղամախի ճիւղ մը տնկենք կիսով չափ հողուն մէջ, շատ
շուտ արմատներ կ'արձակի՛, և զատ ծառ մը կ'ըլլայ: Չաչ ը-
նելու յարմար եղանակն է ձմեռն, վասն զի այս ժամանակիս
մէջ կենսական ամենայն պաշտօնք դադրած կ'ըլլան, և ճիւ-
ղերն պէտք է որ մատղաշ ըլլան և շատ պտուկներով:



Ձև 434.

Պատուաստ:



Ձև 435.

Կեղեապատրոս:

Երբեմն նաև չաշ կրնան ըլլուիլ տերեք և պտուղք իսկ,
երբ հողուն դպչին, տալով արմատ և պտկունք:


Պատուաստն զբյոս բազմացրներու այն կերպն է՝ որով
բաւոյ մը պտուկ ունեցող ճիւղ մը կը միացոի ուրիշ բաւոյ
ճիւղի մը հետ, որպէս զի միւս բուսոյն մնունդն առնու և ա-
ճի: (Ձև 434): Երեք տեսակ պատուաստ կայ կեղեապատրոս,
ձղապատրոս և Պատուաստ մերձաշորոշեամբ:

Կեղեապատրոս կ'ըլլայ՝ երբ ենթակային կեղեին մաս մը
կտրուի, և տեղը դրոփ հաւասար մեծութեամբ պատուաստ
տելի բայուը, որ պէտք է մեծ աչք մ'ունենայ, (Ձև 435):


Ճղապատրոս կ'ըլլայ՝ երբ պատուաստի վրայ կ'առնցուի
պտուկ ունեցող ճիւղ մը, որոյ վարի ծայրը՝ երիթի պէտ
օրած (Ձև 72), կը խոթուի հերձեալ ցողունի մը մէջ, ջանա-
լով որ թէ ենթակային և թէ պատուաստին կեղեային եղեր-
ներն ամենաճիշտ կերպով զիրար չօշափեն. (Ձև 436):

134 Greffe. — 135 Greffe en écusson.

Մերձաշորոշեամբ պատուաստ կ'ըլլայ՝ երբ երկու ճիւղ
կամ երկու տունկի իրարու մօտեցընենք և ուժով կապենք, շ-
շափման տեղը կեղենին հանելով:



Ձև 436. Ճղապատրոս:



136 Greffe par fente.

87. Հիւանդորիշեք և մահ բուտց.— Բոյսերն գործարանաւոր կազմութիւն ունենալով՝ յայտնի է թէ երբեմ երբեմ իրենց ներփին գործարաններն զանազան այլայլութեանց են՝ թակայ կ'ըլլան յայլ և այլ պատճառաւաց: Այս պատճառներն իրնան ըլլալ բնաբնական ազգակը կամ զօրութիւնք, որպիսիք են լոյս, չերմութիւն և ելեկտրութիւն. երկրորդ՝ արտաքին ազգեցութիւնք, ինչպէս են օդ, ջուր և հող, երրորդ՝ գործարանաւոր մարմինք:

Լուսոց, ելեկտրութեան և չափազանց ջերմութեան՝ բուտց վրայ լրած վնասն յայտնի է, շարունակ արտաշնչութիւն, գոլրշիացումն և հողոյն ցամաքութիւն պատճառելով, որով բոյսք՝ չեն կրնար կորուսածնին ստանալ և կը ստիպուին թոշնիլ և ապա չորնալ քիչ ժամանակի մէջ: Նմանապէս ցուրտալն կ'ընդհատէ բուտց կենսական ուժը, և ապա մէջի հեղուկը սառելով՝ կը սկսին բռնայ խորչային հիւսուածք, անօթք և ուրիշ գործարանք պատռատիլ, որով անհրաժեշտ մահն վրայ կը հասնի, ոչ միայն մատղաշ բուտց՝ այլ և մեծամեծ և բազմամեայ ծառոց: Օդն և ջուրը թէպէտ և յինքեանս վնասակար չեն բուտց, սակայն երբ զուտ ըլլան, այլ ապականեալ և զանազան աղերով խառն, ինչպէս ծովեղերեսոյ և ձախնային օդն՝ խոյն շնչառութեան արգելք կ'ըլլան, կը գեղնին տերեկը, կը սկսին շոտով թափիլ, և ցօղունն աղային նիւթերով թէ արտաքուստ և թէ ՚ի ներքուստ կը պատի, որով կը չորնայ և կամ քիչ կը զիմանաց: Խակ ջուրն եթէ չափազանց ըլլայ, փտտութիւն կը պատճառէ ներփին գործարանաց և մասնաւորապէս արմատոց, որով կը սկսին քայլայիլ ու կամաց կամաց մեռնիլ: Խակ հողն շատ կը վնասէ եթէ բռնուց յարմար չըլլայ, այսինքն կամ սաստիկ պարարտ կամ անբեր, յորում թէպէտ և կը բռումին, բայց երբեք իրենց կատարելութեան չեն հասնիր և չեն կրնար պտուղ հասցընել, և քանի մը տարիէն կը չորնան ու կը մեանին:

Բայց ասոնցմէ աւելի շատ մեծ վնաս կը կրեն՝ ՚ի գործարանաւոր մարմնոց. և նախ մարդէս և ՚ի մեծամեծ կենդանեաց, որոնք վայրկեան մը հանգիստ չեն տար. երկրորդ ՚ի միջատներէն, որոնք իրացնէ ահագին հարուած կուտան ՚ի վնաս բուտց, և որ մեծն է մորդուս. և երրորդ՝ նոյն իսկ

բոյսերը իրարու մեծ թշնամի են. ինչպէս բաղեցն, վրացի կոճ և այլ մագլցող բոյսք, որոնք ուրիշ բռնուց հիւթերը ծծելով կը չորցնեն: Բայց ամենէն շատ վնասող՝ գաղտասեռ բոյսք են, որոնք իւրաքանչիւր զատ զատ հիւանդութիւնք, որթի, գետնախնձորոց, ցորենոյ, մորացորենոյ, վարսակի, խնձորոց և այլ պտղոց, և յառաջ կուգան ֆիլքսերայէ, զանազան ամենափոքր մնկերէ, ածուխն, ցեցէն, և այլն:

Գ Լ Ո Ւ Խ Ե

ԴԱՍԱՀՈՐԾՈՒԹԻՒՆ ԲՈՒԽՈՅ

88. Տեսակը. — Երկրիս վրայ՝ ինչպէս նաև ջրոյ մէջ ապրող իւրաքանչիւր բոյս՝ առանձին զատ անհատ մը կը կազմէ. եթէ այս անհատից վրայ մանր զիտողութիւն ընելու ըլլանք և կամ բաղդատունք իրարու հետ, կը տեսնենք որ անոնցմէ շտերն՝ մէկմէկու աննման են, և այլք հասարակաց քանի մը յատկութիւններ և բնաղրոշմք ունին: Եւ յիրաւի, զիտենք դաշտի մը մէջ Գարւոյն հետ մէկտեղ ցանուած անհատներ, Յորեն, Հաճար, Կանեփ, Կորեակ, և այլն. անտարակոյս կը տեսնենք որ ամէնքն ալ ունին արմատ, ցօղուն, տերեւ, ծաղիկ և պտուղ, որոնք մի և նոյն բնաղրոշմք կ'ընծայեն, և իւրաքանչիւրին սերմն բողբովելով դաշտին մէջ բուսածներու նման կ'ըլլայ, ուստի կ'ըսուի թէ այն դաշտին ամէն բյոյն մի և նոյն տեսակն է, այսինքն Գարւոյն տեսակէն: Ուրեմն տեսակը կ'ըսուին այն ամէն անհատից որոնք իւրարու նման են քան թէ ուրիշ բռնուց, և իրենց բնական սերնեամբ յառաջ կը բերեն իրենց նման կատարեալ անհատներ, որով ամէնքն ալ կրնան համարուիլ մի և նոյն նախական ազգէ մը յառաջ եկած:

89. Զանազանանակը. — Աւակայն այս տեսակըն՝ ժամանակաւ զանազան ազգեցութեանց պատճառաւ, օրինակի համար՝ կիմյայի, տեղուց, եղանակաց բարեխառնութեան, մշակութեան կերպին և գեր ուրիշ ազգեցութեամբ, կրնան ներ-

կայացընել երբեմն քիչ շատ մեծ տարրերութիւնք, աւելի կամ պակաս տեսական փոխիշութիւնք, որոնք կը հեռացընեն զրյան իւր սկզբնական տիպէն. ինչպէս՝ կրնայ մի և նոյն տեսակ բայց մը՝ դոյնը փոխել, հիւսուածքն աւելի կամ պակաս խիտ ունենալ, ծաղիկը պարզ կամ բարդ, հոտաւէտ կամ առանց հոտի, մազոտ կամ առանց մազի, մեծ կամ փոքր, պտուղն անոյշ կամ կծու ըլլալ, և այն. և այն տեսն կ'ըսուին պարզ զանազանակի: Այսպէս Յորեն, Որթ, Տանձ, Խնձոր և կանաչեղինաց մեծագոյն մասն, զանազան մշակութեանց ազդեցութեան պատճառաւ: կը փոխսին և կ'ըլլան իրարմէ տարրեր բայս՝ թէ ձևով, թէ գունով, թէ մեծութեամբ և թէ համով, որոնք պահելով տեսակին գլխաւոր յատկութիւնները՝ կ'ըլլան զանազանակի Յորենոյ, Որթոյ, Տանձի, Խնձորի, և այն:

90. Ազգ և Տոհմ. — Եթէ զանազան տեսակաց խումբեր ձևացընենք, որոնք ընդհանուր մի և նոյն տեսք և երեսոյթ ընդային, որոց ծաղիկը և պտուղը մի և նոյն կազմութիւն ունենան, ու այլ և այլ գործարանաց դիրքն ալ նոյն ըլլան, այն խումբերն կ'ըսուին ազգ. օրինակի համար Հարիւթերթեայ վարդ, Վայրի վարդ, Պենկալայի վարդ, Հայաստանի վարդ, Դամասկոսի վարդ, Եթովպիսի վարդ, Խոլանտայի, Կովկասի և Հնդկաստանի վարդեր, և այն, կը կազմեն ազգ Վարդի. ուրեմն ազգ կ'ըսուի հաւաքումն տեսակաց, որոնք ամբողջութեան մէջ իրենց գործարաններով նման են իրարու, և այս նմանութիւնս աւելի կայացած է պտղաբերութեան գործարանաց վրայ: Խոկ տոնմ կ'ըսուի՝ երբար այլ և այլ ազգը բուսոց՝ ընդհանուր կերպով մի և նոյն յատկութիւններն ունենան:

91. Բուսաբանական շեզուարանուրիւն. — Լիննէոս 1 իր

¹ Լարուս Լիննէոս Ծառական Ամուսնու գաւառնի Ռէսզիւլժ դեղ 1707ին. հայրը զինքը դպրոց մը քեկեց որ լասին լեզուն սորվի, բայց տղան փօխանակ ուսման պարապելու, մասնաւոր սէր մ'ունենալով պըզ-ամփոց ՚ի վեր անկաց վրայ, զուարձակ դաշտուր կերթար տեսնելու և ծաղիններ հաւաքելու. հայրը զայս տեսնելով կը հանէ զողան դպրոցէն և կոշկարի մը քով կը դնէ: Բայց բազումին ընտանեաց բարեկամ բժիշկ կը տեսնելով զինքը՝ զարմացաւ տղուն սբանչելի հանձարյն վրայ, ուստի

դասաւորութիւնն ընծայելու ատեն, շատ մեծ և կարևոր նորութիւն մ'ալ մտցուց բուսաբանական լեզուաբանութեան մէջ: Իրմէ աւաշ, որ և իցէ բայս մը կոչելու համար՝ հինգ վեց բառով կը բացատրէին, որով ամենագմուարին էր միտք պահէլ և մէկմէկէ զանազանել, մանաւանդ որշափ որ նորանոր տեսակը կը գտնուէին՝ այնշափ աւելի բառեր կ'աւելնային: Խոկ Լիննէոս որ և իցէ բուսոց տեսակը երկու անուամբ կոչեց. առջնն գոյական բառով մը կը բացատրէ, որ բուսոց տոհմը կը նշանակէ, և երկրորդը՝ ածական բառով մը, որ տեսակը կը ցուցընէ. օրինակի համար զանազան կաղնիներ

մէկէն առաւ զինքը իր հօրը քովէն, ու թուունբփորին տնկաբանութիւնը տառով ձեռքը՝ Լուսաւէն համալսարանին գիտուն առաստիքի մը քովը բաւարար: Յեղան վարպետն առատ ծախութ փոխադրուեցաւ ՚ի համալսարան Ուբսաւայի. հոս քանի մը տարի Խեղջութեամբ ապրէլն վերջը, Ուպու Ուբսապէւ նոյն համալսարանին բուսաբանութեան վարդապետն, տեսնելով անոր ընտիր յարմարութիւնը, համալսարանի պարտիզին տեսչութիւնը իրեն յանձնեց ու միանգամբն իրեն տեղը դաս կու տար երբեմն. աչա հոս ունեցաւ նախ յամին 1731 իր նոր դասաւորութեան գաղափարը:

Լիննէոս կամաց կամաց սկսաւ. համբաւ ստանալ. և աչա 1752ին Ուբսալսայի ուսման և գիտութեանց թագաւորական ընկերութիւնն իր ծափիրը, զեկեց զինքը Լամինիս, որպէս զի հօն տեսք բյուերը դղողվէ ու քննէ. Լիննէոս զայս պաշտոնը ամենայն մասպարութեամբ ու փառաւոր կերպով կատարեց: ՚ի գարձին շատ նախանձորդք գտաւ իրեն դէմ, ուստի թողոց զի կրտսալ ու գնաց ՚ի Լէյտոս, ուր երկելի Պոչէրչաւ բժշկին հետ ծանօթանալով, սորվեցաւ անկէ բժշկութիւնը և հոս իր բացուց շննեց. վասն զի Պոչէրչաւ բժշկին ձեռքովը՝ ճանչուորեցաւ Գէորգ Փլիֆփորը անունով Ճոնս իրաւագիտի մը հետ, որ միանգամբն շատ սէր ունենալով բուսաբանութեան, իր սբանչելի և գեղեցիկ ծաղկանց պարտեզը՝ Լիննէոսի խնամցը յանձնեց: ՚ի Լէյտոս երեք տարի կեցաւ և ամենայն փափաքելի միջոցներն ունեցաւ իր ուսմանը մէջ յառաջադիմուու: Այսէ անցաւ յԱլնգլամ, ուր բարձանաւոր պատիւ չատնելով գնաց ՚ի Բարբիզ ՚ի Շուէս գտանալպ. Թագաւորին բեռնարդու Ժիւսիցի հետ: Գաղղական ՚ի Շուէս գտանալպ. Թագաւորին բեռնարդու Ժիւսիցի անուանեցաւ և նախագահ գիտութեանց Տէմարանի, և վերջապէս 1741ին Ուբսալսայի համալսարանին տնկաբանութեան վարդապետ կոչուեցաւ:

Լիննէոս պայ պաշտօնը 58 տարի պայծառացուց, ու մեծ անուն հանելով իրեն գասախօսութեանց կը վազելն ոչ մայն հայրենակիցք, այլ նաև Եւրոպից ամէն կողմէրէն աշ. մեռաւ յամին 1778ին, 71 տարեկան, թողով իրեն անուան արժանաւոր երկասիրութիւնը ՚իրաւունքն բնաւունքն, Հիւունաւունքն բուսաբանութեան, Տնաբանագանաւունքն, Շատրվանագանաւունքն, Ղարաբանաւունքն, և այն:

բացատրելու համար կ'ըսէ . Կաղնի իրիկեան , Կաղնի եղենեայ , Կաղնի մայրեաց , Կաղնի լիրանանու . նմանապէս զանազան խաղիրաններ կոչելու համար կ'ըսէ . Խաղիրան ասրասաղարթ , Խաղիրան սևագլուխ , Խաղիրան գուարթատես , Խաղիրան հացիտերեւ , և այն :

92. Դասաշրջիւն : — Փանի որ բուսաբանական գիտութիւնն զարգացած չէր , շատ մեծ խառնակութիւն կը տիրէր բուսոց տոհմից , ազգաց , զանազանակաց և տեսակաց մէջ . մանաւանդ Ամերիկայի գիւտէն վերջը , յորում անթիւ նոր տեսակ բայսէր գտնուեցան , զորս մէկմէկաւ հետ կը շփոթէին , և ծանօթ բուսոց կարգին կամ խմբին մէջ կը դասաւորէին , առանց ամեննեխն յատկութեանց ուշ գնելու : Այսպիսի խառնակութեանց մէջ հանճարեղ բուսաբանք կ'ըմբռնէին թէ կարգ մը , բաժանում մը պէտք է , որով կարելի ըլլայ և միանգամայն դիւրին՝ բուսաբանութեան ուսումն և զարգացումն , և թէ իմացուին ու յայտնի տեսնուին բուսոց մէջ եղած բնական յարաբերութիւնք : Առ այս հնարուեցան զանազան Դասաւորութիւնք , զորս կրնանք գլխաւորապէս երկուքի վերածել , այսինքն արուեստական և բնական դասաշրջիւնք :

93. Այրուեստական կ'ըսուի այն դրութիւնն , երբ բուսոց զանազան խումբեր հիմնուած ըլլան արտաքին քանի մը բնադրումից վրայ , որ կը ծառայէ միայն բուսոց անուան ծանօթութեան . իսկ բնական կ'ըսուի այն դրութիւնն , երբ խումբերն կը նշանակուին բուսոց ամէն գործարանաց բնադրումներով . ուստի ոչ միայն բուսոց անունը կը ծանօթացընէ , այլ և կազմութեան յարաբերութիւնը և գործարանական յատկութիւններն ուրիշ բուսոց նկատմամբ : Այրուեստական դրութեամբ աւելի դիւրաւ կրնանք դասաւորել տեսակ մը , և դիւրաւ ճանճնալ բուսոց մը անունը , բայց աւելի բան մը չենք կրնար ընել . և երբ բազմաթիւ և նորանոր բոյսք գտնուին՝ շատ դժուարին կ'ըլլայ դասաւորել : Իսկ բնական դրութեամբ՝ յիրափ աւելի դժուարին է և շատ մեծ ծանօթութիւն կը պահանջէ գործարանագրութեան , բայց այս առաւելութիւնն ունի , որ ոչ միայն անունը կը ցուցընէ տեսակի մը և կամ որ և իցէ խմբի մը , այլ և կարևոր գործարանական յատկութիւններն , որով այն խումբն կը ասաբերի ուրիշ խմբէ մը :

Այրուեստական դրութեանց մէջ բաց ՚ի Ռայի անգղիացւոյ և Գուռնըֆորի¹ դասաւորութենէն , շատ աւելի յարգի է Լիննէսոփի դասաւորութիւնն , որ մինչև ժամանակ մը թէ ՚ի վարժարանս և թէ ՚ի պարտէզզ ընդհանուր կը գործածուէր իւր դիւրութեան և միանգամայն նորութեան համար . սակայն պակասաւոր էր , զոր և ինքնին հեղինակն կը խոստովանէր : Իսկ բնական դասաւորութեանց մէջ երևելի են Ժիւսիոյի և ալ Գանտովի դասաւորութիւններ :

94. Լիննէսոփի արուեստական դասաշրջիւնն . — Լիննէսոփ կը բաժնէ նախ բոլոր ծանօթ բոյսերը՝ յերկու մեծդգասս , որք են Յայտասենք և Գարուասենք . այսինքն՝ այն բոյսերն՝ որոնք պտղաբերութեան գործարան ունին , և այն բոյսք՝ որոնք պտղաբերութեան գործարան չունին : Յայտասենքը շատ աւելի ըլլալով քան զգաղտասեռո՞ 23 դասոց կը բաժնէ . իսկ զգաղտասեռո՞ մի միայն դասու , որ է վերջինն : Յայտասեռ բուսոց մէջ ոմանք արու և էգ ծաղիկներ ունին , այս ինքն առէշք և սերմնափակը միանգամայն , այլք միասեռ են , այսինքն առէշք կամ սերմնափակ ունին : Որդի Լիննէսոփ միայն 20 առաջին դասերը նորիած է արու և էգ ծաղկով բուսոց , 3 դաս՝ միասեռ ծալիկով բուսոց , և 1 դաս՝ զաղտասեռ բուսոց : Առաջին 10 դասք հաւասար առէշք ունին , իսկ մէկալոնք անհաւասար , ինչպէս կը տեսնուի յաջորդ ցուցակին մէջ :

1 Յովսէփ Բիթոն տը Դուռնըֆոր Գաղղիոյ Բրովանն նահանգին Երս քաղաքը ճաւա 1656 ատրուն Ցուլիսի 5ին , ազնուական տնէ : Հայրը կուզէր զինքը քաշանայութեան ատիճաննեն հասցընել տալ , բայց Դուռնըֆորի կոչումն այն չէր . ուստի Ցուլուց եկեղեցական ուսմունքն , ու ակըսաւ ինքնինքը բուսանութեան տալ և ապա բժշկութեան , զոր կասարելացործելու նպատակաւ գնաց ՚ի Մոնքելիէ . յորում աեմնելով Հենրիկոս Դ Գաղղիոյ թագաւորին Հաստատած բուսապանական պարտեզզ , նոր եռանդ մը վասեցաւ սրտն մէջ , և սկսաւ ճամբորութիւն ընել Սաւոյիոյ , Տօֆինէի , Ռոսիիլոնի և Քաթալոնիոյ լեբանոց վրայ՝ Խոտեր և նորանոր ծաղիկներ ժողովէլով : Յամին 1685 թագաւորական պարտիզն վարժապէտ անուանեցաւ , զոր պայծառացուց և ճոխացուց Սպանիայէն , Բորբուգալէն , Հոլանտայէն և Անգլիայէն անձամբ բերած նորանոր բոյսերով : Ճանապարհորդեցնաել Պօլսի , ՚ի Հայտան , ՚ի Վրաստան Լուգովիկոսի ֆջին ծախիւրը . մասաւ 1708ին . իրեն բազմաթիւ երկասիրութեանց մէջ զիսաւորը են . Տոբէր + Բառաւութիւնն յարեւէլ , և այլն :

ԳՐԱԴԱՐԱՆԻ ԱՐՏԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՆՈՒՅԹ

- | | | | |
|-----|-------|-----------------|---|
| 95. | Առաս. | — | Միասնէշ. |
| Բ. | » | Երկառնէշ. | 1. առելող. Հնիկիլիկդն. Համեմեւ: |
| Գ. | » | Ենասնէշ. | 2. » Յառմիկ. Լիբանովլուան. Նըլեսովակ: |
| Դ. | » | Քառասնէշ. | 5. » Յորմն. Մըսորդըմն. Գարդի: |
| Ե. | » | Հնդառնէշ. | 4. » Տղոն. Գասոսու. Գալորիուոր: |
| Զ. | » | Կեցառնէշ. | 5. » Հաղպարչ. Որթ. Գեմանախնօտ: |
| Է. | » | Լոթնառնէշ. | 6. » Շուշնձ. Յակիլնթ. Կանաչ: |
| Ը. | » | Ութնառնէշ. | 7. » Հնդկաստանի մաշկամիրդ: |
| Ը. | » | Ինճառնէշ. | 8. » Փուքիսյ. Դասինի լույզիր: |
| Թ. | » | Ինճառնէշ. | 9. » Գար. Մարդենի: |
| Ժ. | » | Տասնառնէշ. | 10. » Շահողրամ. Օշնան: |
| ԺԱ. | » | Կրկոտոսանառնէշ. | 11.-19 » Կրմանակ. |
| ԺԲ. | » | Քամնառնէշ. | 20. և առելիառնէշը բաժակին կիսաշլուած. Վարդ: |
| ԺԳ. | » | Բաղմաննէշ. | 20. և առելի առէջը ընդունարանի կլայց. Խառածան: |
| ԺԴ. | » | Երկառդօր. | 4. առելող. 2 երկառն և 2 կարճ. Պատրինչն՝ Ն |
| ԺԵ. | » | Քառաջօր. | 6. » 4 » 2 » Սահաններ. |

Արքակից	»	Վերաբերեալ	»	Վաղարշապատ	»	Արքակից	»	Վաղարշապատ	»
Արքակից	»	Վերաբերեալ	»	Վաղարշապատ	»	Արքակից	»	Վաղարշապատ	»
Արքակից	»	Վերաբերեալ	»	Վաղարշապատ	»	Արքակից	»	Վաղարշապատ	»
Արքակից	»	Վերաբերեալ	»	Վաղարշապատ	»	Արքակից	»	Վաղարշապատ	»
Արքակից	»	Վերաբերեալ	»	Վաղարշապատ	»	Արքակից	»	Վաղարշապատ	»


96. Դասաւրուրիւն Ժիշիոյի: — Անտոն Լարենտիոս
Ժիւմակիցի¹ դասաւրութիւնն ևս բառ Լիննէովի դասաւրու-
թեանն հիմնեալ է պաղաքերութեան զործարանաց վրայ , սա-
կայն այս առաւելութեամբ՝ որ կը ցուցընէ իրենց յատկութիւն-
ները , և թէ ինչ յարսրեռութիւն
ունին ուրիշ գործարանաց հետ .
ուստի նախ բոլոր բյուերը երեք
մեծ մասանց կը բաժնէ , այսինքն
Անդրակ , Միաբրակ և Երկա-
րբակ , որք յայլ և այլ դաս կը
բաժնուին: Անըլթակ բոյսք մի
միայն դաս կը կազմեն , որոնք
շունկն ստոյգ սերմն:



ԶԿ 157. Թիւտենի:

97. Ժիւմակի այս բնական
դասաւրութիւնն , յիրաւի բու-
սաբանութեան ուսման մեծ զար-
գացման պատճառ եղաւ , ինչ-
պէս նաև ուրիշ ժիւտութեանց
ես , զոր իրմէ առաջ ուրիշ դա-
սաւրութիւնք չէին կրցած մա-
տուցանել: Սակայն մարդկային
հանձարն և հանապաղողեան
գիւտք , այս դրութիւնն ևս փո-
խեցին , հիմունքը նայն պահե-
լով , աւելցընելով ինչ ինչ կատարելութիւն և յապաւելով ինչ
ինչ թերութիւնն : Այդ այս դասաւրութեանն կատարելագոր
ժողով եղան՝ ի մասնաւորի տղ Գանտող , Հոռերդ Պրովիլ ա-
մենամեծ բուսաբան Անդղիացոց , Լինտլէյ՝ նոյնպէս անդ-
դիացի անուանի բուսաբան , Լինտլիխէր և Պրոնիար :

1 Անտոն Լաւրենտիոս Ժիւմակի ծնաւ ՚ի Լին 1748ին , յորում իր
նախնական ուսմանքը լմցընելն վերջ , գնաց ՚ի Բարիզ բժշկութեան
ընթացքը աւարտելու համար իր հօրեղոր Բեռնարդոսի առաջնորդու-
թեամբ : Յամին 1777 Լըմոնիէն թագաւորին բուսաբանական պարտիզն
գարժապեան , ընարեց զինքը իր հօրեղոր տեղու : 1789ին հրատարակեց իր
երեկէի երկասիրութիւնն Վեդ+ բուռոց , որով անմահ անուն ժառանգեց :
Գիւտութեանց ձեմբարանին անդամ եղաւ և բուսաբանութեան վարժա-
պէտ , մեռաւ 1856 ՚ի Բարիզ:



ԶԿ 158. Հացապտղի:

ԳՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԺԻԿՈՅՑԻ

U. U. U. U.

Ա. Պատ. - Անդրեակ

Institut für
Medienforschung

Հ. Եկեղեցական պատմություն

33: Եղիսաբետի բանակը, աղոթքի ժամկետը և, չաղմանիրը պահօք

Ճ.Բ.	»	- Վերաբերելթ .	Առէջք ձաւարանի վրայ . - Գաղպար. Մալովինդ:
Ճ.Գ.	»	- Ստորաթելթ .	Առէջք ընդունաբանի վրայ . - Խառածաղիկ .
Ճ.Ի.	»	- Տրամթելթ .	Առէջք խաղաղականի դատ դատ աղիւսաց լրաց :
Ճ.Ե.	»	- Տրամթելթ .	Առէջք անհաջող . Օգուստուս:
Ճ.Վ.	»	- Տրամթելթ .	Առէջք անհաջող . Օգուստուս:

98. Դասաւորութիւն տղ Գանտոյի. — Տը Գանտոյ¹ կը բաժնէ նախ բոյր բոյսերը երկու մասանց, որ կը համապատասխանեն Լիննէսովի Յայտասեռ և Գաղտասեռ բաժնաման. այս բաժնաման իւրաքանչիւրը՝ կը բաժնէ յերկուս դասս : Առաջին բաժնամունն է Երկարլրակ և Միարլրակ, իսկ երկրորդն է Լիսանօրատոր և Խորշատոր: Երկարլթակը միայն սոտրաբաժնամունք ունին, և են չորս. Ծաղկածին, Ծաղկաբակակ, Ծաղկապատ, Միարդամիդ, որ լաւ ևս կը տեսնուի յաջորդ ցուցակին մէջ.

Ա. ՅԱՅՏԱՍԱՅԵՌԻՔ

	Ծաղկածին ²	Խառածաղիկը . Խաշաձեք .
		Խաշխաչք .
1.	Ծաղկաբաժակ	Ընդարերք . Հովանոցաձեք .
		Բարդք .
ԵՐԿԱԲԼԹԱԿԻՔ	Ծաղկապատ	Երթնաւորք . Շնախաղողք .
	Միարդամիդ	Մատիտեղք . Սարդենիք . Արարիք, Կայծփշացինք . Կոնարերք :
2.		
ՄԻՍԲԼԹԱԿԻՔ	• • • Ջրաբոյսք . Շուշանք . Արմաւենիք . Աէզք:	

Բ. ԳԱՂՏԱՍԱՅԵՌԻՔ

3.	Կիսանօթանորք Ջիազիք . Պտերք . Մամուռք:
4.	Խորշանորք Փարաքոսք . Առնիք . Լոռք:

1 Օգոստոս տը Գանտոյ ճանաւոր 1778ին ի՛ Ճինեւուա կալուինական ընտանիք մը. գնաց ի՛ Բարիզ բժշկութիւն սորվելու համար. բայց Տէֆոնթենի բուսաբանական դասախոսութիւնը լսերվէ այնչափ սիրեց զուսաբանութիւնն որ թողոց զբժկութիւնը և բոլորովն բուսաբանական գիտութեան զաղղեցաւ: 1797ին հրատարակեց Պատրիութեան սուսառադանութեան բառաց, և ապա Փոք բուսաց բժշկուան յարդանենութեանց վրայ: 1806ին Գաղղից տէրութեան յանձնարարութեամբ ճանապարհորդեց կայսերութեան ամբողջ գաւառները քններու և տեսնելու համար, թէ ինչ վիճակի մէջ կը գտնուի Երկարգործութիւնն: 1808ին անուանեցան բուսաբանութեան պարտապետ և տեսուչ Մոնթելիէ համալսարանի պարտիզին. այս ժամանակու հրատարակեց իր գլուխ գործոցն Ալբնութեան բուսառաբու-

99. Այժման գործածական դասաւորութիւն. — Լիննէսոսի Յայտասեռքն կը բաժնուին 'ի Պատմասերմն և 'ի Մերկասերմն բոյս, իսկ Գաղտասեռք կը բաժնուին 'ի Լիսանօրատոր և 'ի Խորշատոր բոյսս. ահա ըստ այսու բաժնաման համառօտիւ ծանօթութիւն կու տանք այլ և այլ տոհմից, ազգաց, զանազանակաց և տեսակաց վրայ, որ և յաջորդ ցուցակին մէջ պարզ կը տեսնուի.

ՅԱՅՏԱՍԱՅԵՌԻՔ

Կարգ Ա. — Պատմասերմանց

Դասս Երկարլթակաց	<td>Ա. Անթերթ</td>	Ա. Անթերթ
	Բ. Միաթերթ	
	Գ. Բաղմաթերթ	
Դասս Միարլթակաց		

Կարգ Բ. — Մերկասերմանց

Դասս Կոնարերաց
Դասս Արմաւենապտերաց

ԳԱՂՏԱՍԱՅԵՌԻՔ

Կարգ Գ. — Լիսանօրատոր բոցոց

Կարգ Դ. — Խորշատոր բոցոց

Նույնիւան: 1815ին Գաղղից խռովութեանց պատճառաւ հրաժարեցաւ իր պաշտօնէն և դարձաւ ի՛ Ճինեւուա, յորում մեծ ընդունելութիւն գտաւ. հոս սկսաւ նոր եռանդամը մը աշխատիլ և դասախոսութիւններ ընել, ի՛ լսու ընծայելով Բնակութիւն բուսառաբութեան բուսառաբութեան: Առաջ 1841:

2 Ծովութիւն կ'ըսուին այն երկարլթակ բոյսք, որոց պսակն բազմաթերթ է, և առէջը ընդունարանին վրայ են: — Ծովութիւն կ'ըսուին այն երկարլթակ բոյսք, որոց պսակն կամ բազմաթերթ է և կամ միաթերթ, և առէջը բաժակին վրայ են: — Ծովութիւն կ'ըսուին այն երկարլթակ բոյսք, որոց պսակն միաթերթ է առէջաբեր և ընդունարանին վրայ շարաթերթ: Միաժամանակ կ'ըսուին այն երկարլթակ բոյսք, որոնք կամ մէկ և կամ ամեններն պարագալիկ չըսուին:

ՅԱՅՏԱՍԵՌԻ ԲՈՅԱՔ

Ա. ԿԱՐԴ. — ՊԱՏՃԱՆԵՐՄԱՆ

100. Պատճաներմն բուսոց ձուարանն այնպէս կազմուած է՝ որ գոյ անօթի մը կը նմանի, յորում կը բովանդակին սերմանք: Բեղմանաւորութիւնն կը կատարուի ընդ մէջ կնքոյն, որ ընդուներով բեղուն փոշոյ հատիկները՝ կը տանի մինչև ՚ի ձուիկս: Պատճաներմք զանուզան անօթներ ունին և մասնաւորապէս՝ խռախափողք. տերևնին լի են բերաններով, իրենց բաժակն և պսակն կը լինապատեն պտղաբերութեան գործարանները:

Դաս Երկարլրակաց

101. Երկարլրակ բուսոց գլխաւոր բնադրումք հիմնեալ են երկու բլթակաց վրայ. սակայն կը ճանչցուին նաև որիշ մասնաւոր յատկութիւններով, զորս ոչ միարլթակ և ոչ անբլթակ բոյսք ունին: Ընդհանրապէս այս դասու ցօղունն բազմամիւղ է, երբեմն խոտային և շատ անգամ փայտային. կը կազմուի անօթաւոր նեարդային խորձերէ ծուծին չորս դին՝ շարուած համակեղրան կարգերով, որոց թիւն բուսոց տարիքը կը ցուցընէ, և կ'ըսուին փայտային կարգք. առնք երկայնաձեւ զլաններ կամ կրներ են՝ իրարու մէջ ադուցուած, և որոց արտաքին մակերեւոյթն կ'ըսուի կեղեւ: Տերեք բերանակից զղերով են, ատամնաձեւ, հերձեալ և մեծաւ մասմբ բազմազեալ: Բաժակը և պսակը շատ անգամ իրարմէ տարբեր են, որոց բաժանմունքն հինգ կամ հնգին բազմապատիկ թիւ մ'է, ինչպէս նաև առէջք և սերմանափակք. արմատքն ընդհանրապէս ուղղարմատ են:

Այս առաջն դասն շատ ճոխ է և միանգամայն կարևոր բոլոր բուսոց մէջ, բովանդակելով բազմաթիւ տոհմ, ազգ և տեսակ, որոնք կը նան ըլլալ Անթերթ, Միաթերթ և Բազմաթերթ:

Անթերթ երկարլրակ բոյսք

102. Երկարլրակ բոյսք անթերթ կ'ըսուին՝ երբ պսակն պակաւելու ըլլայ. բայց որովհետեւ այս տեսակ բուսոց մէջ պտղաբերութեան գործարանք անջատ անջատ են իրարմէ, այս ինքնէ, առէջք մէկ բուսոց վրայ կը գտնուին և սերմանափակք ուրիշ բուսոց մը վրայ, կ'ըսուին նաև Միասն կամ Երկինեց, որ կը նշանակէ թէ երկու մահին ունին: Այս անթերթ երկարլրակաց առաջն և գլխաւոր կը համարուին կայծփայինք:

Տոնմ կայժիշայնոց

103. Կայժիշային բոյսք մեծ ցօղուով և երբեմն կարճ բունով ծառեր են, խողանով և փափոխ տերեւօք, որոնք սովորաբար պարզ են և դիրաթափ. ծաղիկնին միասեռ, մենատուն, երկատուն, քիչ անդամ արու և էգ: Առէշաբեր ծաղիկն՝ որոնք կատուիկի ձեռով են, ունին սահմանաւոր, շարամերձ կամ աղատ, ու երբեմն անկոթուն առէջք. իսկ իդաբեր ծաղիկն՝ աղատ կամ շարամերձ, պարզ կամ բաղադրեալ ձուարան մ'ունին, որոց բջիջք, ձուկիք, ծիկք և կնիք՝ այլ և այլ են թուով, պատենով կամ առանց պատենի, պտուղն կ'ըլլայ երբեմն խոզկաղնի, երբեմն կրնոն, երբեմն ընկոյլ և երբեմն սամարա:


Կայժիշայինք երկիխ ամէն կողմն կը գտնուին. Հայաստանի անտառաց մէջ և շատ բլրոց վրայ լի են այս տոհմի ծառերէն, և որովհետեւ շատ ճոխ է և զանազան այս տոհմ, կը բաժնուի յայլ և այլ ցեղա, զոր օրինակ.

Տաշուակարեր՝ որոնք փոփոխ, վազանցիկ, պարզ, ատամնաձեւ, երկայն տերեւօք թուփեր կամ ծառեր են. ծաղիկնին մենատուայ են. առէշաբեր ծաղիկք գլանաձեւ կատուիկք են, և ունին աչն 20 առէջք բաժակին թեփի մը վրայ շարամերձ. իսկ իդաբեր ծաղիկք, զատ զատ կամ երկու երեք իրարու հետ միացած են պատենի մը մէջ. ունին շարամերձ ձուարան մը 2 կամ 5 բջիջով և նոյնչափ ծիլովք: Պտղոյ պար-

կուճն շատ մեծ է, երբեմն խոստացին, երբեմն կաշեայ կամ փայտացին, երբեմն վշեր դուրս կը ցցուէ և կը պատէ ամբողջ պտուղը, և է քառատիփ. պտուղն անինքնարաց է. միաւ խինձ, միասերմն: Այս ցեղն հասարակածի տակ քիչ կը գըտնուի, ընդ հակառակն 'ի բարեխառն գօտիս շատ առատ է: Այս ցեղի գլխաւոր ազգը են Նշգարի, Արքակաղնի, Թեղոշ, Ոփի, Մաշկամրգի, և այլն, որոց տեսակը անթիւ են և բարձր լերանց վրայ ալ կը բուսնին և լաւ յառաջ կու գան:



ԶԿ 159. Արու կանեփենի:




ԶԿ 160. Եդ կանեփենի:

Բնկուզենիք' բարձր ծառեր են, բաղադրեալ, փոփոխ, վաղանացիկ, հոտաւէտ տերեաք, միասեռ ծաղկաք. առէշաբեր ծաղկեն կրնաձև կատուիկը ունին, որոց իւրաքանչիւրն ունին 56 առէշք կը կրեն. իսկ իգաբեր ծաղկեն ծուզուակէ:

159 Chanvre femelle. — 160 Chanvre mâle.

նին երկու ծիլով բաժակին հետ միացած. պտուղը մասուէ, որ կը կազմուի 'ի գալար կեղեռյ ընկուզոյ և 'ի փայտացին կորիզէ մը, երկատիփ, քառախինձ թերի կերպով: Այս ցեղն իւրաքանչ մեծա մասամբ հիւսիսացին Ամերիկա կ'աճին. միացն քանի մը տեսակը կը գտնուին յԱսիս. որուն գլխաւոր ազգն է Ընկուզի ծառն, որոյ տեսակը հՅէն աւելի են. հասարակ Ընկուզենի որոյ հայրենիքն է Պարսկաստան. հնուց 'ի վեր բնական եղած է և լաւ յառաջ կու գայ նաև յԵւրոպա:

Թիստենիք' բարձր ծառեր կամ թռւիեր են (ԶԿ 157), վաղանցիկ, հակաղիք, փոփոխ, ատամնաձև և կիսահերձ տերեաք. կատուիկը աշնան կը սկսին ծիլ, և կը լրանան գարնան տերեւներէն առաջ. ծաղկեն մենատնեայ են, առէշից



ԶԿ 161. Տերե կնձնուոյ:

մանրաթեկք կարծ են, աղատ կամ կից երկու երկու վարէն. սրսիկը միախորշ կամ երկախորշ են. իգաբեր ծաղիկքն շունին բաժակ, ծուարանն անկոթուն, աղատ և երկու բջիջով է, որոց իւրաքանչիւրն մէկ ծուիկ ունի. երկու երկայնաձև ծայրաւոր կնիք ունին. պտուղը փոքր է, չոր, անինքնարաց, միաւ խինձ, միասերմն. սաղմն անսպիս: Այս ցեղն երկու ազգ կը բովանդակէ, Յարասի և Լաստենի:

Ուսենիք' ընդհանրապէս բարձր ծառեր են, բայց կան նաև թփի տեսակը ալ. խողանով, փոփոխ, պարզ և վաղան-

161 Feuille de l'orme.

ցիկ տերմազք են. ծաղիկը միասնու են և կատուիկի ձևով, ու բոնք տերևներէն առաջ կը բուսնին կամ տերևոց հետ. առէշարեր ծաղիկը մենատնեայ են, և կը բուսնին թեփային թիթեզատերևս անթէն. առէշը շէն 12 և աւելի են, աղատ և երբեմն իրարու հետ միացած մանրաթեփւք: Խղարեր ծաղիկնց իւրաքանչիւրն ձուարան մ'ունի, անկոթուն, աղատ միարջիջ, երկու կարճ ծիլով և երբեմն մի միացն կնքով. պըտուղը փարք է, ինքնարաց, բազմասերմն, սերմունքն փոքր են և անսպիտ: Այս ցեղն երկու ազգ ունի, Ուռենի և Կաղամախ, որոց տեսակը հարիւրէն աւելի են:

104. Օդտակարուրիշներ կայծաղային տոհմին. — Այս տոհմիս քանի մը տեսակը թէ մարդուս և թէ անասնոց պատուական կերակուր կը մատակարարեն, ինչպէս Մաշկամիրդ, Արքակաղնի, Խոզկաղնի, և այն. բայց այս տոհմին գլխաւոր օգուտն կը կայանայ վառելու և արուեստի ընտիր փայտ տալոն մէջ. զոր օրինակ Հաճարի, Ընկուզի, Կազամախի, Լաստենի, Ուռենի և զանազան կաղնիք: Ի Գաղղիա, 'ի Սպանիա, 'ի Բորդուգալ և 'ի Կիլիկիա' կայ տեսակ մը կաղնի, որ կ'ըսուի կարմրաբեր կաղնի, յորմէ կարմիր ներկ կը հանեն պատահ կարմիր տեսակ մը կաղնի, և այլ գործածական նիւթեր կը շնուին: Կայծաղային օգուտ կ'ըրբին կրային երկիրներու մէջ կը գտնուին:



Զե 162. Թթւնի:

Տոհմ Եղիձննեաց

105. Ոմանք բարձր ծառեր են, ոմանք ալ խոտային բոյսք, միամեայ կամ երկամեայ. այս տոհմն ալ շատ ընդարձակ է և կը բաժնուի յայլ և յայլ ազգս, որոց տիպն է Եղիձ: Ընդհանրապէս Եղիձն անմշակ տեղուանք կը բուսնի. որոց ցողունն ու սոսքն քառակուսի են, տերեքն պարզ, հակագիր, սրածայր, բաժանեալ, ատամնածև և կարծր մազերավ, որոց եթէ դպչելու ըլլանք՝ կը խայթեն, ու խայթուած տեղն կ'ուռի և կը ցաւի. կան նաև այնպիսի տեսակիք, որոնք շատ վնասակար են և մինչև մահ ևս կը պատճառեն:

Եղիձննեաց մեծ մասն հասարակածին տակ կը բուսնի, և որշափ հասարակածին հեռանանք՝ այնշափ տեսակներն ալ կը նուազին: Այս տոհմի գլխաւոր ու կարևորագոյն ազգք են.

Հացասպոնիք՝ որոնք 15 կամ 16 մէդր բարձրութեամբ ծառեր են, որոց ծաղիկն մենատնեայ են, կատուիկի ձեռվ շարուած, տերեկն երկայն և հերձեալ. պտուղն՝ որ կարեսորագոյն մասն է ծառոյս, շատ մեծ է և կը կըսէ քանի մը հազարակամ (Զե 158). պարկուան գեղին է, իսկ մէջն սպիտակ, և կը բուսնի Խաղաղական ովկիսնոսի կղզեաց մէջ, յորում տեղացիք իրրև հաց կ'եկին և կ'ուռեն, որոց համն ձիւք ցրենց հայի պէս է: Այս ծառոյն կեղեներէն ճարտար արուեստով մը ազնիւ ու դիմացկուն կտաւ և ուրիշ զգեստեղինաց վերաբերեալ բաներ կը շննեն տեղացիք. իսկ փայտն ալ կահ կարստեաց համար կը գործածեն: Այս ազգի կը վերաբերի նաև Կաթնածառն, որոց ցօղունի վրայ զանազան հատումներ ընելով կովու կաթի նման կաթ կու տայ, և տեղացիք կը գործածեն զայն փոխանակ կովու կաթին:

Թթեկիք՝ մշտառե միջակ ծառեր են, հերձեալ, պարզ և ձեռնաջիղ տերեօք, որոց ծաղիկը միասեռ ու արուեստ են, մսու ընդունարանի մէջ զետեղուած. առէշարեր ծաղիկը եռափերթեայ բաժակ մ'ունին և երեք առէշը ունին մանրաթելիք, որսիկը երկախինձ են. իսկ իգաբեր ծաղիկը հնդափերթեայ բաժակ մ'ունին, մէկ սերմնափակով, որոց ծուարանին վրայ ծիլ մը կայ երկահերձ կնքով. պտուղն ամենա-

փոքր անբացիկ մ'է, սերմն մսուտ սպիտով, յորում սաղմն ծռած է. զանազան տեսակ ունի, ինչպէս Պենկալի թղենի, Հնդկաստանի թղենի, Ճանտաթղենի, և այլն:

Կաևափենիք՝ խոտային և միամեայ բոյսք են, ուղիղ ցողնով, հակադիր, հերձեալ և ատամնաձև տերեաօք. ծաղիկք



24. 163. Աբարբեռն. — Euphorbe.

փոքր են, կանաչագոյն և երկատնեայ. առէշաբեր ծաղիկք ողկուզաձև են, (Զե 159). Խսկ իգաբեր ծաղիկք հասկաձև (Զե 160): Այս ազգն երկու գլխաւոր տեսակ ունի, կանեփ և Գայլուկ. կանեփի տերեկք թմբքեցուցիչ հիւթ մ'ունին, որ

շատ զօրաւոր է քանի մը զանազանակաց մէջ և մանաւանդ Հնդկաստանի կանեփի մէջ, որ յԵգիպտոս և յԱրաբիա շատ յարգի է:

Կանեփիք՝ մեծամեծ և երկարակեաց ծառեր են, փոփոխ, ձուածե, ողոցաձև տերեկօք (Զե 161). ծաղիկք արուեէդ են և անթաւոր, բաժակն 5 կամ 9 բաժանմամբ. առէշք գրեթէ 5 են, բայց կրնան ըլլալ 4-8 բաժակին վրայ. սրիկք երկախինձ են, ձուարանն ազատ է երկու լայն ծիլով, պտուղը սամարա է միախինձ և միասերմն, (տես Զե 143): Այս ազգին կը վերաբերի լտունի, և այլն:

Թրենեփի՝ նոյնակէս մեծամեծ տունկեր են. Զինաստանէն 'ի Սիկիլիա բերուած է, և անտի տարածուելով հարաւային Եւրոպիոյ մէջ շատ լաւ յառաջ կուգայ (Զե 162): Ասոր տեսակ մը կայ 'ի Ճաւա, որ սաստիկ թռնաւոր հիւթ մը կը բովանդակէ, յորում տեղացիք նետերնին թաթխելով կը նետեն թշնամեաց վըրայ և կը թռնաւորեն:

106. Օդուկաբուրիւնք եղիանեաց տոնինին. — Այս տոնմբն օգտակարութիւնքն յայտնի կը տեսնուին վերոյիշեալ նկարագրութենէն, որոց նախ մեծա-

գոյն մասին պտուղք համեզաճաշակ են և միանգամայն անընդարարք, ուստի և վաճառականութեան մեծ շահ. Երկրորդ՝ քանի մը ազգաց տերեքն, զոր օրինակ թթենեաց, անթիւ նոխութեանց ազրիւ են, մետաքսի որդի միակ կերակուր ըլլալով. Երրորդ՝ կանեփի կեղևային նեարդք ևս շատ մեծ օգուտ ունին մարդուս, յորմէ զանազան գործածական նիւ-



24. 164. Մատիտեղ գեղձային:

թեր կը շինեն, ինչպէս լաթեղէններ, գորդեր, չուաններ, և ուրիշ կահ և կազմածք. կը հանեն նաև ասկէ վառելու ձէթ: իսկ Գայլուկն՝ որ շատ կը մակաւի յԱնդղիա, 'ի Գերմանիա, 'ի Գաղղիա, կը գործածուի գարմէրոյ շինութեան համար: Նաև փայտի կարծրութեան կողմանէ, բայց 'ի քանի մը տեսակէն, շատ ընտիր է, և կը գործածուի թէ՛ վառելու և թէ շինուածոց համար:

Անթերթ երկարթակ բուսոց մէջ կան նաև այնպիսի տոհմք, որոց ծաղիկը բոլորովին արուեէդ են, այս բոյսերը 'ի նախլնթացից որոշելու համար կը կոչուին Միազնոց, այս ինքն մի միայն մահճա ունեցողք, որոնք առաջնոց պէս շատ են:

Սոհմ Սղանզաց

407. Այս տոհմի բոյսք ընդհանրապէս Ամերիկայի տաք կլիմայի բոյսք են, սակայն կը գտնուին նաև 'ի Արկտիքա և 'ի Հարաւային Եւրոպա. սովորաբար միջակ մեծութեամբ ծառեր են, որոց վերածին առէշք եէն 42 են, սրսիկը անկոթուն, ծիլը կարճ մէկ կնքով, բաժանեալ 'ի 6 կամ 'ի 4 խմնած. բաժանեալ շարամերծ է ծուարանի. պտուղն մոտ և ինքնարաց է, տերեք փոփոխ և պարզ են, արմատք դառն և մաքրողական. և ունի շատ տեսակք:

Տոհմ Արարից

108. Այս տոհմի բոյսք կրնան ըլլալ թէ ծառեր, թէ թռւփեր և թէ խոտային տունկք, որոց առէշք ստորածին են զատ զատ և կամ շատ անգամ մէկ խուրծ եղած. տերեք ձեռնաշիղ, բաժանեալ, փոփոխ, ծաղկումն ողկուզածե, ծաղիկը միասեռ են, բաժակն ընդհանրապէս միափերթ, պասկն կամ կը պակասի և կամ բազմաթերթ է. առէշք փոփոխական են, սրսիկը երկախինձ. իգարեր ծաղիկք 2, 5 և կամ շատ ծիլով են: Կը նիկն երկաշուրթն է. ծուարանն ազատ է քանի մը թիջներով. երկու կամ երեք ձուփիկօք, թանձր, մոտ և խւային վերնաւ մաշկով. պտուղը չոր է կամ քիչ մը մոտ. սաղմն շրջասերմն ունի: Ասոնցմէ շատերն կաթի նման դառն հիւթ մ'ունին, որ

թժշկութեան մէջ շատ գործածական է, ինչպէս Տղկաղատ, Տօսախ, Մանիսլի. կան նաև ուրիշ տեսակք ևս, որոնք աւմենայն կերպով կալսուոյն կը նմանին. (Չկ. 165): Այս տոհմի բոյսք շատ առաջ կը գտնուին հասարակածային Ամերիկացի մէջ, ինչպէս նաև 'ի Բարեյսուոյ Գլուխն և յԱսիա. իսկ յԵւրոպա քանի մը տեսակ միայն կայ: Աբարբից շատը թունաւոր է, ինչպէս Ճանտախնձոր, և այն:

Տոհմ Մարդեենաց

109. Մեծամեծ ծառեր են, փետրաջիղ, փոփոխ, վաղանցիկ, երկայնաձև և ամբողջ տերեւօք. բաժակը և կամ 6 բաժանմամբ է և նոյնչափ ինքնաբաց որսիկներ ունի. ծուարանն ծիլով մը կը վերջնայ, որոյ վրայ կայ պարզ միախնձ կնիք մը, յորում կը կախուին մէկ կամ երկու ծուիկք. պտուղը մասու է և միասերմն, սաղմն առանց շրջասերման: Այս տոհմի աղջք են Դափնիք, Կինամումն, Քարկսարուկ, Զըրմբատ, և այլն. և որոց տեսակք 400էն աւելի են: Այս տոհմի մէջն միայն տղնուական Արդենին կ'ածի յԵւրոպա, իսկ միւս ամէն տեսակներն յառաջ կու գան հասարակածային զոլ տեղուանք:

Տոհմ Մատխուեյի

110. Մատիտեղք մեծաւ մասամբ խոտային բոյսեր են փոփոխ և ամբողջ սրտաձև տերեւօք, որոց կոթունն պատենի մէջ է ինչպէս կը տեսնուի Մատիտեղ դեղայիլն ծառոյն մէջ, (Չկ. 164). բաժակն հինգ բաժանմամբք է և նոյնչափ առէշներով. ծուարանի վրայ 2, 5, 4 ծիլը կը գտնուին ազատ կամ իրարու հետ միացած, երբեմն շատ կարճ են, պարզ միախինձ կնքով մը. պտուղն անբացիկ մ'է, սաղմն ուղիղ և շրջասերմամբ: Այս տոհմի բոյսերն ամէն տեղ կը գտնուին, որոց գլխաւոր աղջք են Թրթնջուկ, Աեւաւ ցորեն, Գար, և այլն. իսկ ասոնց տեսակքն շատ են, ինչպէս Թրթնջուկ փաքր, մեծ, կլոր, և այլն, որոց տերեւներն և մատղաշ բողբոջներն կ'ուտուին:

Տոհմ Դրամատևսակաց

144. Այս տոհմի բոյսք խոտային են, դետնատող կամ մազըլցող ցոլով. աերևք ձեռնաժիղ, բլթակաւոր. բաժակն հինգ



Զւ 165. Մշկենկոյ. — Muscadel.

ատամամբք, առէջք հինգ են կորածե սրսիկով մը, և շատ անգամ երեք խմբի կը վերածուին, սերմնափակն ձուարանի հետ

կը միանայ. ծիլը կարծր է, իսկ կնիքն թանձր է թաւշային. ձուիկք կողմնակի երեք պլակինդայից վրայ կը կախուին. պըտուղն երբեմն շատ մեծ է և տձեւ. այս տոհմին ազգք են Սե-



Զւ 166. Լայքունի եղեմթուտ :

Զւ 167. Եշերդ:

Խենիք, Զմերուկք, Վարունդն, Դրում, և այլն, որոնք մշակութեամբ և հողոյ տարբերութեամբ շատ կը փոխուին:

Տոհմ Մշկենկոյի

145. Մշկենկոյի հասարակածային բոյսեր են, որոց զիխաւոր ազգն է Հնդիկ ընկուղենի համեմաւոր, (Զւ 165): Այս բոյսն միջակ ծառ մ'է, զարմանալի է իր կանաչութեամբ ու ճիւղոյ կանոնաւոր աճմամբն. ծաղիկք փոքր են ու դեղ-

նագոյն, տերեւք ամբողջ, փոփոխ և սրտածել են. պտուղը մսոտ է, միախինձ, միասերմն, որոյ արտաքին մասն դալար, պարարտ ու սպիտակագոյն է և երկուքի կը բացուի, մէջը պնդացուցիչ հիւթ մ'ունենալով. այս արտաքին պատճեանն չորցնելով կը ծախուի վաճառականութեան մէջ Մասի անուամբ. իսկ ներքին կորիզն ընտիր համեմ է կերակրեղինաց համար: Այս բայսն Մալեզից կղզեաց մէջ կ'աճի, բայց կը գտնուի նաև 'ի Գաղղիա և այսուր:

Ասոնցմէ զատ կան դեռ ուրիշ տոհմեր, ինչպէս Սագախոտը, որոց ազգք են Շոմին կամ Սպանախ, ձակնդեղ, Լայքունի եղեմնուտ, որոց սերմոնք կարմիր հիւթ մ'ունին և կը գործածուի շաքարեղինաց մէջ և զգինի ներկելու համար. (Ձև 166): Գիշերածինք, որոց զիսաւոր ազգն է Գիշերազուարճ:

Միարեր Երկարլրակ բոյսք

113. Երկարլրակ բոյսք կ'ըսուին Միաթերթ, երբ պտակին թերթերն քիչ շատ իրարու հետ միացած ըլլան և միակուոր երկեն: Միաթերթք ևս շատ կարեսոր և ճոխ տոհմեր, ազգեր և տեսակներ կը բովանդակեն, որոց զիսաւորք են.

Տռմ Բարդից

114. Այս տոհմն ամէնէն կարեսոր և ճոխագոյն կը համարուի, այնպէս որ բոլոր ծանօթ եղած բուսոց տասներորդ մասն կրնայ ըլլալ, և որոց տեսակք 9000էն տաելի են: Ընդհանրապէս խոտային, միամեայ և դալարագեղ տունկք են. սակայն կան կիսափայտային և բարձր ծառեր ևս, այլ շատ քիչ: Այս ընդհարձակ տոհմին մէջ ծաղիկք զարմանալի զիրք մ'ունին, սցսինքն զլուխ մը կը ձևացնեն և ամրող մէկ ծաղիկ մը կ'երեւի, այլ եթէ մօտէն դիտելու ըլլանք, կը տեսնենք որ շատ ծաղիկներէ ձևացած են. ինչպէս լաւ կը տեսնուի Մարգարտածաղկին և վայրի Եղերգի մէջ (Ձև 167), ուստի և Բարդ կ'ըսուին: Մի և նոյն զիսայն ծաղիկն կրնան

ըլլալ արուելէգ, կամ դժապատին ծաղիկքն իգարեր, և կերպոնին՝ առէշաբեր: Բաժակն շատ փոփոխական է, պասկն կանոնաւոր և կամ անկանոն, առէջք շարամերձ են պատկին վրաց, մանրաթելք ազատ և երկախինձ սրսիկք իրարու հետ կը միանան և խողովակ մը կը կազմեն: Իգայք միարջի՞ւ



Ձև 168. Հազարտերևեան:



Ձև 169. Ասփուր:

ձուարան մ'ունին. պտուղն չոր և անբացիկ մ'է, միասերմն, առանց սպիտի, տերեւք փոփոխ են և շատ զանազան ձևերով: Այս տոհմն երկու զիսաւոր յատկութիւն ունի. այսինքն տերեւոց դառնութիւն և սերմանց իւզային ըլլան: Այս տոհմն հին ատենէ 'ի վեր երեւք ցեղի բաժնուած է, այսինքն են Եղերդառնասակք, Շազկողկոյզք և Կանգառասեռք:

Եղերդառնասակք կաթնային հիւթ մ'ունին կաթնասառ անօթներու մէջ, որ դառն, խէժային ու թմբրեցուցիչ է:

168 Achilléa. — 169 Safran hâtard.

Այս բուսոց տեսակաց յատկութիւններն և զօրութիւնն կը փոխուին ըստ տեղեաց և մշակութեան, ըստ մեծամեծ ծառոց, ըստ թիոց և ըստ գործարանաց աճման։ Ասոնց զիսաւոր աղջն է Եղերդ վայրի, (Ձև 167)։ որ թէ՛ ի բժշկութեան և թէ



Ձև 170. Աղուուղակ. — Belladonne.

'ի անտեսութեան կը գործածուի, և շատ անգամ ասոր արմատներն չորցընելով և մանրելով՝ խահուէի տեղ կը գործածուին. ունի զանազան տեսակներ՝ որոց գառնութիւնն նուազ

է։ Երկրորդ աղջն է Հաղար, որ նոյնպէս շատ գործածական է և շատ տեսակներ ունի։ Երրորդ աղջն է Քօշմօրուք և Գողի կամ Սևկեղլեփ որ բաղկի նման է։

Ծաղկույլոյզը բնդկանբասիս գառն սկզբունք մ'ունին ռետինի մը հետ խառնուած։ իսկ արմատքն սաստիկ գառն



Ձև 171. Բանգ. — Jusquiamo.

են, ուստի բժշկութեան մէջ շատ գործածական են. ինչպէս Կգածաղիկ, Վաղենիկ, Գառնամանուկ, Հաղարտերևեան (Ձև 168), որոյ և տեսակը 'ի Կիլիկիա կը գտնուին, և ասոնց տեսակներէն ունանք Զուլցերից թէյի մէջ կը խառնուին։ Անթեմ, Խնձաղեղ, Փանչուկ լւռնական, Խոճկորակ, Ճաղճղուկ, Արևածաղիկ, Մոխրատերև, Գորդինաց կամ Տալլաւ՝

որ շուետացի Տահը բուսաբանին նուիրուած է, Անդրսիկոյէն 1790ին 'ի Մատրիս բերած է Սերվանթէս. նախ պարզ տեսակ էր, ապա մշակութեամբ բարդ եղաւ և անբար զանագանակներու վերածուեցաւ, և այլն:

Կանգառաւաևոք նոյնպէս դառն են, և ատենօք բժշկութեան մէջ շատ կը գործածուէին, բայց արդ թողուած են. որոց գլխաւոր ազգքն են, կանգառ, Ասմիոր, յօրմէ գունաւորիչ նիւթ կը հանեն, և կը գտնուի շատ տեղ, (Զւ 469). Տերեփուկ, որոյ շատ տեսակներ կան. ինչպէս Տերեփուկ կանա, Տերեփուկ ոսկեցըցուն, և այլն:

Ցոհմ Շնախաղողոյ

115. Խոտային և կիսափայտոյին բոյսք են, պարզ, փոփոխ և անխոզան տերևաք. ծաղկումն փոփոխական է, բաժակն միափերթ էինք բաժանմամբ. պսակն միաթերթ անուաձև կամ ձագարաձև, առէջք կարճ մանրաթելիք՝ պըսակին խողովակին վրայ շարուած, սրսիկք երկախինձ. սերմանակն ձուարանէ մը կը բաղկանայ, որոյ վրայէն ծիլ մը կը բարձրանայ լայն կնքով մը. ձուարանն երկու բնիլ ունի, ընդ մէջ երկուց բջիշաց մեծկակ պակինդ մը կայ՝ ին անձեռնուիկոք. պտուղն մսու կամ պատիճ մ'է:

Այս տոհմին գլխաւոր ազգք կը համարուին Գետնախալեռնոր, որ ամէնուն ծանօթ է (տես Զւ 77), որոյ տեսակիք Եւրոպիոյ մէջ միայն 20էն աւելի են. կան ընտիր գետնախիլն ձորք 'ի Քիլի, 'ի Բներու և 'ի Գորտիլեայս, ուսկից մոտած է յԵւրոպա: Ասկէ կը հանեն նաև օղի, շաքար: Պատրիչան, որ գլխաւորապէս Ասիոյ տաք երկրի բոյս է, բայց արդ Եւրոպիոյ հարաւային կողմերն լաւ յառաջ կու գայ, ինչպէս նաև յԱմերիկա. քանի մը տեսակ միայն ունի: Պոլտիկ, որ շատ ախորժելի է և համեմիչ կերակրոյ, որոյ մշակութիւնն շատ տեղ տարածուած է: Իսկ բժշկութեան մէջ շատ գործածական են Շիկատակ և Մանրագոր, որք մշտառև բոյսք են, լերանց վրայ կը բռումին, գեղեցիկ տեսքով, մթին տերևաք, ծաղիկք կապտագոյն են և մոթ, պտուղք ու կեռասի կը

նմանին. պտղոց ունեցած քիչ մը քաղցրութիւնն խարէական է, վասն զի ամենազօրաւոր թոյն են (Զւ 170): Նոյնպէս Բանդ (Զւ 171) և Փշավանձոր բժշկութեան մէջ կը գործածուին և թունաւոր են: Շատ շահաւոր բոյս է նաև Ծխախոտն, զրբ Քրիստովոր Գոլոմպոս բերաւ Ամերիկայէն յԵւրոպա, որոյ շափաղանց յաճախութիւնն որշափ վնասակար է մարդուս



Զւ 172. Եղբառակ:



Զւ 173. Մեղբաձուծ:


գործարանաց, նոյնչափ օգտակար է շափաւոր գործածութիւնն: Այս տոհմին կը վերաբերին նաև Տատուլլակ, Բնեթունիա, և այլն:

Ցոհմ Շրբնաւորաց

116. Միամեւայ և խոտային բոյսք են, որոյ պսակն շըրթնաձև միաթերթ է և գունաւոր, բաժակն միափերթ, բայց

172. Sauge. — 173. Marrube.

վերի եղերբն հինգ մասանց բաժնուած. առէջք երկազօր են, մէկ սերմանափակ քառարջիջ ձուարանով մը, որոց վրայէն ծիլ մը կը բարձրանայ երկափինձ կնքով մը. պտուղն անբացիկ մ է. ցողունն և ճիւղեր սովորաբար քառակուսի են, տերեւք հակաղիք, պարզ, ձուածե, աւամնածե. սաղմն առանց կամ ամենափիշ սպիտով է: Այս տոհմի բուսաց վերնամաշկին տակ լի են փոքրիկ գեղձք. որոց մէջ անուշահոտ խող կը գտնուի, զոր օրինակ Սալուխա (Ձև 172), Զամբուռ, Ուրց, Հազրէվարդ, Թրընխոտ, Հուսամ, Անսնուխ, Չուիրակ. ասանցմէ ընդհանրապէս հոսաւէտ խւեր կը հանեն և վաճառականութեան մէջ երբեմն զուտ և երբեմն ջրափառն կը ծախուին: Կան քանի մը տեսակիք ևս, որսնը կերակրեղինաց մէջ կը գործածուին իրբև համեմունք, ինչպէս Կորդին, Մարդանդու, Շահասպրակ, Մեղրածուծ, Լերդախոտ, (Ձև 173, 174):



Ձև 174. Լերդախոտ:

Տոհմ Զիրեւնեաց

117. Միջակ և մեծամեծ ծառեր են, որոց ծաղիկք կանոնաւոր են և արուեկդ. բաժակը միափերթ շորս ատամամբք, պսակն երկայն փողաձեւ է լայն թերթովք. երկու առէջք ունին, որոց սրափիք երկափինձ են պսակին փողին վրայ շարուած. սերմանափակն երկարջիջ ազատ ձուարան մ'ունի, որոց վրայէն ծիլ մը կը բարձրանայ երկահերձ.

պտուղն ումանց մսոտ է և ոմանց սամարա, ցողունն ուղիղ է, տերեւք հակաղիք և բաղադրեալ: Այս տոհմին ազդք են Զիթենիք, Եղրեւանիք, Հացիք, Յասմինիք:

Զիրեւնիք՝ միջակ ծառեր են, տիսուր տեսպով, մշտադալար՝ որոնք շատ բարգաւատ են յԱփրիկէ, յԱլճերի, 'ի Յունաստան և 'ի հարաւային խոսլիա. ծաղիկնին ողկուզաձեւ է, պտուղը մսոտ են և ձէթ կը հանուի շրջամաշկէն: Ասոր փայտը շատ ընտիր է և գեղեցիկ:

Եղրեւանիք՝ փոքր թուփեր են Ասխայէն տարածուած յԵւրոպա, պարզ և հակաղիք տերեւօք, պտուղն պատիճ մ'է. որոց երկու տեսակ կայ, հասարակ Եղրեւանի և Պարսկաստանի եղրեւանի:

Հացիք՝ մեծամեծ ծառեր են միասեռ, և արուեկդ ծաղկօք, բաղադրեալ վետրաջիղ տերեւօք, պտուղն սամարա մ'է: Եղիպտոսի և Ասիոյ բոյս է, բայց արդ Եւրոպիոյ մէջ շատ տեղ կը գտնուի, թէ դաշտաց և թէ լեռանց վրայ, և տասն տեսակ կը համբուի. ասոնց մէկ տեսակն, այսինքն կը լորատերև Հացի, անոյշ և մննդարար հիւթ մը կը ծորէ ցողունէն և ճիւղերէն, որ ապա օդոյն մէջ թանձրանալով վաճառականութեան մէջ կը ծախուի Մաննա անուամբ:

Կան ուրիշ տեսակք ևս, որոց կեղեկին վրայ այլ և այլ ճեղքեր բանալով կ'ուռնացընեն, և առաստ տերեւ և ճիւղեր կու տան, զոր կտրելով և չորցընելով խոտի հետ կը խառնեն և անսանոց կու տան. շատ ընտիր փայտ կը մատակարարէ թէ վառելու և թէ շնորուածոց համար:

Ցամակիք՝ միջակ ծառեր են, որոնք կը մշակուին թէ իբրենց գեղեցիկ տեսքին և թէ անուշահոտութեան համար, որոց ծաղիկք գեղին և ճերմակ են, յորոց հոտաւէտ խող կը հանուի. ասոնց շատ տեսակք համն:

Տոհմ Կովացնեացուի

118. Խոտային, միամեւայ կամ մշտատե բոյս են, պարզ, փոփոխ և հակաղիք տերեւօք. ստորերկեայ ցողոն և արմատաւոր տերեւք ունին, որոց մէջն ծաղիկն կը բարձրանայ,

(Գև 473). բաժակն միափերթ և հինգ ատամամբք կը վերջանայ. նմանապէս պսակն միաթերթ է, ձագարածեւ և հինգ մասանց բաժնուած են թերթք. 5 առէշք ունին՝ պսակին խողվակին վրայ շարուած. սերմնափակն միարջիջ և աղատ ձուարան մ'ունի, յորում կեդրոնական պլակինդ մը կայ լի



Գև 473. Կովացնծուկ:

ձուիկօք. ձուարանի վրայէն երկայն ծիլ մը կը բարձրանայ. պտուղն պատիճ մ'է, որոյ գագաթն հնդատիփ է, սերմն ի սպիտով: Այս տոհմին զլխաւոր տեսակք են, Կովացնծուկ անցօղուն, Կովացնծուկ ականջուտ, Կովացնծուկ դեղագոր-

473 Primevère.

ծաց, և այլն. որք թէ պարտիզաց, թէ անտառաց, թէ բլոոց և մարգագետնոց մէջ կը բռւնին: Դարձեալ այս տոհմին կը վերաբերին Տղրուկ խոտ (տես Գև 85), Առնասպար հայկական Թաղթ կիլիկիան, Թաղթ պարսկական, և այլն:

Տոհմ Խաղաճչից

119. Մեծաւ մասամբ Ափրիկէի և Ասիայ մէջ կը բռւնին, որոց ծաղիկը կանոնաւոր են, բաժակն միափերթ չորս



Գև 476. Հապալասի:

Գև 477. Ապթիք:

մասանց բաժնուած, պսակն զանազան ձևերով է, երբեմն զանդակածեւ և երբեմն թերատածեւ. ութ առէշք ունին, աղատ և ընդունարանի վրայ շարսուերծ. սերմնափակն աղատ ձուարան մ'ունի, որոյ վրայէն նուրբ ծիլ մը կը բարձրա-

476 Airelle. — 477 Arbousier.

նայ մէկ կնքով. ձուարանն քառարջիջ է, մէջը պլակինդ մը կայ լի անձեւ ձուի կօք. պտուղն ինքնաբաց պատիճ մ'է. այս տոհմիս կը վերաբերին Հապալասի (Ձև 176), Խալմնջ ողնաւոր, Մաթզի (Ձև 177), Ցախ, ինչպէս նաև Մրոսավարդ և Ծիփին, որոց բազմաթիւ տեսակն Կամելեայց հետ՝ զարդք են պարտիզաց:

Տոհմ կամրեղինից

120. Իրենց գեղեցիկ և զանազան գունովք գեղեցիկ զարդք են պարտիզաց. որոց ցողունն ուղիղ է, տերեք անկոթուն, ձուաձեւ, նիզակաձեւ, հերձեղորոտ. ծաղիկը կանոնաւոր, արուեէց. բաժակն հինգափերթ և իրարու հետ միացած. պսակն զանգակաձեւ շուրթն հինգ մասանց բաժնուած. առէջը դրեթէ գինդ են. տպատ և շարամերձ պատկին հետ մէկտեղ բաժակին խողովակին վրայ. սրիկը երկախինձ են. սերմնափակն շարամերձ ձուարան մ'ունի, որոց վրայէն ծիլ մը կը բարձրանայ, որ սովորաբար 5 կամ 3 կնքոց կը բաժնուի. ձուարանն 5 թիջ ունի. պտուղն կողմնակի բացուող պատիճ մ'է: Շատ տեսակ են կանթեղնիճք. զոր օրինակ, կանթեղնիճք գեղձատերև, բրգաձեւ, բաղեղատերև, ծնծղաձեւ, պատուակ, խստատերև, սիզատերև, և այլն:

Տոհմ Տորոնից

121. Միամեայ, երկամեայ և մշտագալար բոյսք են, որոց տերեք անկոթուն են՝ պարզ, հակաղիր, նիզակաձեւ ու կողմնակի երկու ծեղով. ծաղիկը կանոնաւոր են ու արուեէց. բաժակն 4 կամ 6 ատամամիք, պսակն միաթերթ և ձագարաձեւ, շուրթն 4 կամ 3 մասանց բաժնուած. առէջը և կամ 3 են շարամերձ պսակին խողովակին վրայ. սրիկը երկախինձ են, սերմնափակն շարամերձ ձուարան մ'ունի, որոց վրայէն ծիլ մը կը բարձրանայ երկու կնքով. պտուղն երբեմն անբացիկ է, երբեմն մսոտ և երբեմն պատիճ: Այս տոհմին կը վերաբերին Տորոն (Ձև 178), որոց արմատին գեղե-

ցիկ կարմիր գոյն կու տան, Խահուենի, Հինայ, Ոսկիտակ, որոնք մէկմէկէ աւելի օգտակար բոյսք են մարդկութեան, և մեծ շահ կ'ընձեռնեն վա- նառականութեամբ: Խա- հուէի ծառն Արարիոց բոյս- մ'է, (Ձև 179). Արարիոցէն ՚ի Հնդկաստան և անկէ յԵրոսլա անցած է, որ չերմանոյներու մէջ միայն յառաջ կու գայ: Խահուէի տունկն բոլոր տարին ծա- ղիկ կու տայ, բայց աւելի գարնան և աշնան: Ծա- ղիկն ճերմակ է և հոտա- ւէտ ու քանի մը օր փայ- լունութիւն մը կ'անենայ. պտուղն ծաղիկին մէջ է, որ նախ ճերմակ՝ վերջը գե- ղին՝ ետքն ալ կարմիր կ'ը- լայ կեռասի պէս: Երբոր պտուղներն կը սկսին կար- միրէ, անսոնց մէջն հա- սածներն կը քաղուին. հա- զիւ թէ բոլոր պտուղներն քաղուին, տունկն նորէն կը սկսի ծաղիկի՝ իրեւ թէ գեռ պտուղն տուած շըլլար:

Խահուէի ծառն շատ տեղ կը մշակուի, բայց մասնաւո- րապէս յԱրարիա, 'ի Ճաւա, 'ի Սէլլան, 'ի Սուրինամ, 'ի Վայէննա և յԱնտիկան կղզիս սակայն ամէն կիմայի Խա- հուէներն ալ իրարմէ տարբեր են յատկութեամբք. ամէնէն ազնիւն ու յարգին Եմէնի և Մօքային Խահուէն է, յետոյ կու գայ Փայէննայի, և այլն:

Նշնպէս շատ օգտակար բոյս է Հինայ, որոց կեղեն պարբերական տենդի միակ գեղ է. 'ի սկզբան այս ծառոց



Ձև 178. Տորոն:

անտառներն միայն 'ի Բերու և 'ի Պլասդիլ կային, որք հետ-
զհետէ գործածուելով և տեղացւոց անհոգաթեամբ՝ պիտի
սպառէին, եթէ Գաղղիացիք և յետոյ Անդիացիք՝ Հինայի



Ձև 479. Խաչուենի. — Casier.

սերմունքը չտանէին 'ի Ճաւա և 'ի Մալապար կղզիս, յո-
րում արդ միլիոնաւոր ծառեր կը համրուին և են իրաւացնէ
մեծ ճոխութիւն նոյն տէրութեանց համար: Այս տոհմին աղդ
է նաև Մարդամարօս կամ Խստուկ (Ձև 480), որոյ տեսակը
միայն 'ի փոքր Ասիս 30էն աւելի են:

Բագրմարերը երկարլրակ բոյսը

122. Երկարլթակ բոյսք բազմարերը կ'ըսուկին, երբ պատկն
յայլ և յայլ թերթից բաղկանաց, որոյ գլխաւոր տոհմիք են

Վարդաձեք, Ընդարերք, Գիմերերք, Մողուազիք, Խաչաձեք,
Մեկոնասեք, Լոկուսաժալիք, Խասաժալիք, Հոլանեկա-
ձեք, և այլն, որոյ առաջին երկու
տոհմիք ըստ գոռութեան առ Գան-
տոլի, Ծաղկաբաժակք են, իսկ վեր-
ջին վեց տոհմիք Ծաղկածին:

Տոհմ Վարդաձեք

123. Ոմանք խոտային և ո-
մանք ալ մեծ ծառեր են, մեծաւ
մասամբ արուեէգ ծաղկօք. տե-
րենին փոփոխ, ձուածե, ատա-
մաձե, յաճախ բաղադրեալ և
շատ տեսակաց մէջ դիւրաթափ է.
զանազան ծաղկումներ ունին. բա-
ժակն է բաժանմամբ է, ազատ կամ
շարամերձ ձուարանի վրայ. առէջը
միշտ անսակման, երկախինձ սրբ-
ութիզք. սերմնափակքն քանի մը
հառ են. պտուղն երբեմն մսոտ,
երբեմն անբացիկ և երբեմն իշն-
ձորատեսակ. սերմն անսպիտ է,
բարեխառն գոտեաց մէջ կը բուս-
նին: Այս տոհմիլ շատ ընդարձակ
ըլլալով, բուսաբանք կը բաժնեն 'ի
չորս ցեղու.



Ձև 480. Մարդամարօս:

Ա. Խնձորատեսակիք. Տանձիք, Խնձորենիք, Զղեարենիք. Աեր-
կելի, Ուժատու, Արավուշ, և այլն (Ձև 481, 482, 485):
Բ. Վարդատեսակիք. Վարդ. որոյ տեսակքն և զանազակքն
անթիւ են և ամէն տեղ տարածուած:
Գ. Արհենախորմ. Ելակ, Հզօրուկ, Մորենի. (Ձև 484):
Դ. Նշատեսակիք. Կշենիք, Գեղձենիք, Սալորենիք, Կեռասե-
նիք, Ծիրանենիք, և այլն, (Ձև 485):

180 Asperule.

124. Օգտակարութիւն վարդաձեյց . — Այս բազմաթիւ տոհմիս մէջ շատ օգտակար տեսակք և զանազանակք կը գըտնուին . բառական է յիշել Կովկասու հարիւրթերթեայ վարդը , Հայաստանին՝ որ ծառի պէս կը բարձրանայ , սպիտակ և քիչ




ԶԿ. 181. Տանձենի . — Poirier.

մը դեղնագոյն տերևոք , Դամասկոսին , Ասորեստանին , Ճարսոնին և Եւրոպիոյ անթիւ տեսակք , որք ոչ միայն պարտիզաց զարդք են , այլ և շահաւետ իրենց հոտաւետ խողովն : Այլ քան զվարդ կարեսորագոյնք են մարդուս՝ Տանձենիք և Խնձորենիք , որոց տեսակք և զանազանակք հաղարէն աւելի են . Սերկելի , Զղեարի , Սալորենիք , Կեռասենիք , Դեղձի , Ծիրանի , որ Հայաստանէն տարածուած է յԵւրոպա և այլուր , և երկու տեսակ է , անոյշ կուտով և լեղի կուտով , որ Պարկուկ կ'ըսուի , և այլն . ամէնքն ալ համեզանաշակք են , որոնցմով թէ ըմպելիք , թէ օշարակ , թէ օդի և թէ քաղցրաւենիք կը շինուին : Վարդաձեկց մէջ բժշկական տեսակք քիչ են . առնց բրածոյք երրորդակ հողոց մէջ կը դտնուին :



ԶԿ. 182. Առափուշ . — Aubépine.



ԶԿ. 183. Պտուղ Առափուշ . — Fruit de l'Aubépine.

Տոհմ Բնդարերաց

125. Շատ ճոխ է տեսակօք, որոց ցողունն խոտային է կամ նաև փայտային. տերեւքն սովորաբար բաղադրեալ, փռփոխ և ծեղով են, ծաղիկն երբեմն առանձին են և երբեմն



Զե 184. Փշոտ Ելսակ :




Զե 185. Կեռասենի :

միացած իրարու հետ. բաժակն միափերթ է 5 աստամամբք. պսակն Յ թերթիւք. առէջը ընդհանրապէս 40 են, երբեմն միակից կամ երկակից և շրջածին, զոր օրինակ թիթեռնակերպք. երբեմն շրջածին և յաճախ ազատ. ինչպէս Այսրապեանք. և երբեմն ազատ և գրեթէ ստորածին, ինչպէս Զուարցեանն. Զուարանն պարզ է, միաբջիջ և բաղմաթիւ ձուիկաք.

184 Fraise épineuse. — 185 Cerisier.

պտուղն ունդ է, երկու, երեք և շատ սերմամբք. սաղմն ուղիղ կամ ծռած առանց վերնամղին: Այս տոհմիս բաղմաթիւ տեսակք, մասնաւորապէս թիթեռնակերպք ինչպէս կորնդան, (Զե 186). թէ բարեխառն և թէ այրեցեալ զօտեաց մէջ կը գտնուին. իսկ կոէզք հարաւային կիսազնդին վրայ. Այսրապեանք և Զուարցեանք մասնաւորապէս հասարակածին տակ կը բումնին:



Զե 186. Կորընդան :



Զե 187. Հանդաղուչ :

126. Օգտակարուրիւն ընդեղինաց. — Ընդեղին բոյսք օգտակարագոյնք կը համարուին բոլոր բուսոց մէջ, յորոց թէ բժկութիւնն, թէ արուեստք և թէ 'ի մասնաւորի տնտեսութիւն կենաց՝ մեծամեծ օգուտներ կը քաղեն. ծանօթ է ամենուն Լուրիս, Ոլոռն, Ոսպն, Բակլայ, Ախսեռն, և այլն, որոնք

186 Mélilot commun. — 187 Trèfle sauvage.

ամէն ատեն կը գործածուին՝ ի մնունդ աղքատաց և մեծա-
տանց։ Խոկ բժշկական ու արուեստական տունկը են Խաղի-
ռան, Կակիթիրակ, Գզմաստ, Ալուսյտ, Սպասատ, Խառուսյտ,
Հանգաղուչ, (Ձև 187), Պատկառուկ, Կասիա, յորմէ կը հա-
նեն խէժ արաբական։

Տոհմ Գիներերաց

127. Այս տոհմին գլխաւոր աղջն է Որթ, ճիւղալից ցո-
ղոն ունի, իր խաւարծիլովք կրնայ մերձակայ առարկայից
փաթթուիլ. տերեք ձեռնաջիղ և ձուածե են, երբեմն ծեղով-
ծաղիկը վորք և կանաչ ողկուզածե։ բաժակն շատ կարծ
է, ամբողջ կամ հազիւ ատամանաւոր. պատկն հինգթերթեայ,
հինգ առէշիրք. ձուարանն շատ անգամ երկու բջիջ ունի, ո-
րոց իւրաքանչիւն երկու ձուիկ կը բովանդակէ. ծիլը շատ
կարծ՝ բայց թանձր է. կնիքն երկաշուրթն, պտուղն մսոտ է,
4-4 ուղիղ սերմն ունի։

128. Օգտակարուրիւն գիներերաց. — Գիներեր բուսոց
մշակութիւնն զրեթէ մարդուս հետ մէկտեղ սկսուած է. այս
բուսոց հայրենիքն Վրաստանն է ընդ մէջ Կովկասու, Ա.յ.-
րաբատայ և Տաւրոսի. սակայն մշակութիւնը շատ տարածուած
է, զար օրինակ՝ ՚ի Հռենուեան, Դանուբի, Կասպից ծովու-
եղերս, ՚ի Յունաստան, յԱլճերի, ՚ի Բարեյուսոյ Գլուխն,
՚ի Քիլի, և այլն. բայց ամէնչն յարդի գինիներ են Կախե-
թուն, Երևանու, Պորտու, Մալակայի, Կիլրոսի, և այլն։
Ամենատաք գաւառաց մէջ, այսիքն 29° բարեխառնութիւն
ունեցող երկրի մէջ՝ պէտք է ներմութիւնը չափաւորել, ապա
թէ ոչ պտուղը չհասունցած կը չորնայ։ Հիւսիսային Ամերի-
կայի մէջ շատ քիչ է որթի ծառն. կը մշակեն նաև յԵգիպ-
տոս, ՚ի Նուսիիա, ՚ի Ջին, ՚ի Ճաքոն, և այլն, բայց գինի չեն
շիներ։ Որթի տեսակը անթիւ են, և իւրաքանչիւր տեղ՝ իր
յատուկ տեսակներն ունի, այլ և այլ անուանք։ Այս տոհմի
բոյսք կը գտնուին վերին հողոց մէջ։

Տոհմ Մողոշից

129. Թէ խոտային, թէ կիսափայտային և թէ մեծամեծ-
ծառեր են. շատ ճոխ է տեսակօք, բայց այնպէս որոշ և յա-
տուկ բնազրոցմ ունին, որ դիւրաւ կը զանազանուին ուրիշ
բոյսերէն։ Այս տոհմի բուսոց տերեկքն պարզ են ըլթակաւոր,
ձեռնաշիղ, փոփոխ և ծեղով պատեալ. բաժակն խարսիմին



Ձև 188. Բամբակենի։

Ձև 189. Բողկ։

մօտ թիթեղատերեկի ունի. պատկն կանոնաւոր է, հինգ
թերթիւք. առէջք շատ են, մանրաթելիւք ՚ի մի խողովակ
ժողովուած. ծիլք այլ և այլ են, երբեմն մէկտեղ, երբեմն ա-
զատ և պարզ կնքով մը կը վերջանան. պտուղն բազմախինձ

պատիճ՝ մ'է, լի միամիզն սերմամբք, և ասոհք ուղիղ սադմն ունին ծռած բլթակաք: Այս տոհմի բոյսք մասնաւրապէս կը գտնուին չերմ զաւառաց մէջ, քիչ է բարեխառն գոտեաց մէջ, իսկ ցորտ երկրի մէջ ամենեին չկայ:

130. Օդուակարուրիւն մեղոյից. — Այս տոհմին շատ տեսակաց մէջ խիժայնութիւն մը կայ, որով բժշկութեան մէջ կը գործածուի իբրև կաղիչ. զոր օրինակ Տուղտ, որ լիսին ունի այս յատկութիւնը, մանաւանդ արմատն. զոր եփելով զովացոցից և մեղմիչ վիրաց ըմպելիք մը կը պատրաստուի: Նոյն յատկութիւնը ունի նաև կղորատերել Մոլոց ու վայրի Մոլոց, որոց տերեք և ծաղիկը եփուելով օգտակար ըմպելիք կը շնուին: Այս տոհմիս կը վերաբերի նաև Բամբակենի, (Զե 188), որոյ շատ տեսակներն աւելի տաք երկիրներու մէջ կը բուսնին, բայց ամէնքն ալ նոյնպէս յարգի չեն. հասարակ տեսակներն կը բուսնին՝ ի Քալապրիա, ի Մալթա, և այլն, այլ բնտիրներն յԱսիա և յԱմերիկա կը բուսնին: Բամբակենի հին ժամանակէ՝ ի վեր յԵզիապոսէ եկած է յԵւրոպա Մաւրիտանասոց ձեռքով, և հնտղչետէ ամէն տեղ տարածուած է. միայն Գաղղիացիք և Անդրիացիք միլիոնաւոր հազարակամ շմանած բամբակ կը բերեն օտար երկիրներէն և իրենք ամէն տեղ կը տարածեն իրենց վաճառականութեամբ:

Ումանք՝ ի բուսաբանից այս տոհմին մէջ կը դասաւորեն դՔաքասո ծառը, որ միշակ բարձրութիւն մ'ունի, կեղեն կարմրագոյն, տերեկն անկոթուն, ամբողջ և նիգակաձև. ծաղիկներն փրբ են, անհոտ ու դեղնագոյն: Ամերիկայի տաք գաւառաց մէջ կը բուսնի, մասնաւրապէս Կույանայի, Մեքսիկոյի, Մարինեօնի և Քարաքայի ծովեղերքք: Քաքաօի շատ տեսակներ կան սովորաբար վաճառականութեան մէջ գործածականներն են Քարաքայի, Մարինեօնի, Պրաղիի, և այլն. Եւրոպիոյ մէջ 40 միջին հազարակամ կու գայ տարուէ տարի, զոր կը գործածեն չիբոլաթ չինելու համար: Մոլոց տոհմի բոյսք նախաջրէնեղեղեան հողոց մէջ կը գտնուին:

Տոհմ Խաչաձեյց

131. Գրեթէ ամբողջ խոտային բոյսեր են, վոփիս տերեւօք, բաժակն և որոշ և դիւրաթափ փերթիւք է, պասկն քառաթերթ և խաչաձեւ է. վեց քառազօր ու ստորածին առէշք ունին, որոց սրսիկը երկախինձ են. սերմնափակն երկայն ձուարանէ մը կը կազմուի, որոյ վրայէն կարձ ծիլ մը կը բարձրանայ երկախինձ կնքով մը. այս ձուարանն բուսոյ մէծցած ժամանակը երկու բջիջ ունի, իսկ քանի որ գեռ բոյսն մատղաչ է, մէկ բջիջ ունի երկու կողմնակի պակինդովք, որոնք լի են ձուիկօք. պտուղն պատիճ մ'է բազմաթիւ սերմաբք:

132. Օդուակարուրիւն խաչաձեյց. — Այս տոհմի բոյսերէն շատերն գառնահամ հիւթ մ'ունին, զոր բժշկութիւնն կը գործածէ դառնամաղձ հիւանդութեան դէմ, զոր օրինակ Դրգալախոտին հիւթը, Կոտեման, Բողկին, և այլն. խոհարարութեան մէջ շատ գործածական են կաղամբ, կանճրակ, Ջրկոտեմն, Շաղգամ, վայրի Բոդկ, (Զե 189), Մանանեխ, և այլն. կան նաև ուրիշ տեսակիք ևս, որոց սերմունքը հմելով ձէթ կը հանեն և կը գործածեն տեղայիք թէ խոհարարութեան մէջ և թէ վառելու. միով բանիւ կան ուրիշ տեսակը ալ՝ որոնք պարտիդաց զարգք են:

Տոհմ Մեկոնի

133. Խոտային և կիսափայտային բոյսք են, որոց տերեւք հակադիր և հերձեալ, ծաղկումն ծայրածակ, բաժակն դիւրաթափ, երկու կամ երեք փերթիւք. պասկն չորս կամ վեց թերթիւք. բազմաթիւ ստորածին առէշք ունին երկայն մանրաթեղիք. սերմնափակն ամենակարձ կամ առանց ծիլ. սերմունք շատ են, պարկուճի մը մէջ ամփոփուած, սաղմն սպիտով: Այս տոհմի տեսակն սովորաբար հիւսիային կիսագոյն դին բարեխառն գոտեաց մէջ աւելի կը բուսնին, և քանի մը տեսակը մինչեւ 2200 մէդր բարձրութեամբ Ալպեանց վրայ

կը գտնուին: Մեկոնի ամէն տեսակներն ճերմակ, դեղին և բաց կարմիր գունով հիւթ մը կը բոլանդակեն:

134. Օգտակարութիւն մեկոնի: — Գլխաւորապէս այս տոհմի բայսերն բժշկութեան մէջ օգտակար են, ինչպէս Մեկոնի՝ որ ամէնուն ծանօթ է, և իւր գեղեցիկ գունոց պատճառաւ պարտիզաց զարդ կ'ընէ: Այս տեսակէն ափիոն կը հա-



ԶԿ 490. Հողմածաղկ:



ԶԿ 491. Գինձ:

նուի, և բաց 'ի բժշկութեան մէջ գործածուելու իրրեւ մեղմիչ դեղ և օգտակար ջղացաւութեան, կը հանեն նաև տեսակ մը ձէթ, զոր աղբասաք յօժարութեամբ իրենց կերակրոց մէջ կը գործածեն: Մեկոնի հիւթէն կը հանուի դարձեալ տարբա-

190 Anémone. — 191 Coriandre.

բանական սկզբունք, որոնք բուն բժշկական յատկութիւն ունին, ինչպէս Մորիկիու և Թմբրիու: Արևելեան ժողովրդոց մէջ ոմանք կը ծամեն զԱփիոն, իսկ այլք կը ծխեն. Մեկոնի ընտիր տեսակը կը համարուին Աղքանդիրից, Պօլսոյ և Տաճկաստանի ընդհանրապէս, որ կարմիրագոյն է, իսկ Հնդկաստանի և Զմիւռնից Ափիոնն սևագոյն է. այս տոհմին կը վերաբերին Ծիծեռնախոտ և Կանթեղիսոտ, որ կոծիծից դեղ կը համարուի և հին ատեն շատ կը գործածուէր իրրեւ աշացաւութեան դեղ. Սնձիսոտ և լեռնցի Խաչլսաշ:

Տոհմ Խառածաղկի


135. Մեծաւ մասսամբ խոտային բոյսեր են, իսկ փայտեայ շատ քիչ կայ. ասոնց տերեկք փոփոխ և հերձեալ են, խարիսխն պատենով. բաժակն շատ անգամ գունաւոր է, հինգ փերթիւք. պասկն երեք կամ հինգ թերթիւք, բազմաթիւ առէջք ընդունարանի վրայ, սրսիկը մանրաթելց վրայ, երկու ձեղք ունին բեղրուն փոշոյ տեղիք տալու համար. նոյնպէս սերմինափակը ալ բազմաթիւ են, երբեմն պարզ և զատ զատ իւրաքանչիւրը, որոնք ձուարանի մը կը համապատասխանեն, և երբեմն ծլին վերին մասով կը միանան իրարու հետ. պառողը քիչ անգամ մաստ է, աւելի զանազան պատիճներէ կը բաղկանայ, միասերմն և անբայիկ ոմանց մէջ, իսկ ուրիշներու մէջ ալ բազմասերմն և ինքնարաց:

136. Օգտակարութիւն խառածաղկի. — Շատ մեծ օգուտ կը քաղէ բժշկութիւնն այս տոհմի բոյսերէն. վասն զի գրեթէ ամէն տեսակներն դառն և մինչև թունաւոր սկզբունք մ'ունին. ուստի եթէ մարդուս կայիին վրայ դնելու ըլլանք՝ կը կարմրցնեն, կ'ուռեցընեն ու մարմնոյն ապականեալ հիւթերը կը քաշեն: Այսոնց արմատներու մէջ ինչժային սկզբունք ևս կայ, և կը գործածուի իրրեւ մաքրողական և ործացուցիչ: Այս տոհմի բուսաց տեսակներն են խառածաղկի ենդաւոր, դառն, վայրի, նկուն, յամբեղ. այս վերջին երկուքս կիլիկիոյ մէջ կը գտնուին: Դարձեալ այս տոհմին կը վերաբերին Պատաղիճք, որ խարանագեղի յատկութիւն ունին. Հարսնուկք, որոց տեսակաց մէջ թունաւոր և դառն ալ կը գըտ-

նուին. Վամշաթքայի բնակիչը թռնաւոր չարմուսկաց կամ չողմածաղկանց հիւթին մէջ (Զկ. 190) կը թրջն նետերնին և այնպէս կը նետեն իրենց թշնամեաց վրայ: Խառածաղիկը նաև պարտիզաց գարդը են, ինչպէս, վարդ յապոնիկ, Արդոնիս, Պէսսիա, Ծնծախոտ, Արծուակտուց, Վրացի կոճ, և այլն. Խառածաղիկ տոհմն կը գանուի երրորդակ հողերու մէջ:

Տոհմ Հովանեկառորաց

137. Ընդհանրապէս խոտային, միամեայ կամ տեսկան բոյսեր են. տերենին պարզ, փոփոխ և հերձեալ, որոց հանգոյցը պատեալ են երկայն և լայն պատենով մը. ծաղիկ-




Զկ. 192. Տերեք Լախորի. — Feuilles de l'Ache.

նին արու և էգ, քիչ անդամ երկատնեայ, ծայրաբճակ, հովանոցածեւ, փոքր և կանաչադոյն են. բաժակը 5 փոքր ատամամբք. պասկը կը բաղկանաց 5 աղատ, թերատածեւ, ամբողջ

և դէպ ՚ի ներս ծոած թերթերէ. առէցք 5 են և թերթից հետ փօխ ընդ փօխ. սրսիկք մանրաթելից վրայ կողմնակի կերպով կը միանան. սերմնափակին կը բաղկանաց շարամերձ ձուարանէ մը, որոյ վրայէն երկու ծիլք կը բարձրանան, մէկ մէկ ձուածեւ կնքով. ձուարանն երկու բլիջ ունի, և իւրաքանչիւր բլիջը մէկ անձեւ սերմն. պոտողն անբացիկ մ'է, սաղմն լեցուն է սպիտով: Հովանեկառորաց առատ են բարեխառն և հիւսիսային ցուրտ գաւառաց մէջ, շատ քիչ կը գըտնուին հասարակածային տաք երկիրներու մէջ:

138. Օգտակարութիւն հովանեկառորաց. — Այս տոհմի բոյսը շատ կարևոր կը համարուին թէ խոհարարութեան ու



Զկ. 193. Անիսոն. — Anice.

բժշկութեան մէջ և թէ իրենց անթիւ տեսակներու համար: Ինչպէս Ազատքեղ, Գինձ, Լախուր, Անիսոն, (Զկ. 191, 192, 193). Հոռոմ սամիթ, Չաման, Խմի, Ստեպին, Գաղար, և այլն. որոնք կերակրելինաց և քայցրաւենեաց մէջ կը գործածուին: Խոկ բժշկական բյուելն են Ճօշիր, Չարհոտ, Քաղբան, Գողցնիճ, և այլն: Հովանեկառորաց քանի մը տեսակք

վեսավակար և թունաւոր սկզբունք կը բովանդակեն, որոնք ե-
թէ ըստ պատշաճի պատրաստուին և մատակարարուին, շատ
օգուտ կ'ընեն զանազան հիւանդութեանց. զոր օրինակ ջրա-
մին Մոլախինդ, մեծ Մոլախինդ (Ձև 194, 195), որք իրքև սպե-
զանիք կը գործածուին, փոքր Մոլախինդ, և այլն: Ասոնք
ընդհանրապէս գերեզմանաց մէջ՝ քարուտ, շուք և խոնաւ
տեղուանք կը բուսնին. ասոնց թէ ծաղիկը, թէ տերեւք և թէ



Ձև 194. Ջրային Մոլախինդ. — Ciguë aquatique.

կեղեք՝ եթէ շփելու ըլլանք՝ խոտային անախորժ և գարշեի
հոտ մը կ'արձակեն:

139. Տոնմ կոկոռաժաղկի. — Ջրային բոյսք են, արմատ-
նին թաղարի մէջ է, խոկ տերեւնին ու ծաղիկնին կը լողան ջրին
երեսը. 4-6 փերթիւք և քանի մը կարդ թերթիւք, որոնք
զրազմաբիջ ձուարանը կը գոցեն. տերեւներն փոփոխ, ամ-
բողջ և սրտաձև են՝ երկայն կոթունով. այս տոհմին կը վե-
րաբերին Հարսնամատն, Երիխալէք, Վիկտորիա, և այլն:

Տոնմ Խորդենեաց

140. Խորդենիք խոտային, միամեայ և բազմամեայ բոյսք
են. հերձեալ, սրտաձև և երբեմն անկոթուն տերեւք: Բա-
ժակն օ փերթիւք է, խոկ պասկան օ աղատ՝ և ոմանց մէջ՝ անհա-



Ձև 195. Հասարակ Մոլախինդ:

Ձև 196. Հոռերդեան Խորդենի:
ասսար թերթիւք. առէջք 40 են, օ մեծ և օ փոքր. սերմա-
փակն ձուարան մ'ունի օ բջիջովք, ձուարանի վրայ օ ծիլք կը
բարձրանան, իւրաքանչիւրն մէկ մէկ կնքով. ձուարանի ամէն

195 Ciguë ordinaire. — 196 Géranium de Robert.

մէկ բջիջն երկու ձոփիկ ունի: Պտուղն պատիճ մ'է Յ խորշերով, որոց իսրաքանչիւրն մէկ սերմն կը բովանդակէ, և երբ սերմն հասուննայ, առաձգութեամբ կ'անջատի և կը բարձրանայ իր ծիլովը պարուբաձե, (տես Ձւ 401, թ): Ալբմն առանց



197. Արագլակուց տիտոր:

Ձւ 198. Մեխակ:

սպիտի սաղմն ունի: Այս տոհմի աղջք են Խորդենիք, որոց տեսակը և զանազանակը անթիւ են և արուեստով կը բարձանան. ասանք գեղեցիկ զարդք են պարտիզաց իրենց գեղեցիկ ծաղկածութեամբ և հրաշալի գոյներով: Հողերդեան Խոր-

197 Péleronion triste. — 198 Giroflée.

դենի, (Ձւ 196), Եւրոպիոյ շատ տեղ կը բուժնի և խոնաւ ու քարուտ տեղուանիք կը սիրէ, բժշկութեան մէջ ստէպ կը գործածուի: Երկրորդ աղջք կը համարուին Արագլակուցք, որոց տեսակը 'ի Բարեյուտոյ Գլուխն հարիւրաւոր են. իսկ յԵվրոպա և յԱրմա ևս կը գտնուին՝ բայց քիչ, ինչպէս Արագլակուց տիտոր, (Ձւ 197), որոց ծաղիկը դեղին են և երբեմն գոյնզդրոյն. իրիկուան մօտ և զիշեր ժամանակ մեխակի անոյշ հոտ կը ախոէ. և Ճայակուոց՝ որ մնաչի անոյշ հոտ ունի:

141. Այս գիլաւոր տոհմերէն դատ կան նաև.

Տոնմ Նարենչենեաց, որոյ աղջք են Նարինչք, Կիտրոնիք, Թուրինչք, որոնք շատ տեսակ և զանազանակը ունին:

Տոնմ Պատպասի, որոց աղջքն է Ագանսանի:

Տոնմ Լակիի, որոյ փայտն թեթև և սպիտակ՝ շատ յարդի է և կը գրծածուի կահ կարասեաց համար. կեղեցն նեարդներն ևս շատ ուժով են, որով չուաններ կը շինուին և թանձր կտաներ. իսկ ծաղիկէն կը հանեն ցնդական իւղ, շաքար, խէժ և բժշկութեան մէջ կը գործածուի իրեւ քըրտնեցուցիչ. (տես Ձւ 81):

Տոնմ Լամելլայի, որոյ աղջքը կը համարուին Կամելիա և Թէյ, առաջնոյն զանազակը մինչեւ 700ի կը համեն:

Տոնմ Շահողրամի, որոյ աղջքը են Շահողրամ, (Ձւ 198), Օնան, Մինականչ կամ Բզրուկ, Ճելեկ շահողրամատերնե:

Տոնմ Մանիշակի, որոյ աղջք են Հոտաւէտ Մանիշակ, Եռագոյն Մանիշակ. ճախնային Մանիշակ, հայկական Մանիշակ, և այլն. որոնք անթիւ և սիրուն զանազանակը ունին:

Տոնմ Մանիոյի, որոյ աղջք են Մանիոլիա, Հաւկոր խոտ, և այլն:

Դաս Միարլրակաց

142. Ինչպէս երկարլթակը, այսպէս նաև միարլթակ բոյս սերն անօթասերմք են, այսինքն՝ ձուփիկը ձուարանի մէջ փակուած են: Վշնոք ևս զանազան տեսակ անօթներ ունին, որոց կազմութիւնն շատ ստորին է քան երկարլթակ բուոց անօթներու կազմութիւնն: Զցօղուն ձեւացլնող խորձերն համակերպն կազմեր չեն կազմեր, այլ ցիրուցան են ոստայնի մէջ,

ուստի և բուսոց տարլիքն չի ճանցուիր. ընդհանրապէս տերեւոց ջիղը զուգահեռական են, շատ քիչ անդամ ճիւղային կամ բերանակից : Բաժակն և պսակն զրեթէ մի և նոյն տեսք ունին, և կը բաղկանան վեց ազատ մասերէ , վրայէ վրայ երկու կարգ կազմելով: Յօղունն սովորաբար խոտային է կամ փայտային, քանի մը բուսոց մէջ կոճղարմատի տեսք ունի, և ումանց մէջ ալ կոճղիզաց. արմատը ընդհանրապէս նեարդային են, շատերն եկամուտ արմաններ ունին:

Ամբողջ միարլթակ բոյսք կը բաժնուին յերկուս մասունս, այսինքն են Սպիտակերմն և Անսպիտասերմն. Վերջինս երկու տոհմ կը բովանդակէ, և առաջինն՝ տասնումիշէ, ինչպէս յաջորդ ցուցակին մէջ կը տեսնուի:

ԱՆՊՊԻՏԱՍԵՐՄՆ	•	{	Տոհմ Շանձուոց
			Տոհմ Ջրաբուոց
Պարածաղկօք պսակաձե.	{ Շարամերձ ձուարանով	{	Տոհմ Արմանենեաց
			Տոհմ Պանդանգաց
			Տոհմ Ջըքատակաց
			Տոհմ Պրոմելեաց
			Տոհմ Հիրիկաց
			Տոհմ Կնիւնոյ
	Ազատ ձուարանով	{	Տոհմ Շուշանաց
Անպարածաղիկ կամ ոչ պսակաձե.	{	Տոհմ Կուրիկաց
			Տոհմ Սիզից
			Տոհմ Կիառեռիսի
			Տոհմ Կնիւնոյ

Տոհմ Շանձուոց

143. Մշտադալար, ցամաքային և յաճախ մակաբոյժ բոյսք են, որոց արմատքն երբեմն նեարդային և երբեմն կոճղիզաւոր են. ցողունն խոտային կամ կիսափայտային, պարզ կամ ճիւղայից. տերեւքն պարզ, ամբողջ, փոփոխ և զուգահեռացիք: Պարածաղիկն պարզ է թերթածեւ վեց բաժանմամբք. ծաղկումն երբեմն հասկաձե, երբեմն ողկուզաձե և երբեմն քիստ մ'է. ունին 5 ստորածին առէչք, այլ բնաւ երեքն ալ

մէկտեղ չեն գտնուիր, և ընդհանրապէս միջին կամ երկու կողմակի առէջներն կը մնան. որսիկք երկախինն են, որոց մէջ բեղուն փոշին կայ զանազան դիրքով ժողովուած. ունին սերմակափակ մը հանդերձ ծիրով ու կնքով մը. ձուարանն շարամերձ է, միարջիջ բազմաթիւ ձուիկօք. պտուղն շատ քիչ անդամ մոտ է, յաճախ պարկում մ'է լեցուն բարակ և անսպիտ սերմամբք:

Այս տոհմն շատ տեղ կը գտնուի և ամենաճոխ է ազգովք և տեսակօք, և յիրաւի մինչև հիմա 500 ազգք կը համրուին և 5000 տեսակօք. ցուրտ և բարեխան երկրի տեսակներն՝ մշտադալար են և սովորաբար ծաղկինին բուսոց բնոյն վրայ կը բուսնին և կ'ամին, առանց յատուկ ցողուն ունենալու. իսկ հասարակածին տակ եղած տեսակք՝ յաճախ մակաբոյժ են և երբեմն մազգող. շատ առատ են Հարաւային Ամերիկց անտառաց մէջ և Արևելեան Հնդկաստանի կողմերը: Այս տոհմի տեսակը շատ մեծ օգտակարութիւն մը շունին, եթէ Աղուեսաձուք կամ Շանձուք, Արևադէմև Ճղպտրուկ՝ ի բաց հանելու ըլլանք. միայն շատ սիրուն զարդ կ'ընեն պարտիզաց իրենց անսովոր և գեղեցիկ տեսքով, գունով ու ձևերով:

Տոհմ Ջրաբուոց

144. Ջրային կամ ճահնային բոյսք են. միասեռ կամ արուեէդ ծաղկօք. առէջքն երբեմն սահմանաւոր և երբեմն անսահմանաւոր, սերմունին անսպիտ են: Այս տոհմին կը վերաբերին Գորտուկ՝ որ 'ի թժկութեան կը գործածուի իրրենիմային և կապող. Ջրասովք, Ալոճ, որոյ կոճղարմատն չորցներով Փալմուքներն կ'ուտեն. Ջրանետ՝ որ իրրեւ շանխածուածի գեղ կը գործածէին հինք. Ջրասիսոր, Վալլիզների՝ որ երկատնեայ զարմանալի բոյս մ'է, և կ'ապրի մասնաւորապէս Գաղղիոյ ու Խոալիոյ կեղրոնական խաղաղ ջրերու մէջ: Այս բուսոց իզաբեր ծաղկին սատիկն շատ երկայն է, և կը նմանի պարուրաձե ողորեալ թերլի մը. բեղմնաւորութենին քանի մը որ առաջ պարոյն կ'ընդարձակի ու սատիկն կ'երկննայ մինչև ջրոյն երեսը. իսկ առէշարեր ծաղկին սատիկն շատ կարճ է, և ամենակի չի երկննար, իլ է փաքր ծաղկօք.

որոնք միայն առէշիք ու նուրբ թափանցիկ միզէ մը շրջապատեալ են: Բեղմնաւորութեան ժամանակ միզն կը բացուի, ու առէշաբեր ծաղկօք լի սոտիկն՝ կը կատրի վերին մասին մօտ, և այն ատեն ծաղկիք ազատ մնալով սոտիկէն՝ ջրոյն երեսին վրայ կ'ելլեն. որոնք կարծես թէ ջրոյն վրայ ցանուած սպիտակ մարդարիտը են. և ապա կը բացուին սերմնափակաց մօտ և կը բեղմնաւորին. յետ բեղմնաւորութեան իգաբեր ծաղկին սոտիկն կը գոցուի, ու պարոյն ամիսիուելով ջրոյն խորը կ'երթայ, որպէս զի սերմն կարենայ հասուննալ:

Տոհմ Արմաւենեաց

145. Սովորաբար բարձր, երկարաւուն և գեղեցիկ տեսքով ծառեր են, գլանաձև ու պարզ ջօղնով. (տես Գև 79). դագաթն կը վերջանայ մեծամեծ տերևոց փունջով. տերեւք պարզ կամ փետրաձև են, որոց խարիսխն կարծր է. ծաղկութին անթային. ծաղիկք միասեռ են կամ արուեէդ՝ փոքր կատուիկի կամ ողկուդի ձևով, շրջապատեալ կաշեաց և երբեմն փայտեաց մեծ պատաստով մը: Պարտօծաղիկն վեց բաժանմունք ունի, երկու կարգ փոխ ընդ փոխ, ձևացընելով դրաժակ և զպսակ. առէշք 6 են, քիչ անդամ 3. ձուարանն եռարվջ, իւրաքանչիւր բժիշն մէջ մէկ ձուիկ միայն կայ. պտուղն մասու է, ներքնամաշկն ոսկրային է ու կարծր, սերմն թ սպիտով:

146. Օգտակարութիւն արմաւենեաց. — Արմաւենեաց տոհմն բուսոց մէջ գեղեցկագոյններէն և օգտակարներէն մէկն է իրաւամբ, որ թէ հաց, թէ անուշահամ ու ընտիր պտուղ, թէ իւղ և թէ գինի կը մատակարարէ առատապէս տեղացոց, ինչպէս նաև շինութեանց և կահ կարասեաց համար փայտ: Այս տոհմին հայրենիք կը համարուին Ափրիկէ, Հնդկաստան, Եգիպտոս և Ամերիկայի տաք գաւառներն, յորս մինչև 50, 40 մէդր կը բարձրանան: Արմաւենի մը երբ իր կատարելութեան համնի՝ կրնայ տարուան մը մէջ 100 հազարագրամ պտուղ տալ:

Այս տոհմին ազգն է Կարգիլակ, որ շատ առատ կը զըտ-



Զւ 199. Արմաւենի վայրահակ:

Առուի Հնդկաստանի ու Խաղաղական Ավելիանոսի կզբեաց մէջ՝
ասոր պտուղն մարդու գլխու շափ է, հնեպն շատ կարծր, յու-
րում ձերմակ նուշ մը կայ. սերմն գրեթէ ամբողջ սպիտէն
կը ձևանայ, որոյ կերպնն պայծառ, ախորժելի, դովացու-
ցիչ, բուսական կաթի նման հեղուկ մը կայ. այս ծառէն թանձր
իւղ մը կը հանուի, որ թէ վառելու և թէ կերակրեղինաց
մէջ ալ կը գործածուի: Բաց ՚ի այս ազգէն՝ կայ նաև ազգն
Փուփալի և իւղային Փուփալի, որոց ցօղունն ուղիղ է և
գժուարաւ կը ճկի. Վերի ծայրն հովանոցի պէս զարդարուած
է գեղեցիկ փետրածեւ տերեւօք. փայտն օղակաւոր է, ու մէջ-
տեղը կակուլ ծուծ ունի թել թել, գոր հանելով փայտը կը
գործածեն խողովակաց և ջրանցից տեղ. պտուղն ձիթապըտ-
ղին կը նմանի, բայց չուտուիր: Վերոյիշեաներէն զատ կան
նաև Գետնարմատ, Գիներեր արմաւ, Սագուենի, Մոմարեր
և Հնդկի արմաւ, Վայրահակ Արմաւենի Մատակասկարի
(Զւ 199), և այլն:

Արմաւենեաց տոհմն նախ հանքածիսց դարու մէջ երև-
ցեր է երկրիս վրայ և մինչև հիմայ կը տեսէ. ածխարեր հո-
գերէն մինչև երրորդակ հողոց մէջ կը գտնուին Արմաւենիք 'ի
Պոհեմլա, 'ի Հունգարիա, 'ի Զուիցերի, և այլն:

Տիկին Արքայութեաց

147. Մշտակե ծառեր են յԱփրիկէ, յԱմերիկա և յԱսիա. իսկ յԵւրոպա՝ խոտային բյազ են. պարզ, փոփոխ ամերկօք, պատենով. սովորաբար կոճղպատր արմատներ ու նին, ծաղկեցն թիթեղնատերեազ են, որոնք երեք կարդ պատաժէ կը ձևանան, մէկն արտաքին՝ որ բաժակին կը համապատասխանէ, միւսն միջն՝ որ կը ձևացընէ պսակը, ու երրորդն ներքին՝ որ այլափոխած առէջք են. առէջն Յ են, որոց երկուն կը չորսան. ձուարանն եռաբջիջէ, ծիլն պարզ, պատուղն պարկճաւոր:

Այս տոհմին աղքադ են Եղէգք, որոց քանի մը տեսակիք սննդարար փեկուղ կը բուլանդակեն, Համեմ, Քրքում Հընդ-կաց կամ Դեղին կոճ, Քուշտ կամ Կոստ, ասոնք ամէնքն ալ գրգռողք են, զորս շատ կը զործածեն յԱնգղիս 'ի բժշկութեան:



24 200. Իղեմական բանան . — Banane

Յոհան Բանանենեաց և Պրումելեայց

148. Խոտային բոյսք են, շատ անդամ մեծամեծ ծառեր. սովորաբար չունին բռն ցողունը, զոր օրինակ Բանան, որ այրեցեալ գոտեաց մէջ կը մշակուի. ասոնց ժաղիկքն երկայնաձև հասկի նման են. առէշբն զագաթան վրայ, իսկ սերմափակք խարսխին մօտ: Աւրմափակն Ապակայի կամ Եղեմական Բանաննենւոյն մէջ կը փոխուի կ'ըլլայ երկայնաձև հատապուղ (Ձև 200), յորում անոյշ դեղին մսոտ մաս մը կայ. ասոր լայն տերեւովք աեղացիք զգեստնին կը չինեն, իսկ ամենաբարակ ու պինդ նետրդներով զանազան հիւտուածներ կը մանեն: Գեղեցիկ Աւրանիան կը բոլոսնդակէ ջրային զովացուցի հիւթ մը, որով ճանապարհորդք ծարաւնին կ'անցընեն: Բանաննենւոյ նոր բողոքչըն շատ ախտրմելի են ու քաղցրահամ, զորու տեղացիք անյագաբար կ'ուտեն:

Պրոմելեայց զլաւոր տեսակն է Անանաս, (տես Ձև 159), որ տաք երկիր բուսոց մէջ շատ յարգի է. ասոր տերևներն արմատ կը ծգեն. սրածայր է, երկու կողմը վշոտ, ու մէջ տեղէն դէպ 'ի վեր կ'երկըննայ ցօղուն մը: Այս ցօղունն նախ կապոյտ ժաղիկներ կու տաց՝ հասկի ձեռվ. այս հասկին կը չըրնայ, ու տեղը պտուղ մը կ'ելլէ, որ երթալավ այն ժաղկանց միջէն կը մեծնայ, և բոլոր պտուղն պիտօսակի կը նմանի: Անանափին հոտն անոյշ է. համն թթուաշ և զովացուցիչ, իսկ հիւթըն քիչ մը թթուելէն վերջը դորաւոր զինի կ'ըլլայ:

Յոհան Հիրիկաց

149. Խոտային բոյսք են, թէ 'ի ճախճախուտս և թէ 'ի ցամափային տեղիս կը բաւոնին. նիդակաձև, զժային և զուգամառաջիղ տերեւօք. արմատնին կոնդիգաւոր են, բաժակն գունաւոր և թերթաձևն է, վեց բաժանմամբք ձուարանին հետ միացած. 5 առէշք ունին ազատ, շարամերձ կամ միակից. ծիլն պարզ է, 5 կնքովք վերջացած, որոնք երկահերձ են և շատ անգամ թթուաձև. պտուղն պտրկում մ'է, եռատիփ,

բազմասերմն, ինքնարաց, և սերմունքն սպիտով: Գեղեցկաշգն Հիրիկք բարեխառն գոտեաց մէջ կը գտնուեն, զոր օրինակ Հիրիկ Գերմանիոյ, Հիրիկ Փլորենտիոյ (Ձև 201), որոց կոնդարմատք մանուշակի սիրուն հստ ունին. այս տոկմին զլիսաւոր ազգն է նաև Քըրըքում (Ձև 202), որոց քառնի մը տեսակք պարտիզաց զարդ են, և այլք իրենց ծլից մէջ անուշահոտ իւղ մը կը բովսնդակեն, որ 'ի թժկութեան և 'ի ներկարարութեան շատ կը գործածուի: Վաճառականութեան մէջ ժախտուած քրբումն, այս տնկրոյն կնիքներն են, զորս անան տաւաւուեան և երեկոյեան ժամանակ միայն կը ժողովին և չորցընելուվ մեղմ արևու մէջ պարկերու մէջ կը զնեն. այս նիւթոյն հազարաքրամ մը ձևացընելու համար միլիոնաւոր կնիքներ պէտք են, և ահա այս է քրբումի սպութեան պատճառն:

Հսու կրնանք տեկցընել նաև Ամարիլլեայց տոհմն, որոյ տեսակք են Նարգէս, Ամարիլլս ամենազեղ, աստեղաձև, թագ արքունի, և այլն. ասոնք բերուած են յԵւրոպա 'ի Ճարոնէ, 'ի Բարեյուաց Գլխայ և յԱմերիկայէ, ամէնքն ալ սիրուն ծաղկօք են և պարտիզաց գեղեցիկ զարդ կ'ընեն:

Յոհան Շուշանաց

150. Միարլթակ բուսոց գեղեցկագոյն տոհմն կրնայ համարուիլ սովորաբար խոտային բոյսք են, արմատնին նեարդացին են կամ կոնդիզաւոր և կամ կոնդարմատ. տերեւք նիշակաձև և զուգահեռամիջոք. ժաղիկքն գրեթէ միշտ արուեէդ են, բաժակն ընդհանրապէս թերթաձև է 6 զունաւոր փեր-



Ձև 201. Հիրիկ. — Iris.

թիւք, նմանապէս առէջքն 6 են և ստորածին, ձուարանն աշղատ է, եռարջիջ, մէկ ծիրով և մէկ կնքով. պտուղն պարկում մ'է բազմասերմն, ինչպէս լաւ կը տեսնուի Շուշանի մէջ (Ձև 205), որոյ տեսակըն 17էն աւելի են, մէկմէկէ գեղեցիկ ու անուշահոտ: Հալուէ կամ Սապո՛ տաք երկրի բոյս մ'է,



Ձև 202. Քրքում:



Ձև 203. Շուշան:

որոյ տեսակէն 20էն աւելի կը մշակուի պարտիզաց ու չերմանոցներու մէջ, որոց համն դառն է, և կը գործածուին 'ի բժշկութեան իբրև զօրացուցիչ և մաքրողական: Այս տոհմին կը վերաբերին Խոսոր, Սոխ, Պրաս, Ծներեկ, Մկնառխ, Շրէշ, Կակաչ, Յակինթ, Աղրաց արիւն, Վողահեղձ, Թագաւորապատկ:

202. Safran. — 203. Lis.

Հոս կրնանք աւելցրնել նաև զտոհմ Զիւնծաղկանց, որք շատ նմանութիւն ունին Շուշանաց, որոց արմատը կոճղեցաւոր են, տերևն փոփոխ, ամբողջ և անկոթուն. ծաղիկն



Ձև 204. Թագաւորապատկ:



Ձև 205. Զիւնծաղիկ:

արուեէգ, բաժակն 6 փերթիւք է թերթանման. առէջքն 6 են ընդունարանի վրայ, ձուարանն եռարջիջ է և աղատ. պտուղն պարկում մ'է. սերմն սպիտով, ինչպէս աշնանային Զիւնծաղիկ (Ձև 205):

Տամմ Նորիկաց

151. Խոսային բոյս են, փայտային ցօղնով, շատ անգամ ստորերկրեաց մասն մաստ է. տերևն նիղակաձև ու անկիւնաչիլ, խարսխին մօտ պատենով. ծաղիկը մաշվապա-

204. Fritillaire. — 205. Colchique.

տեան, միասեռ կամ մենատնեայ. առէշքն դէպ ՚ի վեր են, իսկ սերմափակք դէպ ՚ի վար. առէշքն աղատ ու այլ և այլ



Գև 206. Յորեն. — Froment.

Գև 207. Գարի. — Orie.

են, ձուարանն աղատ և եռարջիչ, պտուղն մսոտ, սերմն սպիտով, ինչպէս Նուիկ: Բարեխառն գոտեաց համար շահուած է աղատ և աղատ աղատ աղատ:

Նուին, իսկ տաք երկիրներու մէջ ամենառատ են, և ընդհանրապէս շատ մեծ զի կ'ըլլան: ՅԵւրոպա կը բուռնին խայտարջմտ Նուիկ, պատճաւոր Նուիկ, Բաշղտակ, և այլն: Նուիկաց քանի մը տեսակներու առողերկրեաց կոճղէզքն և տերեներն կ'ուտուին, զոր օրինակ անուշահոտ Բաշղտակի, անուշահոտ Եղեգան, իտալական Նուիկի, և այլն. իսկ ոմանք ալ թունաւոր են:

Տոհմ Աիզից

152. Միամեայ, խոտային և երեմն փայտային բոյաք են, որոց անքեքն փոփոխ, գծային, զուգահեռալիդք, խարըսխին մօտ պատենով. ծաղիկն փոքր են, կարմրախառն կանաչ, արուելէդ, մենատնեայ կամ բազմատնեայ. ծաղկութին հասկաձև, ողլուզաձև, քիտաձև, առէշքն 2 կամ 3, ստորածին. ձուարանն աղատ, միարջիջ. ծիլք 2 են, փետրային և երեմն թելի պէս երկայն, պտուղն հաստապտուղէ. օրինակի համար Յորեն, Մարտորեն, Բրինձ, Գարի, Հաճար, Վարսակ, Շաքարեղէզն, և այլն:

Սիկատեսակ բայպար թէ բնութեամբ թէ պտղոց առատութեամբ և թէ անթիւ տեսակաք՝ ճոխադպյն և ընտրելագոյն տուկմերէն մէկն են. ասոնք երկրիս ամէն կողմն կը դանուին, այլ տաք գաւառաց մէջ աւելի են քան թէ բարեխառն և ցորս տեղուանք: Այս տոհմի կարենորագոյն աղջն է Յորենն (Գև 206), որոյ շատ տեսակք և զանազանակք կան. ինչպէս յոյանի է՝ յորենի ալիկն ճիմն է մարդուս մնցն դեան, յորմէ կը լինուի նաև գարեծուր, իսկ թեփն կերակուր է հաւեղինաց, և կը հանուի սոսինձ: Հաճարն ալ նոյնպէս շատ օգտակար բոյս մ'է, վասն զի այն երկիրներու մէջ յորում ցորենն ամենեւին չի համեր, կամ շատ քիչ կը բուռնի, Հաճարն աղէկ կը մեծնայ և առաջ բերը կու տայ: Այսոր սերմն թէպէտ և յորենին պէս ճերմակ ու անոր շափ մննդարար չէ, սակայն սակէ ալ շատ լաւ ու համեղ հաց կը լինուի, ու երկայն ատեն թարմ կը մնայ, մանաւանդ երբ յորենին ալեր հետ մէկտեղ խառնուի: Իսկ Գարւոյ (Գև 207) ալիւրէն շինուած հացն թէպէտե սև ու պինդ կ'ըլլաց, բայց սմնդա-

բար ու առողջարար է. թէ որ Հաճարի ու Յորենի ալիւր հետը խառնուից շատ աւելի աղեկ կ'ըլլայ: Արկէ կը շնուի Գարեջուր. կը տրուի նաև կենդանեաց, որոյ յարդը ցորենի ու հաճարի յարդէն ալ աւելի մննդարար է: Վարսակն (տես Ձեւ 140) նոյնպէս շատ տեղ կը բռունի, մասնաւորապէս կենդանեաց կերակուր է. ասկէ շնուած հացն սև, ծանր, գառն ու անհամ է: Շաքարեղէզն

Արևելքան Հնդկաստանի

բոյս է (Ձեւ 208), ուսկից տարածուած է բոլոր այլեցեալ գոտեաց մէջ. ասոր զանազան տեսակիք կան, ինչպէս Եղէզն շարժուն, Բամբոյ, Հնդկաստանի Եղէզն, որ մինչև 50 մէտր կը բարձրանայ. տեղացիք անյագ են տասոր պտղոյն. իսկ ցօղունին հանգոցներովն ու կեղևով այլ և այլ կահ կարասիք կը շնեն: Ու ինչ ընդհատ քան զառաջնաս օգտակար ու յարդի է նաև Բրինձ, որ Հնդկաստանէն բերուած է յԵւրոպա, և արդ ամէն ճախճախուատ տեղուանք կը մակուի: Շատ օգտակար բոյս մ'է նաև Մսրացորեն, մասնաւանդ ալքարտաց համար:

Ասոնցմէզ զատ կանդեռուրիշ

բազմաթիւ սիլոցին բոյս և խտափ տեսակիք. զոր օրինակ Կորեակ, Զիակորեակ ու Աէզ և Որմն որոնք վնասակար խոտեր են, ձիլ, և այլն. (Ձեւ 209, 210, 211, 212):



Ձեւ 208. Շաքարեղէզն:

208 Canne à sucre.

Տոնմ կիսկուխի

153. Խոտային բոյսք են, կրնան բռունիլ թէ 'ի ճախճախուատ և թէ ցամաք երկրի վրայ, շատ անդամ մէկտեղ



Ձեւ 209. Կորեակ:

Ձեւ 210. Զիակորեակ:

ժողոված. ասոնց ցօղունն սովորաբար եռանկիւնի է, տերևն գծային և խարիսխն պատենով, արմատք կոճղիզաւոր են, ծաղիկն արուելէք, միասեռք կամ բազմասեռք, հասկաձև. առէչք ասհմանաւոր են, սովորաբար 2 կամ 3 և սոորածին են. ձուարանն ազտու է ու միարջիչ, պտուղն անբացիկ մ'է, միասերմն. այս տոհմի բոցներն ամէն տեղ կը տեսնուին թէ 'ի դաշտորայս, թէ յանտառս, թէ 'ի ճախճախուատ և թէ վազուկ ջրերու մէջ: Կիսկուխի քանի մը տեսակաց արմատներն բժշկութեան մէջ կը գործածուին, ինչպէս Պարիկեակ.

209 Mil. — 210 Panic.

կան ուրիշ տեսակք ևս որ կ'ուսուին, զոր օրինակ Գետնաւնուշ, Գետնայունապի: Այս տոհմի ազգք կը համարուին նաև Պրտուք կամ Պապիրք, որոնք հանդարու ու քիչ խորութեամբ ջրոց մէջ կ'ապրին, ցողուննին եռանկիւնի է, հաստ ու կարծր. Նեղոսի եղերքը կը բռասնէին ատենօք. որովք՝ ըստ Կասիոդորոսի, անտառ մը ձեւացած էր, բայց որդ անհետացած է այս կարեսոր բոյս Եղիպտոսի մէջ:


Տոհմ Կնիւնց

154. Խոտային, ցամաքային և ճախնային բոյք են. տերևնին պատենով, զլտնաձև, ակոսացեալ կամ տափարակ, ծաղիկն փափր, արուեէդ. խարսխին մօտ 2 կամ կ թիթեղատերեք կը բռամին. պարածաղիկն կամնաւոր է, առէչք 6 են, որոց 5ն կը չըրնան, և են ստորածին. ձուտրանն աղատ, եռարջիջ, մէկ ծիլով, 5 կնքով. պտուղն պատիճ մ'է. սերմն սպիտով, ինչպէս Կնիւն. (Ձև 245) որ կը գործածուի գլխաւորապէս ճեմարանաց մէջ փափաթ, նստարաններ և սրուակաց ժամկաներ շինելու համար:

Բ. ԿԱՐԳ. — ՄԵՐԿԱՍԵՐՄԱՑ

155. Մերկասերմն բոյք նման են անօթասերմն միորթակ և երկարթակ յայտասեռ բռւսոց. բայց այսու կը տարբերին միայն՝ որ փոխանակ ձուիկիքն գոյ ձուարանի մէջ ըլլալու՝ մերկ են, և իրենց ձուարաններն նման են գմբեթաձև փեռեկեալ մասնեկաց, այնպէս որ բեղուն փոշին այս բռւսոց մէջ ուղղակի կ'երթայ առանց հաղորդական հիւսուածէն անցնելու: Մերկասերմն բռւսոց ծաղիկն շունի ոչ բաժակ և ոչ պասկ. անօթնին շատ պարզ է, և ամեննեին նմանութիւն շունի անօթասերմն բռւսոց անօթներմն. փայտայինն նեարդք՝ որմնք ամենաքիչ անօթոց հետ մէկաւեղ զցօղուն կը ձեւացընեն, բորբովին տարբեր կազմութիւն ունին. այսինքն՝ կը տեսնուին մեծ կ'էտեր՝ շրջապատեալ կը որ փեռակի մը. այս կ'էտաղբութիւնն խորշից կողմանի երեսաց վրաց է,

որոնք այնպիսի կերպով շարուած են, որ զանազան նեարդից կէտերն՝ իրարու կը հաղորդուին. ասոնց պաշտօնն կը կարծուի թէ խէժային նիւթը ծորելու համար ըլլաց:



Ձև 211. Աեղ.

Ձև 212. Ճեղ.


Այս կարգի բռւսոց ծաղիկք միասեռ են, այսինքն՝ ոմանք միայն առէջք ունին և այլք ձուիկք. առէշարեր ծաղիկքն

211 Chident. — 212 Phléum.

կատուիկի ձևով են, իսկ իգարեր ծաղիկքն կոնածե, և այս պատճառաւ՝ այս կարգին առաջին դասն կոնածե կ'ըսուի, և երկրորդն՝ Արմաւենաստեր: Երկրաբանից նորանոր հե-



Զե 215. Կնիւն:



Զե 214. Գիշե:

տագոտութիւններէն յայտնի կ'երեւի որ յայտասեռ անօթաւոր ու մերկասերմն բայսք՝ ամենահին երկրաբանական դարուց մէջ երեցած են. հին մերկասերմն բուսոց բրածոյքն զանազան տեսակք են, ինչպէս Օղակածեւք, Աստեղատերեւք, Թիւ փածառք, և այլն:

215 Junc. — 214 Genévrier.

Դաս կոնածեից

156. Կոնածեք մեծամեծ ծառեր են, տերենին կարծր, կաշեայ, ընդհանրապէս դիմացկուն, գծային, զատ զատ կամ մէկ խուրծ եղած, հանդերձ թեփոտ պատենով. ծաղիկնին առանց բաժակի ու պատկի են, չունին ոչ ծիլ, ոչ կնիք, սովորաբար կատուիկի ձևով կամ կոնածե. առէշաբեր ծաղիկքն մէկ երկու մերկ կամ թեփոտ առէշք ունին. իգարեր ծաղիկքն շատ ձուիկներ ունին, որոց թիւն փոփոխական է, ու մի միայն թաղանթով պատեալ են. իգարեր ծաղիկն գագաթէն կ'ելլեն այլ և այլ թեփեր կամ այլակերպած տերեներ, զատ զատ կամ մէկտեղ, անթային կամ ծայրարձակ, և կը գոցուին յետ բեղմնաւորութեանց: Պտուղն կոնոն մ'է, (տես Ձև 150). սերմն սովորաբար թաղանթային թև մ'ունի, զանազան թանձր պատենով, երբեմն փայտային և երբեմն կաշեայ. շրջասերմն կամ սպիտն հաստ, մսոտ և իւղային է ու կը պատէ շատ սաղմեր կեղրոնական սաղմին չորս դին, որ սա միայն կը ծիլ, և որուն արմատն շրջասերմին հետ կպածէ. փայտն խէժային նիւթեր կը բովանդակէ, որք կը ծորին բուսոց այլ և այլ մասերէն, կամ արուեստով մասնաւոր բացուած տեղերէն: Երկրիս ամէն կողմն կը գտնուին կոնածեք, և կը բաժնուին յերեք ցեղա, Եղենախայտք, որոց տեսակք են վայրի Սոճի, Եղկին, Կուենի, և այլն: Նոճիք, որոց տեսակք են Գիհի, մշտադարար Նոճիք, և այլն: Կարմրածառք, որոց տեսակն է Վարիկեակ, և այլն:

157. Օդտակարուրիւն կոնածեից. — Այս տոհմին աղքք և տեսակք շատ բազմաթիւ են, որոց շատերն մարդուս օգտակար են, ոմանք իրենց արտադրած իշտերուն համար, այլք իրենց կարծր, ամուր, ուղիղ, բարձր և դիմացկուն փայտերուն համար: Աննորաբար տեսակք շատ քիչ են այս դասուբուսոց մէջ, հազիւ կինանք յիշել Կոնոն, Գիհի (Ձև 214), որոց պառուղքն քանի մը տեսակ ըմբկեաց համեմիշ են, և կ'ուտուին իսկ: Բնեկնիին խէժն՝ որ 'ի բժշկութեան ևս կը գործածուի, զանազան կերպով հանուելով՝ կ'ըլլաց ձիթ և

կողմինի ռետին, որ վաճառականութեան մէջ շատ լյարդի է. իսկ փայտն շինուածոց համար մի միայն է. այս բուսոց ծառերէն կը շնէն նաւերը, և կայմի պւներ. շատ յարգի են Եղենք իրենց կարծրութեան համար, ինչպէս նաև Լիբանանու Մայրք: Շատ հին են այս բոյսերն, և կը դանուին երկրաբանական երրորդակ հողոց մէջ:

Դաս Արմառենապուերաց

158. Արմառենապուերք նման կոնսձեից՝ երկատնեաց ու անպարածաղիկ բոյրք են. առէշաբեր ծաղիկքն կատուիկի պէտ են, իսկ իգաբեր ծաղիկքն անկոթուն և մերկ ծուիլներէ կը ձևանան, որոնք շատ անգամ կոնսձե են: Աղմն երկու բլթակ ունի սպիտով, ցօլունն կեդրոնական ծուծ մ'ունի, շըլապատեալ փայտային քանի մը կարգէ միայն, և կը զարդարուի փետրածե տերեաք՝ նման արմառենեաց. այս գասու բոյրք գլխաւորապէ Ամերիկոյ և Արփայ տափ երկիրներու մէջ կը գտնուին, նաև 'ի Բարեյուուոյ Գլուխն և 'ի Մատակասագար. իսկ յԵւրոպա միայն չերմանոցաց մէջ յաւաջ կու գան:

ԳՈՂԾԱԾԵՐԻ ԲՈՅՐՔ

159. Գաղտասեռ բոյրք անծաղիկ ըլլալով՝ ոչ միայն առանց բաժակի և պսակի են, այլ և ոչ առէշը ունին, ոչ սերմնափակ, ոչ ծուարան, և ոչ ճշմարիտ ծուիկ. միայն նախատարր սերմնիկ մ'ունին, յորում մանրամաղ հատիկներ կ'աճին. և այս սերմնիկք ոչ միայն բուսոց որոշեալ տեղ մը կը գտնուին, այլ ցիրուցան. երբեմն բուսոց մակերեւութին վրայ, երբեմն բուսոց մարմայն մէջ, երբեմն խմբովին և երբեմն մէկ կամ երկուք: Գաղտասեռ բոյրք պարզ կազմութիւն ունին, բայց սմանց հիւսուածոց մէջ դեռ անօթներ կան, ուստի բորբոք գաղտասեռք կը բաժնուին 'ի Կիսանօթաւոր և 'ի Խորշաւոր կարգ:

Գ. ԿԱՐԴ. — ԿԻՍԱՆՕԹԱՎՈՐ ԲՈՅՐՔ

160. Այս կարգի բոյրք ունին դեռ անօթներ, այլ ոչ և խոչսկափողք: Ասոնց տեւան շատ անգամ յայտասեռ բուսոց տերեւոց նման է. և որովհետեւ իրենց անումնն գագաթնային է, կ'ըսուի Ծայրափրիք: Այս բուսոց մաս մը ստորելի եւայ է և մաս մը արտաքին, որ բուն ցօլունը կը ձեւացընէ, որոց տերեւային բաժանմունքն՝ կ'ըսուին Աղարքրք: այս սաղարթներն թէ պաղաբերութեան գործարանները և թէ շնչառութեան բերանները ունին: Այս կարգն չունի գամերու բաժանումն, այլ կը զանազանուի յայլ և յայլ տոհմն, որոց գիմաւորք են Պտերք, Զիազիք և Հօտիսայ:


Պտերք

161. Այս տոհմի բուսոց ոմանք խոտային են և ոմանք ծառատունկ. առաջնիք բարեխառն գօսեաց մէջ կը բուսունին, իսկ երկրորդք՝ Հասարակածին տակ, մանաւանդ ծովիշերեաց տեղուանիք: Յօղուննին ուղիղ է ու գեղեցիկ երապով կը բարձրանայ գետնէն, և կը վերջանայ տերեւոց փունջով մը նման Արմառենեաց, որոց շատ կը նմանին (Ձև 215): Ասոնց զանազան տեսակներ կան յԵւրոպա, և անխափի կը բուսունին ջերմ և ցորս տեղուանք, բայց շաք տեղ աւելի կը սիրեն: Արմառունին կոնդարմատի ձեռվէ, տերեկն կամ լաւ ևս սաղարթքն երբեմն պարզ և շատ անգամ կրկնակի փետրածե են. պտղաբերութեան գործարանն են սերմնիկք:

Պտերք մեծ կարևորութիւն մը չոնին մարդուս համար, միայն հին և այժմեան գարու բուսաբերութեան բազգատութեան համար կարեւոր կրնան համարուիլ: Հազիւ մէկ երկու տեսակ կան, որոց կոնդարմատնին փեկուղ մը բալանդակելով՝ օգտակար են. իսկ բժշկական տեսակի համեմատութեամբ շատ են. ինչպէս Ջրապտեր, արու Պտեր, Շատուուի, և այլն: Կան նաև այնպիսի տեսակք՝ որոնք պարտիզաց զարդք են, և մասնաւոր իննամբով կը մշակուին Երբուգոյ բուրաստանաց մէջ: Պտերք շատ ճոխ եղած են ածխաբեր գարուց մէջ և միանգամայն բարձրահասակ ու ամէն տեղ տարածուած. արդ 200 ազգք կը համբուին և 2000 տեսակք:

Զիազիչ

162. Այս տոհմն շատ կը տարբերի ուրիշ անրթակ բոյս սերէն թէ ցօղոնին կազմոթեամբ՝ թէ ճիւղոց դիրքով և թէ պտղաբերութեան գործարանօք։ Կախ ցօղոնն զլանաձեւ փորուած է ներսէն, և իր խորչային հաստատուն մասանց վրայ՝ կը տեսնուին փոքրիկ կլոր միջոցներ, և այս միջոցնե-



Զե 215. Ծառատունկ Պատեր. — Fougères arborecentes.

րուն երկայնութեամբ՝ քանի մը օղակաւոր անօթներ կան. իսկ ցօղոնին արտաքին կողմն յօդուածոց տեղէն կը մեկնին կլոր ճիւղեր, և այս ճիւղոց ներսը թաղանթային պատեան մը կը ճիւղեր, և այս ճիւղոց ներսը թաղանթային պատեան մը կատարէ։ Ցօղոնն կը վերջանայ կոնով մը, որ բազմաթիւ թեփերէ ձևացած է բևեռի մը նման, և առանցից ուղղահայեաց է։ Խրաքանչիւր բևեռէն կը ծլի փոքրիկ պարկի ձևով խորչ մը, որ հաստնալով կը

ճեղքուի ընդ երկայն, ու դուրս կը թափին անթիւ սերմնիկք, որոնք խորչային նիւթէ կազմուած են. ասոնց խրաքանչիւր խարսիւն կը մեկնին չորս առածգական թելիր, որոց շարժմամբ սերմնիկքն կը ցանուին։ Զիազիչ երկրիս ամէն տեղ կը բուսներ, մասնաւորապէս խնաւ տեղուանք. ասոնք զրեթէ ամենեւն կարեսորութիւն մը չունին արդ, որոց հազիւ 10 տեսակ կայ։

Հօտիայ

163. Խոտային բոյաք են, իրենց տերեւոց գիրքովն ու ձևովն Մամուռներու կը նմանին. փոքր, փոփոխ և կղմնարաշար տերեւք ունին. ցօղոնին ծամածուռ է, վերնամաշկով և բերաններով ծածկուած են, ունին նաև անօթներ ալ։ Այս տոհմի բուսոց տերևներու անթին վրայ՝ երկու սեսակ գեղնորակ պարկեր կան. առաջին տեսակքն փոքր են, և կը պարունակն ամենամանր բազմաթիւ հատիկներ, իսկ երկրորդ տեսակքն աւելի մեծ են ու չորս մեծկակ հատիկներ ունին։ Բուսոցն նախնական ժամանակ՝ երկու տեսակ պարկերն ալ մի և նոյն տեւոքն և աճումն ունին։ Փոքր սերմնիկք ցանուելով՝ 4, 5 ամսէն ներքսապէս ամենաբարակ խորչային հետառածով կը լցնաին, որոց իւրաքանչիւր խորչն պարուածն նուրբ թելանման մսրմին մ'ունի. և վերջապէս սերմնիկք կը ճեղքուին, և մէկ ծայրէն դուրս կը թափին ամենափոքր խորչեր, որոնք մի մի անհատներ կը ձեացընեն։ Իսկ մեծ սերմնիկաց գագամթան վրայ՝ աւելի երկայն ժամանակէ վերջը՝ կը բուսնի խորչային կարգ մը, յորում կը ձեան իրենց նման անհատներ. (Զե 216)։

Այս բայսերն շատ բազմաթիւ էին առաջնակ Դարու մէջ, ինչպէս նաև տրիազեան հողոց մէջ, որոնք աւելի մեծդի էին։ Քան ինչ որ հիմնայ կը տեսնուին 'ի Հասարակածն։ Ասոնց մնացորդը մերկասերմն բուսոց հետ մէկտեղ՝ մեծապէս նպաստած ևն հանգածիոյ անսպառ խաւելու։

Դ. ԿԱՅՐ. — ԽՈՐՏԱՅԻՆ ԲՈՅԵՐ

164. Այս կարգի բոյսք իրաւամբ խորչային կ'ըստին,
վասն զի ամենեւելին անօթ մը չունին, և բուռոց մշջ ասորնաւ-
գոյնք են կաղմաւթեամբ։ Այս կարգն ևս շատ տոհմեր կը
բովանդակէ, որոց զիսաւորք են Լոռ, Մամուռ, Սունկ,
Քարաքոս, և այլն։

Lori

163. Այս տոհմի բուսոց մէջ ամենապարզ կազմութիւնը ունի. ջրային բուսոց են և կը մեծնան ճախճախուս տեղուանք, գետոց, լիճերու, առուակաց, ծովուց մէջ և ծովափնեայ տեղեր. չունին ոչ ցօղուն և ոչ որոշ տերև մը: Ոմանք երկայն թելերու պէս են. այլք քիչ մը լայն տարածութեամբ կամ հերձեղոստ դէպ' ի վերին մասը. խոր դէպ' ի խարիսխը նեղ բնի մը պէս է, և կը վերջնայ աեսակ մը ճիբաններով՝ որովք կը փաթթուին մարմնոց մը. կրնան ըլլալ կարմիր, դեղին և կանաչ:

Երբեմն կօռք և ջրիմուռք և որիշ ջրային բայսք այս
աստվածն կ'աճին՝ որ հասարակաց անտեսութեան կրնան վնա-
սել, ինչպէս եղած է զրեթէ 20 տարի առաջ Աւելիոյ Շուարտ-
նից քաղաքին: Սակայն ծովի աւելի մեծագոյն կերպարանաւ
կ'ընծայէ այս երկույթու: իր աղի գաշտերը կը բերեն այն կը ո-
կայաչափ մօռերը՝ որ սովորաբար փուշս և վառէք կ'ըսուին,
և ընկերանալով այնպիսի տեսարան կ'ընծայեն՝ որ կրնան
կոչուիլ ցամաքայնոց նման՝ անտառք, մայրիք, ամայութիւնը
ժօվայինք, և ինչուան արօտներ ալ կրնանք գանել հօն, վասն
զի ընդարձակ կտսիթրտներու պէս կը տարածուի ովլիանոսի
յատակը զնադերա կոչուած սեռաւոր բոյսն: Կան նաև ծո-
վային հազարներն, որք բազմութեամբ կը տարածեն իրենց
լայն և կապոյտ եղերը. տեղ տեղ ալ գեղեցիկ թաւ, կա-
նաչ, բոսրագոյն բարձերու պէս կը ծփան ճղճեալ կերամի
և բրոգամի անուանեալիքն, որիշ տեղ ալ ջոց խորէն դէպ

'ի յերեսն կը բարձրանայ թիրեղնատեալին, մալխոյ նման, վահանաձև արմատով՝ ժայռերը ճանկելով. և ձիթագոյն գիսակը հովանոցածեւ սփռելով դէպ 'ի լցու. ուրիշ կողմեր դարձեալ երկայն ծիրանի ժապավենաց նման կը ծփծփան թանձը և թնթղոն Հիրիկը. խոկ ամէնէն խորէն վեր կ'ելլէ ծածա-նուռ թուրի ձևով երկայն և լայն շաքարային թիթեղնատեալին: Ըստ տարածութեան ծովոց՝ իրենք ալ կը մեծան. և ասկին: Ըստ տարածութեան ծովոց՝ իրենք ալ կը մեծան. և յիրաւի շատ մեծ տարրելութիւն կայ փոքր ծովուց և ովկիա-



զւ 216. Հօտիսոյ։ զւ 217. Խիտ Հօտիսոյ։

նոսներու մէջ գտնուած Լուկրու մէջ՝ Օրինակի համար, 'ի Միջերկրական կ'ապրին Զրիմուռ, Գորտնուրուրգ, և այս, իսկ Ալբանդեան ովկիանսափն մէջ կը բնակին Սարկապ, Խաղաղական ովկիանսովն մէջ Տուրկիեայք, որիք արգելք եւ զան երբեմն Տիւմոն ա՛Ռեվիլ ծովապետին նաւուն, և որոց երկայնութիւնն մինչև 500 մէղրէն աւելի էր: Հետզհետէ Լուսի տեսակ բայսերն կ'աւելնան. և ահա վերջի ատեններս հիւսիսային բեկուաչուք 17 տեսակ բերին յԵւրոպա:

216 Lycopode. — 217 Lycopode dense.

Մամուռը

166. Փոքրիկ բցյուեր են, սրածայր կանաչ տերեկք, և պտղաբերութեան երկու տեսակ գործարանօք, որոց ոմանք առէշային են, և կը բաղկանան խորշային պարկերէ. ասոնք իրենց գագաթէն խէժային նիւթ մը կ'արտադրեն. իսկ այլք միաբջիջ ձուարանի նման են: Մամուռք կ'աճին գետնի վրայ, աւազի վրայ, ժայռից վրայ, ծառոց վրայ. խոնաւ տեղուանք, և նաև ջոց մէջ, ամէն տեղ կը գտնուին, բայց մասնաւորապէս հիւափային և թեեւային կողմերը. և ինչպէս որ մարզք բարեխառն կլիմայից, այսպէս Մամուռք ալ ցրտայնոց ամէնէն նշանաւոր գարդք են, և խոտեղինաց պէս ազրերց ժողովիլու պատճառ են: Ընդհանրապէս սանդամնան ըստած Մամուռք են այս բանիս յարմարագոյնք. տարուէ տարի այս տեսակ Մամուռց վարի կողմն մասամբ կը չորնայ. կը փատի և կը ձեւացընէ հողահանք մը, որ ՚ի հիւափային Գերմանիա՝ Լուա-էտ կոմ Մամույին հող կ'ըստի:

Մեր կլիմայից տակ այս տեսակ բցյուք կը սիրեն պայծառ ջրոտ տեղուանք. իսկ տղմուտ գետին ունեցող տեղեր կ'աճին թաղմամազ ըսուած Մամուռք, որ մասապատանկ եղենեաց բողոքներու կը նմանին, մթնականաչ ձողիկներով, երբեմն ալ թուխ ժանգի գունով. ծայրերնին ալ սափորաձև պտուղներ ունին ոսկեգոյն խուփերով ոսկեփայլ կոթերէ կախուած: Մամուռք զբէթէ 2000 տեսակք են, որոց զիսաւորք են Ապնդամնան Մամուռ, Ոշնաց, Ազրերց Մամուռ, Բաղրա-մազ, Գետնամամուռ, և այլն:

Սուեկը

167. Կոյնապէս ճոխ տոհմ մը կը կազմեն՝ շատ փոփոխական են թէ ձեռվ, թէ դիմացկոնութեամբ, թէ գունով, թէ համով և թէ մեծութեամբ: Առնկք շատ շուտով կ'աճին. սմանք քանի մը ժամաւան մէջ կը բունին, կը մեծնան և կը մեռնին. այլք ամբողջ եղանակ մը կը դիմանան, և կան

այնալիս Առնկք ևս որ քանի մը տարի կը դիմանան: Ընդհանրապէս խոնաւ տեղուանք կը բունին, երբեմն զատ զատ և երբեմն խմբավին, գետնի վրայ, ծառոց և արմատներու վրայ: Առնկք ոչ արմատ ունին, ոչ ցողուն և ոչ տերեւ. և կը չնչեն ծաղկանց և կենդանեաց պէս զթթուածին՝ արտաշնչելով զննածիական թթուուտ: Ասոնք աճողութեան և պլուզաբերութեան որոց գործարաններ ունին, աճողութեան գործարանն տեսակ մը մազ է, նուրբ մանրաթելիք ձեւացած, որ ստորերկրեայ մասն է. ասոր վրայ կը բուսնին պտղաբերութեան գործարանքն, որ համեմատաբար շատ աւելի մեծ են քան զաճողութեան գործարանն: Անկի տեսակք են Մորկեղ, որ կ'ուտուի (Ձև 218). իսկ թունարքն են Դառն Թնօսպի, Թնջուկ, Կոճղպատր Թնօսպի, և այլն: Թայլն ևս մնի տեսակ մ'է, որ միշտ գետնի տակ կ'ապրի. միայն արմատ ունի, իսկ տերեւ և ճիւղ ամենեւին շունի, ուստի և զրաէն ալ շիմացնիր ուր տեղ գտնուիլը: Այս բոյն ամէն տեղ կը գտնուի, բայց աւելի բարեխառն երկիրներու մէջ. Բիէ-մոնթի և Գաղղից մէջ շատ առատ են, որոնք անուշահոտ են ու մակրնին ալ համեղ է: Թայլին ձեւն սովորաբար կլոր է, գոյնն սև կամ մոխրագոյն, միջուկն կարծր է, ու սեկակ երակներով թերթ թերթ բաժնուած է: Թայլն գետնէն հանելու համար՝ տեղ տեղ վայրի խոզեր կը գործածեն, և տեղ տեղ ալ շուներ, ու բոնք հոսուառութեամբ կ'իմանան թէ ուր են, և հոն կը փորեն, ու մարդիկ ալ կը հանեն:

Քարաբոսք

168. Խորշային և մշտառև բցյուք են: Ասոնք կը բուսնին քարանց, գետնի և ծառոց վրայ, ոչ երբեք ջրոց մէջ. իրենց

218. Morille.



Ձև 218.
Մորկեղ:

աճումն և սերումն ամենաշաղագի է, բայց երկարատև ըլլա-
լով՝ մեծամեծ ընդարձակութիւն կ'առնուն: Փարաքոսք եր-
կրիս ամեն կողմն կը գտնուին, թէ 'ի հասարակածն, թէ 'ի
բնեոս և թէ լերանց ամենաբարձր գագաթանց վրայ: Ըստ
Հումկութիւն և Պառախնկողին՝ Զաւիշերիոց Եռունկիքրաւ լերան
գագաթը 4165 մէջը բարձրութեան վրայ գեռ Քարաքոսք կը



զւ 249. Խոլանտայի Քարաքոս . — Lichen d' Islande

բուսնին. Սպիտակ լեռան վրայ հ740 մէջը. Ամերիկայի Զիմ-
պորասոյ լեռան ինչուան 5878 մէջը բարձրութեան վրայ: Ա-
սոնցմէ ումանք բժշկութեան մէջ շատ կը գործածուին, ինչ-
պէս Խաղանասայի Քարտաքոս (Ձև 219), որ կործքի հիւսնդո-
թեանց օգտակար դեղ է, և մէջը առատ փեկուդ բավանդակե-
րուն պատճառաւ նաև կ'ուտուի:

ՅՈՒՆԻՎԵՐՍԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

169. Բոշարանական այլամանագրությունները են այն մասն բուսաբանութեան, որ կը խօսի ամբողջ բուսոց՝ երկրիս այլ և այլ կողմին ինչ կերպով բաշխուած ըլլայուն վրայ, և թէ ինչ փոփոխութիւններ կը կրեն այլ և այլ աղդեցութեանց պատճառ ուաւ. օրինակի համար ներմութեանէն, մթնոլորտին խառնաշ կութեանէն, լայնութեան տատիճանաց տարբերութեանէն, և այլն: Կը ցուցընէ թէ որոնք են լեռնային, գաշտային, ջրային, ծովային, ձախնային, բևեռային և տաք երկրի բայցեր. կը ցուցընէ գարձեալ թէ ինչ նորանոր բոյսեր կը գտնուին և թէ որ երկիրներն աւելի ճօխ են ու յարմար բուսաբերութեան:

171. Թիւրուսոց թիւը՝ լիննէս յամին 1755, կը հասցընէլ 6000ի. թերսոն յամին 1807, կը համբէր 26000. Ստենդէլ յամին 1824, կը հաշուէր 50000, և յամին 1844, մինչև ց95000, որոց 80000 ըլթակաւոր բոյպք էին, և 15000 անրթակաւորք: Բլթակաւորաց մէջ 65000 երկարթակար էին, և 15000 միարթակք. իսկ հիմա կը կարծուի թէ 120000 ըլլան. և 15000 միարթակք. Պատմակաւորք կը կարծուի թէ 4-500000ի:

Ցայտասեռ, և գաղտասեռ բուսոց տեսակն կը փոխուին ըստ լայնութեան տատիճանաց. որչափ դէպ 'ի հիւսիս յառաջ մնաք՝ այնշափ աւելի կը շատնան անրթակ բոյպք. իսկ ըլթակաւորք կ'ամին դէպ 'ի հասարակածն: Բարեխառն կամ ցուրտ գոտեաց տակ եղած բոյսերն փոքր են և հազիւ հազ գետնէն վեր կը բարձրանան: Խոկ ջերմ գոտեաց մէջ Ծառատունկ Պատերք, Առունելք, և Մամուռք ևս մեծապէս կը բարձրանան և մեծ ընդարձակութիւն կը գրաւեն:

172. Ջերմուրեան ազդեցուրիւն բուսոց վրայ. — Խրամ, քանչիւր տեսակ բոյս՝ առանձին ջերմութիւն կը պահանջէ, օրինակի համար. Կուենիք, Յարասիք, և այլն, կը դիմանան -40° ցրտութեան, մինչեւ Արմաւենիք, Արտևսածուք, ծառատունկ Պատերք՝ 40° ջերմութեամբ կը չորնան, Ալպեան և հիւսիսային բոյպք 40° ջերմութեամբ կը թառմին. իսկ Ար վրիւէի տաք աւազներուն մէջ անող բոյսերն մինչև 60° և 72° վրիւէի տաք աւազներուն մէջ անող բոյսերն մինչև 80° կը ջերմութեան կը դիմանան: Կամ բոյպք որ 0 աստիճանին կը ջերմութեան ինչպէս Ապառզան, մինչեւ Նարգիլակենի և այրուսին, ինչպէս Ապառզան, մինչեւ Նարգիլակենի և այրեցեալ գոտւոյն բոյոք՝ հազիւ 15° ի կամ 20° ի կը սկսին ծլիւ:

173. Խոնաւորեան ազդեցուրիւն բուսոց վրայ. — Վատ մեծ ազդեցութիւն ունի խոնաւութիւնն բուսոց վրայ, վատն զի առանց հողոյն և մթնողրատին խոնաւութեան բուսական նորածին հիւսուածքն խամբելով, բոյուր կը գանդաղեցընէ իր սննդառական գործողութիւնը, կը թօնի ու կը մեռնի: Տեղ տեղ անձրեներն, ցողն, ստորերկրեայ ջրոց մզումն և մէզն բաւական կ'ըլլան պահէլու բուսոց կարմոր դալարութիւնը. բայց շատ անգամ այս բնական պայմաններն անբաւական ըլլալով՝ անտնօրինելի հարկ կը համարուի ոռութումն գործածել, որ է արտեսական հնարք՝ հողուն խոնա-

ւութիւն տալ պտղաբեր ընելու համար: Եւ կրացընէ քիչ մշակութիւն կրնայ յաջողիլ առանց այս հնարից օգնութեան, և այն երկիրներն որ կ'ուոգուին միւս ամէն պայմանքն հաւասար ըլլալով, համեմատութեամբ չուոգեալ երկրի մը՝ կու տան կրկին, եռապատիկ և քառապատիկ անգամ՝ աւելի բերք:

Ուստի այս երկիրներն որ յաճախ խոնաւութիւն կ'ընդունին անձրեներէն կամ ոռոգմամբ, մասնաւորապէս յարմար կ'ըլլան մարդագետնի և լայնատերև բուսոց մշակութեան, որոնք բոլոր օրն արտաշնչելով մեծ քանակութեամբ ջուր, պէտք կ'ունենան համեմատաբար աւելի թարմ հողյ:


174. Լուսոց ազդեցուրիւն բուսոց վրայ. — Լոյսն ալ ոչ ինչ նուազ քան զիստաւութիւն և զերմութիւն՝ աղլեցութիւն ունի բուսաբերութեան վրայ, և չերմութեան արդեանց մաս մը՝ լուսոց ազդեցութենէն յառաջ կու գայ: Ամենայն ոք գիտէ՝ որ մթութեան մէջ ապրող բոյսերն սպիտակ կ'ըլլան, վատոյժ, տկար, տժգոյն, նման այն կինդանեաց՝ որնկը խսաւրի մէջ կը բնակին: Ուրեմն լցոն անտնօրինելի տարր մի է բուսոց կենաց, հաւասար այն տարբերութիւնն ու անտառաց մէջ կը բուսունին ու կ'ապրին, գրեթէ ուղղաձիգ կ'ամբառնան իրենց ճիւղերը, իսկ անոնք որ ապատուն մէջ կ'ապրին՝ հորիշնանան կերպով կը տարածեն իրենց ճիւղերը, որպէս զի աւելի լցոն վայելեն: ինչպէս նաև ջերմատան կամ սենեկաց մէջ մեծցած բոյպք՝ միշտ դէպ 'ի այն կողմը կը դիմեն՝ ուստի կարող են լցոն ընդունել:

ԲՈՒՍԱՐԵՐՈՒԹԻՒՆ ԵՒՐՈԳԻՌՑ

175. Ամբողջ Եւրոպիոյ բուսաբերութիւնը կրնանք երեք մեծ մասնեց բաժնել, այսինքն են Հիւսիսային, Միջին և Հարաւային բուսաբերութիւն:

Խուսաբերուրիւն Հիւսիսային Եւրոպիոյ. — Հիւսիսային գաւառաց բուսաբերութիւն կազմող երկիրներն են Լարոնիա, իսկանտա, Շուէտ, Նորուեկիա և վերին Ուստաստան, որոց իսլանտա, Հուէտ, Նորուեկիա և վերին Ուստաստան, որոց բուսաբերութիւնն այնշափ հօփ չէ տեսակօք. վայտային տես-

սակ բցսերն՝ հազիւ հարիւրերորդ մասն են հօն գտնուած բոլոր բուսաց. իսկ գալուսասեռք շատ աւելի են համեմատութեամբ: Վերյիշեալ տեղեաց մեծամեծ ծառերն են կոնաբերք, կայծ-վշայինք, կազնիք, բրդաձեւ կաղամախը (Ձև 220) որոնք լայնութեան 60' բրդորդ աստիճանին կանդ կ'առնուն. Հայքի՝ 61 աստիճանին, Համարք, կակղի՝ 65 աստիճանին. Կոնաբերք՝ 67 աստիճանին. Գարի, Վարսակ, և այլն, կրնան իշակուիլ մինչև 70' ին: Սբիցաբերք՝ Եւրոպից ամէնէն աւելի



Ձև 220. Բրդաձեւ կաղամախ. — Peuplier piramidal.

հիւսիսային կղզին, որ կը գտնուի լայնութեան 70° , $50'$ և 81° աստիճանաց մէջ, 95 տեսակ յայտասեռ բոյսք կը բոլվանդակէ, ինչպէս Սիկային, Խաչանք, Խառածաղիկք, Խաղիբաններ, Քարկոտրուկ, Գառնադմակ (Ձև 221), և այլն:

176. Բուսաբերուրիւն Միջին Եւրոպից. — Եւրոպից մինչին բուսաբանական երկրներն են Մեծին Ռուսաստան, Գերմանիա, Հոլանտա, Պելճիա, Զուլցերի, Թիֆրու, Ծրիսանիա, մանիա, Հուանտա, Պելճիա, Զուլցերի, Թիֆրու, Ծրիսանիա, Վերին Իտալիա և Գալլիայ մեծագոյն մասն: Այս մասին Վերին Իտալիա և Գալլիայ մեծագոյն մասն: Այս մասին բուսաբերութիւնն, զոր շատ դժուարին է մի առ մի յիշատա-

կել, բոլորովին կը տալրերի նախընթաց գաւառաց բուսաբերութենեն: Եւ յիրափ, եթէ դիտենք վերյիշեալ աշխարհաց անտառները, կը տեսնենք որ ձևացեր են մեծաւ մասամբ զանազան կաղնեօք, թէպէտ և խառն ալ կը գտնուին Մաշկամիրզք, Հայքիք, կաղամախք, կնձնիք, Նշդարիք, Լաստենիք, և այլն. այս ծառոց տերևներն թօթափուելով ձմեռ ատեն՝ եղական տեսօք մը կու տան այն անտառաց: Իսկ եթէ արտօրայքը



Ձև 221. Գառնադմակ. — Joubarbe.

դիտելու ըլլանք՝ կը տեսնենք որ քիչ շատ ամէն աեղ արմտեաց տոհմին ամէն տեսակեն կրնան մշակուիլ, ինչպէս նաև Վարդաձեից տոհմն և զանազան պտղատու ծառեր. վերի կողմերուն ցրտոցն Որթ և Թթենիք չեն դիմանար, ինչպէս նաև Եղիպտացորեն, և այլն: Զարդի և բժշկական խոտք և բոյսք անթիւ

են, զորս և արուեստով բազմացնելով՝ անթիւ զանազանակներ յառաջ կու գան, ինչպէս Վարդաձեկից, Խառածալկանց, Շահողբամից, Հիրիկաց և Շրթնաձեկից. Կան ևս Լիբանովտան և Գետանաբաղեղ (ԶԼ 222, 225), և այլն:



24 222. Լիբանովտան . — Romarin.

177. βιοτικαρκεπτρχիւն Հարաւայիկ Երբոպիոյ. — Հարաւային Եւրոպիոյ բուսաբանական երկիրներն են Յունաստան, Մըլին և Հարաւային Խոսլիա, Սպանիա, Բորդուգալ, Եւրոպական Տաճկաստան, որոց մէջ շատ առաստ են Շուշանացեղք, Նրթնաւորք. Խնչպէս Ակուտեղի (Ձև 224), Վարդաձեզ, Խառածաղիկեզ. Կը գտնուուն նաև Լատան, կարմրազեր

Կաղնիք, Սղոցիք, Կաղամակիք, Ուռենիք, և ոյլն: Այս մասն շատ անգամ ախորդելի և գեղեցիկ տեսք մը կ'ընծայէ ի հրեն հոտաւէտ Մրտենեաց պուրակօք, Մատթղենեօք, և Թափ-




ԶԼ 225. ԳԵտնաբաղեղ:

ԶԼ 224. ԱԿՌԱՋԵՂԻ :

225 Lierre terrestre. — 224 Spondyle.

Բանուով Ա շահմաստ արդաւութ աղջորի աղմաս Ա
մայ պատմակ ու բուսաբերութիւն ԱՍԻՈՅ

178. Ասիոյ ճոխ և ընդարձակ բուսաբերութիւնն որ շատ
գերազանց է քան զԵւրոպիոյ բուսաբերութիւնն, երեք մա-
սանց կը բաժնենք. Հիւսիսային, Կեդրոնական և Հարաւային:




Ձև 225. Ջրային Շահմարակ:

Բուսաբերութիւն Հիւսիսային Ասիոյ. — Հիւսիսային բու-
սաբերութիւնը կազմող երկիրն է Միակերիս, որց բուսաբե-
րութիւնն մէկ կողմանէ Եւրոպիոյ հիւսիսային բուսաբերու-

225 Giroflée aquatique. — 226 Gratiole.

թեան նմանութիւն ունի, և միւս կողմանէ Միջինին հետ.
բայց զլիստրապէս իրեն յատուկ տոհմք են Ընդեղէնք,
Թաւրնչակ արեելեան (Ձև 227), Խաչաձեկք, Խառածաղիկք և
Հովանոցաձեկք. իսկ տեսակաց մէջ Խազիրան, Գնդածաղիկ,



227. Թաւրնչակ արեելեան:

228. Ասպիրակ:

Գար, Ասպիրակ (Ձև 228): Ախպերիոյ անտառք ձեացած են
Միակերիոյ Կուենեօք, Տաւրոսեան կուենեօք, Միակերիոյ Շո-
ճեօք, և սպիտակ ու հոտաւէտ կաղամախիք. կը գտնուին նաև
խառն ուրիշ բուսոց հետ Մին, Լաստենիք, Ռուենիք և Մըր-
տավարդք: Քամչատքայի տափաստանի ծաղկացուցակն նման
է միջին Եւրոպիոյ արօտներու ծաղկացուցակնեն. կան կա-
կաչք, Հիրիկք, Օշինդք, և այլն: Հումկողլէ՝ Ուրալ լերանց ան-
տառները մեծ ծաղկագարդ և ծառագարդ պարտիզի մը կը
նմանցընէ, յորում կը գտնուին շատ տեսակ խոտեր, թուփեր,

227 Amaranthe orientale. — 228 Spirée.

ծառեր, ծաղիկներ և գեղեցիկ կանաչութիւն մը. և յիրափ
այն բարձրաբերձ լերանց զանազան կողմերը կը դտնուին վայ-
րի Վարդենիք, Սալտենիք, Գիհիք, Երեկորնեայք, կապուտ
Մըսուանտակ, Մշանաղիք (Ձև 229), ֆաւաւոր Կալացնծուկք,
ջրային Ալուոյտ, փոքր Շամպղոտակ (Ձև 250) և այլն:

179. Բուսաբերութիւնն կեղրոնական

Ասիոյ . — Ի Սիկերից եթէ փօխա-
դրուինք՝ ի Զինաստան և՝ ի Ճարտոն, պի-
տի Հիանանք անտարակոյ» տեսնելով
մեծահասակ և փառաւոր տերեւազարդ
և ծաղկալից Մանիոլիսյք, որոց մշա-
կութիւնն արդ յԵւրոպա ևս տարա-
ծուած է. Կամելլեակիք՝ որոց Եւրոպից
մէջ տեղական եղած են, և յառաջ կու
գան ծալվացներու մէջ, և որոց տեսակը
և զանազանակիք 700ի կը հասնին. Թէյի
ժառն (Ձև 251), որոյ տերեւներէն 10
միլիոն հազարազդրամ կը բերուի յԵւրո-
պա տարուէ տարի : Բաց ՚ի ասոնցմէ,
զարդք են և ճոխութիւնք այն աշխար-
հաց համար՝ գեղեցիկ Արմաւենիք, հո-
տաւէտ Զիթենիք՝ որոց տերեւները Թէյի
հետ կը խառնեն հոտուէտ ընելու հա-
մար, մշտագալար Փանտափուչք, Սար-
գենիք, Տղկիք, Լաստենիք: Ասոնց հետ
մէկաեղ կը մշակուին նաև Բրինձ, Յո-
ւա և այլ առաջարկ չափառ, եթիւպ-



ԶԼ 229.

բեն, Գարի, Վարսակ, Համար, Եղիշ-
տացորեն, Կաղամբի զանազան տե-
սակը, Գետնախնձոր, Դեղնենիք, Ճարտնի Զեւարենիք, Նա-
րինչք, Բողկ, Դգում, Վարունդ, Սեխ, Անիսոն, Ոլոսն.
Լուրիս, Նուռն, Մաշկամիրգ, Բակլա, Կնճիթ Կամ Սօսանի,
Լուրիս, Կանեփ, պապիրաբեր Թթենի, Բամբակենի, Նենի, վայրի
Կեռասենի (Ձև 232), Ծներեկ, Թղենի և Որթ. ահա այս-
կեռասենի (Ձև 232), Ծներեկ, Թղենի և Որթ. ահա այս-
շափ ճոխ են Ամիս Կեղունական երկիրներն, յորոց յիշածներ-

Նէս դուրս՝ հազարաւոր ուրիշ խոտի տեսակ բոյս, տունկեր, զանազան թուփեր և մեծամեծ ծառեր կան:

180. Բոշաբերուրիշեն Հարաւային Ավելի. — Ի Զինաստանէն և 'ի Ճարտանէն անցնելով 'ի Հնդկաստան՝ կը տեսնենք որ վերցիւեալ բայսերն կը սկսին նուազիլ և կամաց կամաց տեղիվ կու տան տաք երկրի բուսոց, որոց գօղմնն, ոստքն, ծաղիկեքն ու տերեկն մեծ, լայն և փառաւոր են. հոս կը սկսին շատնար մակարոյծ և պատաղիչ բայսք: Հնդկաստան իրաւամբ կրնայ համարուիլ հայրենիք Համեմի տեսակ բուսոց. և ահա հոս կը



ԶԼ. 250. Փոքր Շամպղիտակ :

տեսնենք ճոխութեամբ և գեղեցիկ կերպով ծաղկած Մի-
խակը, Պղպեղի ծառ (Զե 255), Պիստակենք, Մշշկնկոյզք,
Փուփալք, Գմբաստք, Բանանենք, Խանուէի ծառ, զանա-
զան տեսակ նարինչք, Լիմններ, Բամբոյ, Լեզակի տունկ,
Նշենի, Արմուեաց շատ տեսակք, և այլն։ Շատ ճոխ է նաև
կարծր և շմուածոց փայտի տեսակք, ունի գարձեալ կակ-
ժիրակենի, Ակակիա, Պատկառուկ, Կարտենիա, Ոպնիազ-
որոյ փայտն հին տեսնէ ՚ի վեր յարգի է, և այլ անթիւ տե-
սակք թանձր բուսոց։

250 Petite Consoude.

ԲՈՒԾԱԲԵՐՈՒԹԻՒՆ ԱՓՇԻԿԻ


181. Ափրիկէի ամբողջ երկիրներն ևս հանդերձ իր առաջատաներով և ուսականերով երեք մեծամեծ մասանց կը



Զե 231. Թէյի ծառ . — Arbre du Thé.

բաժնենք, այսինքն են Հիւսիսային, Այրեցեալ և Հարաւային երկիրներ :

